

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՏԱՐԵԳԻՐՔ

6

ԵՐԵՎԱՆ 2000 YEREVAN

Տպագրվում է Հայկական գրադարանային միության վարչության
որոշման համաձայն
Հրատարակվում է տարեկան մեկ անգամ
Տպագրությունը իրականացվել է Ամերիկյան գրադարանային միության
ֆինանսական աջակցությամբ

Տպագրության են պատրաստել՝
ՆԵՐՍԵՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ
ՈԱՖԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԸ

©2001, Հայկական գրադարանային միություն

ՆԵՐՍԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԳՄ նախագահ

ՄԻՈՒԹՅՈՒՆԸ 2002 ԹՎԱԿԱՆԻՆ

Սիրելի գրադարանավարներ,

Հայկական գրադարանային միությունը բոլորեց իր հիմնադրման յոթնամյակը: Միությունը ներկայանում է իբրև Հայաստանի գրադարանային աշխատողների մասնագիտական կազմակերպություն, որին անդամագրվել են Երևանի և Երկրի վարչական բոլոր տարածքների գրադարանների ներկայացուցիչները: Միությունը գործընկերային հարաբերություններ ունի և ճանաչված է ոչ միայն Հարավային Կովկասի տարածաշրջանի հարևան երկրներում, այլև կապեր ունի ԱՊՀ մի շարք երկրների, Լիտվայի, ԱՄՆ-ի, Կանադայի, Դանիայի, Նորվեգիայի, Հոլանդիայի, Ավստրալիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի և այլ երկրների գրադարանային միությունների և ընկերակցությունների հետ: 1996թ. Միությունը հանդիսանում է Գրադարանային միությունների և հաստատությունների միջազգային դաշնության (ԻՖԼԱ) ազգային անդամը: Միությունը անդամագրված է ԻՖԼԱ չորս մշտական հանձնաժողովներին, հայ գրադարանավարներից 3-ը ընդգրկված են նրա ընտրովի մարմիններում:

2002թ. առանձնահատուկ և պատասխանատու տարի է մեզ համար: Այս տարվա ապրիլի 14-20-ը Հայաստանում առաջին անգամ, մեր նախածեռնությամբ, կազմակերպվում է Ազգային գրադարանային շաբաթ (ԱԳՇ): Շաբաթվա նպատակն է գրադարանների, գրքի և ընթերցանության քարոզչությունը, գրադարանների իբրև հասարակական տեղեկատվության կենտրոնների դերի կարևորումը, գրադարանների բարեկամների ակումբների հիմնադրումը և այլն: «Տեղեկագրքի» ներկա համարում դուք կարող եք ծանոթանալ ԱԳՇ ծրագրին և բազմաթիվ այլ նյութերի:

Սեպտեմբերի 27-30-ը Երևանում տեղի կունենա Հարավ Կովկասյան գրադարանային գիտաժողով, որին կմասնակցեն Վրաստանի, Ադրբեջանի և ԱՄՆ գրադարանային մասնագետները: Գիտաժողովն անցկացվում է Ամերիկյան գրադարանային միության հետ սերտ համագործակցությամբ: Ծրագրվում է, որ ի տարբերություն թբիլիսյան սեմինարի Երևանյան գիտաժողովի աշխատանքներին, գրադարանային աշխատողներից բացի, կմասնակցեն նաև լրագրողներ և գործարար աշխարհի ներկայացուցիչներ: 10 ներկայացուցիչ կմասնակցի հարևան հանրապետություններից: Վեցը գրադարանային աշխատող կմասնակցի ամերիկյան կողմից:

Տարվա ընթացքում Հայաստանի Ազգային գրադարանում կբացվի Հայկական գրադարանային միության գրադարանավարների վերապատրաստման և համակարգչային ուսուցման նորագույն սարքավորումներով հանդերձավորված կենտրոնը, որտեղ պարբերաբար կկազմակերպվեն տարբեր բնույթի և ուղղվածության դասընթացներ, սեմինար և գործնական պարապմունքներ: Հնարավոր է նաև տարածաշրջանային ծրագրերի իրականացումը որոնցում կներգրավվեն Վրաստանի և Ադրբեջանի գրադարանավարները: Այս ծրագրի հովանավորն է «Եվրասիա» հիմնադրամը:

Հավանաբար ձեզանից շատերը առիթ ունեցել են այցելելու մեր ինտերնետային սեփական էջը (Տես՝ www.ala.nla.am): Միության վերջերս նորացված և խմբագրված ինտերնետային էջը ծառայում է մեր գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածմանը: Գրադարանային հարցերի հրապարակային քննարկման համար կարող եք այցելել Միության ֆորումի էջը (Տես՝ iatp.r.am/libforum): Այստեղ վերջին մի քանի ամիսներին բավական աշխուժությամբ քննարկվում էր ԱԳՇ անցկացման ծրագիրը: Շուտով հնարավոր կլինի ֆորումը կազմակերպել նաև հայերեն: Եթե ցանկանում եք, կարող եք Ձեր էլեկտրոնային փոստի հասցեն գրանցել մեր փոստային ծառայությունում և ստանալ լուրեր ու տեղեկություններ:

Միության գործունեության վերաբերյալ Ձեզ հետաքրքրող բոլոր հարցերով կարող եք դիմել Երևան 9, Տերյան 72, Հայկական գրադարանային միություն, ինչպես նաև էլեկտրոնային փոստի հասցեով. gradaran@hotmail.com

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՇԱԲԱԹ

ՍԱԹԵՆԻԿ ԱՎԱԳՅԱՆ

Հայաստանի Ամերիկյան համալսարանի
«Փափագյան» գրադարանի տնօրեն

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՇԱԲԱԹԸ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Միացյալ Նահանգներում առաջին անգամ “Ազգային գրադարանային շաբաթը” պետականորեն նշվել է 1958-ին: ԱԳԸ-ն տեղի է ունենում յուրաքանչյուր ապրիլ ամսին, որին աջակցում են Ամերիկյան գրադարանային միությունն (ԱԳՄ) և տվյալ տարածքի գրադարանները: Այն համաամերիկյան գրադարանային տոնակատարություն է, որի ընթացքում բնակչությանը ներկայացվում է ամերիկյան գրադարանների և գրադարանավարների ձեռքբերումները, բազմազան միջոցառումներով խրախուսվում է ընթերցանությունը, գրադարանների հասարակական աջակցությունը և այլն:

Ամերիկյան գրադարանային միության լրատվական գրասենյակը կազմակերպում է շաբաթվա ընթացքում ծրագրված միջոցառումների քարոզչությունը, գրադարանային-տեղեկատվական ծառայությունների մասին երկրի զանգվածային լրատվական միջոցներում պարբերաբար հոդվածներ և հայտարարություններ տեղադրելում:

Գրադարանավարները, գրադարանների բարեկամների/ընկերների ակումբները և հովանավորները համատեղ ուժերով միանում են աջակցելու տեղական գրադարանների զարգացմանը: Այդ քարոզչության ծավալման համար հայտարարություններ, ազդագրեր, գրադարանային պլակատներ և այլ օժանդակ նյութեր ձեռք բերելու համար մեծ ընտրություն է առաջարկում ԱԳՄ-ը, որը երկրում գրադարանային հրատարակությունների խոշորագույն հրատարակիչներից է:

ԱԳՄ-ն Հասարակական հանձնախումբը և Ազգային գրադարանային շաբաթվա ենթահանձնախումբը խորհրդատվական օգնություն են ցուցաբերում Ազգային գրադարանային շաբաթի պլանավորման և դրան վերաբերվող կազմակերպչական հարցերով: Հանձնախմբերը ունենում են հանդիպումներ Ամերիկյան գրադարանային միության տարեկան համագումարի շրջանակներում:

Բոլոր տեսակի գրադարանները՝ դպրոցական, հանրային, ակադեմիական եվ մասնավոր, մասնակցում են տարբեր իրադարձությունների, սկսած պատմվածքների հեղինակային ընթերցումներից մինչև խմբակային թտտերական ներկայացումներ, ներգրավելով երեխաներին և չափահասներին: Միջոցառումները լուսաբանվում են տեղական մամուլում: Միացյալ Նահանգների Պետական գրադարանը ունի նորությունների տախտակ որտեղ ասվում է. “Տոնիր ազգային գրադարանային շաբաթը քո գրադարանում”:

Ակադեմիական գրադարաններն ուսանողներին և դասախոսական կազմին ներկառացում են իրենց ինտերնետային էջերը: Նրանցում լուսաբանվում են օրվա իրադարձությունները և տվյալ գրադարանի գործունեությունը: Գրադարանավարները իրենց գրադարանի սեփական էջերում կարճ ժամանակով տեղադրում են պարզ հարց ու պատասխաններ՝ ընթերցողներին հնարավորություն տալով ծանոթանալու իրենց գործունեությանը: Այս հարց ու պատասխանները կրում են մրցության բնույթ և երեք հաղթողները ստանում են մրցանակներ:

Շաբաթվա ընթացքում կազմակերպվում են հասարակական հավաքույթներ՝ ներկայացնելու գրադարանի նոր ծառայությունները:

Երիտասարդությունը և ուսանողական խմբերը նույնպես ներգրավվում են մասնակցելու այդ տոնին: Նրանք կարող են կազմակերպել “Բարձրաձայն ընթերցանության միջոցառում”, որի ընթացքում մարդիկ կարող են իրենց սիրած բանաստեղծությունները, մեջբերումներ անում իրենց սիրած գրքերից:

Առաջարկվում են համակարգիչներից/ինտերնետից օգտվելու դասընթացներ, օգտվողներին սովորեցնելով, թե ինչպես միանալ ինտերնետին ու այնտեղ կատարել որոնումներ, ինչպես նաև ստեղծել սեփական ինտերնետային էջեր:

Հրավիրում են դասախոսներ կամ տեղացի գրողներ շաբաթվա ընթացքում դասախոսություններ կարդալու կամ միջոցառմանը բացման խոսք ասելու:

Մանկական գրադարաններում երեխաների համար կազմակերպվում են հատուկ միջոցառումներ:

Միացյալ Նահանգների նախագահը հատուկ այդ առիթով հրապարակում է իր տարեկան հայտարարությունը: Վերջին ԱԳՇ առիթով նախագահ Ջորջ բուշը հետևյալ հայտարարությունն է արել. «Գրադարաններն են, որ խրախուսում են գիտության տարածումը և արժեքավոր տեղեկատվական պաշարներով միավորում տարբեր տարիքի մարդկանց: Այս շարժումն և ժամանակակից հաստատությունները գրադարանավարների հետ միասին մեծապես նպաստում են մեր կյանքի առաջընթացին»:

Հաստատված է Հայկական գրադարանային միության 2002թ. փետրվարի 27-ի նիստում

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԱՐԳԸ

Ամփոփման նպատակն է կատարված աշխատանքի վերլուծությունը և գնահատականը, հաջորդ ԱԳՇ կազմակերպելու համար հանձնարարականների մշակումը և մասնակից լավագույն գրադարանների տասնյակի որոշումը:

«Ազգային գրադարանային շաբաթվա» (ԱԳՇ) արդյունքների ամփոփումը կատարվում է շաբաթվա ավարտից հետո մեկամսյա ժամկետում:

ԱԳՇ ծրագրի մասնակից են համարվում այն գրադարանները, որոնք նախքան շաբաթի սկսվելը՝ մինչև 2002թ. ապրիլի 13-ը ներառյալ, ՀԳՄ վարչությանը գրավոր /նամակով կամ էլեկտրոնային փոստով/ տեղեկացնում են ԱԳՇ-ին իրենց մասնակցության մասին և գրադարանի տնօրենի (վարիչի) ստորագրությամբ ներկայացնում պլանավորած միջոցառումների ծրագիրը:

ԱԳՇ ծրագրի մասնակից գրադարանները մինչև 2002թ. մայիսի 6-ը միության վարչությանը գրավոր ներկայացնում են իրենց կատարած աշխատանքի մանրամասն հաշվետվությունը:

ԱԳՇ շրջանակում իրենց կատարած աշխատանքի հաշվետվության մեջ գրադարանները պարտավոր են ներկայացնել հետևյալ տեղեկությունները.

ա/ ԱԳՇ ընթացքում իրենց գրադարան այցելած ընթերցողների թիվը, հաճախումը և տացքը

բ/ Կազմակերպած միջոցառումները, դրանց մասնակիցների քանակը

գ/ Կազմակերպած ցուցահանդեսները, ցուցադրված գրականության քանակը

դ/ Եթե ծրագրել են ապրիլի 18-ի պատգամավորական հանդիպումը, արդյոք այն տեղի է ունեցել, եթե ոչ, ապա նշել պատճառը

ե/ Ինչպես է գրադարանը ներկայացրել «Ընտանեկան ընթերցման երեկոյի» ծրագիրը

զ/ ԶԼՄ կենտրոնական և տեղական միջոցները արդյոք արձագանքել են իրենց միջոցառումներին, եթե այո, ապա ներկայացնել հոդվածի պատճենը և ռադիո կամ հեռուստահաղորդման օրը և եթերաժամը:

Հաշվետվության հետ կարելի է ներկայացնել նաև գրադարանի հիմնադրի, տեղական իշխանության մարմինների ներկայացուցիչների և ընթերցողների կողմից ԱԳՇ-ին գրադարանի մասնակցությունը բնութագրող նամակներ և նյութեր:

ՀԳՄ վարչությունը ԱԳՇ մասնակից լավագույն գրադարանների տասնյակը ընտրում է երկշաբաթյա ժամկետում և արդյունքները հրապարակում հանրապետական մամուլում:

Ընտրված 10 լավագույն գրադարանը ՀԳՄ վարչության կողմից ստանում են երկու անուն հանրապետական թերթի անվճար բաժանորդագրության հնարավորություն:

ՄԵՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

ՖԱԹՍԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Նշակույթի, երիտասարդության հարցերի
և սպորտի նախարարության գրադարանային
բաժնի պետ

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Վերջին տասը տարիներին հանրապետությունում տեղի ունեցող փոփոխություններից անմասն չեն մնացել նաև գրադարանները: Մենք ականատեսն ենք այն փաստի, որ փոխվում են գրադարաններին առաջարկվող պահանջները և բնականաբար փոփոխություններ են տեղի ունենում հենց գրադարաններում: Փոխվում է գրադարանների դերը մշակույթի, գիտության, կրթության, քաղաքականության, տնտեսական ինքնակառավարման, շուկայական հարաբերությունների զարգացման բնագավառում: Գրադարանների գլխավոր խնդիրը ներկայումս ավելի հաճախ ձևակերպվում է, որպես ազատ և անսահմանափակ տեղեկատվության պահպանման և օգտագործման աղբյուրի: Գրադարանավարներն էլ հանդես են գալիս ոչ թե որպես գիրք պահպանողներ և տարածողներ, այլ տեղեկատվության մասնագետներ: Երրորդ հազարամյակ մուտք գործած գրադարանը, արդեն ոչ միայն գրապահոց է, այլ յուրահատուկ էլեկտրոնային արխիվ: Այստեղ հասարակությանը հնարավորություն է տրվում օգտվելու էլեկտրոնային կրիչներից և ինտերնետի ընձեռած մյուս հնարավորությունից:

Ժողովրդավարական հասարակության կայացման ճանապարհին գրադարանների խնդիրները պետք է հստակեցվի համապատասխան օրենքներով: Այս նկատառումով «Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել «Գրադարանների և գրադարանային գործի մասին» և «Փաստաթղթերի պարտադիր օրինակի մասին» օրենքների նախագծերը, որոնց ընդունումով հնարավոր կլինի հանրապետությունում կանոնակարգել գրադարանների գործունեությունը: Հասկանալի է, որ անհրաժեշտություն է առաջանում կանխանշելու այն հիմնական ուղղությունները, որոնց իրագործումով կարելի է գրադարանները դարձնել հասարակության բազմակողմանի պահանջների բավարարման կենտրոն՝ օգտագործելով հավաքված հսկայական նյութը: Որպես հիմնական ուղղություններ առանձնապես կարևորում ենք

- գրադարանների դերի ամրապնդումը զարգացող տեղեկատվական հասարակությունում,
- գրադարանային գործի արդիականացումը, նոր տեխնոլոգիաների ներդրումը,
- համալրման մեխանիզմների մշակումը, գրքի շուկայի ձևավորումը,
- գրադարանային ֆոնդի պահպանումը և անվտանգության ապահովումը,
- միջգերատեսչական կապերի զարգացումը,
- նորմատիվ իրավական ակտերի մշակումը՝ գրադարանային գործի կարգավորման նպատակով,
- կադրերի վերապատրաստումը:

Այս խնդիրների իրագործման նպատակով կատարված աշխատանքների շրջանակներում առանձնանում է հայաստանյան խոշոր գրադարանների նախաձեռնությամբ ստեղծված գրադարանային կոնսորցիումի գործունեությունը: Կոնսորցիումի կողմից մշակված և արդեն գործողության մեջ դրված «Միասնական տեղեկատվական էլեկտրոնային ցանցի» ծրագիրը հնարավորություն կտա իրականացնելու հայ գրքի էլեկտրոնային քարտադրման, ինչպես նաև համահավաք գրացուցակի ստեղծումը: Հայաստանի նման երկրում, երբ բնակչության մեծ մասը հնարավորություն չունի թերթ ու ամսագիր բաժանորդագրվելու, գրականություն գնելու, երբ հատկապես համայնքներում, որպես մշակույթի օջախներ մնացել են միայն գրադարանները, երբ բոլորովին անձանոթ քաղաքական ու տնտեսական խնդիրներ են առաջադրվում հասարակությանը, առավել կարևորվում է գրադարանների դերը: Սակայն օրենսդրական դաշտի բացակայությունը հնարավորություն չի տալիս

կարգավորելու շատ խնդիրներ (գրադարանների պահպանում, համալրում, բնակչության լիարժեք սպասարկում):

Գրադարանների առջև դրված խնդիրների լուծմանը մեծապես աջակցել են հանրապետությունում գործող դոնոր կազմակերպությունները, որոնց աջակցությամբ թե գլխամասային, թե մարզային ու համայնքային գրադարանները փոխում են իրենց դեմքը: Որպես այդպիսի օրինակ կարելի է առանձնացնել վերջերս «Եվրասիա» հիմնադրամի կողմից վեց գրադարաններին (Սյունիքի, Արմավիրի, Լոռու մարզային, Նոյեմբերյանի համայնքային, Գյումրիի քաղաքային կենտրոնական, Գյումրիի գիտատեխնիկական) հատկացված դրամաշնորհները: Ընդլայնվել են գրադարանների միջազգային կապերը, որի արդյունքում շահում են թե գրադարանները, թե ընթերցողները: Այսօր արդեն դրվել են թվային գրադարանի հիմքերը: Ընթերցողները կարողանում են օգտվել ինտերնետի ընձեռած հնարավորությունից, էլեկտրոնային հրատարակություններից, էլեկտրոնային փոստի ծառայություններից:

Գրադարանների առջև դրված ցանկացած խնդիր հնարավոր է լուծել միայն լավագույնս վերապատրաստված գրադարանավարների միջոցով: Այս ուղղությամբ նույնպես որոշակի աշխատանքներ են տարվել Հայաստանի ազգային, գիտաբժշկական, հայկական գրադարանային միության աջակցությամբ:

ՈԱՖԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Հայաստանի Ազգային գրադարանի փոխտնօրեն

ՀԳՄ քարտուղար

ՀԱՍՆԱԼՐՈՒՄԸ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Պատմություն դարձավ 20-րդ դարը: Մեր ժողովրդի բազմադարյան պատմության ամենադրամատիկ դարը: Այն սկսվեց անասելի դժվարություններով, եղեռնով, Արևմտյան Հայաստանի կորստով և ավարտվեց դարավոր երազանքի՝ անկախության ձեռք բերմամբ, հայկական որոշ տարածքների ազատագրության փառապանծ հաղթանակով:

Ծանր փորձությունների հաղթահարման, պետականության հաստատման միջոցով անցած դարում ձեռք բերվեցին աննախադեպ հաջողություններ գիտության, մշակույթի, սոցիալ-տնտեսական զարգացման բնագավառներում:

Դարավերջի սոցիալ-տնտեսական փոփոխությունները ծանր անդրադարձ ունեցան մասնավորապես մշակույթի վրա:

Հայտնի է, որ հայկական պետականության բացակայության պայմաններում մշակույթի միջոցով է պահպանվել մեր ազգային ինքնությունը: Բնականաբար, պետականության ձեռք բերման պայմաններում մշակույթը պետք է դառնա համազգային հոգածության առարկա: Մեր ժողովրդի հավաքական մտահոգությամբ և նվիրումով հայրենիքում և արտերկրում պետք է զարգանա ու ծաղկի մշակույթը: Դրա համար ոչ միայն անհրաժեշտ է ջանքերի մեկտեղում, այլև շրջահայացություն, սթափություն, որպեսզի պատասխան գտնի մշտնջենական հարցը՝ ով ենք մենք, որտեղից ենք գալիս և ուր ենք գնում:

Խոսքս մասնավորեցնեմ գրավոր մշակույթի՝ տպագիր արտադրանքի պահպանման և համալրման խնդիրների առումով, որոնց կոչված են գրադարանները:

Անցած դարի 20-ական թվականների սկզբին գրադարանային գործը մամուլում ներկայացվել է հետևյալ կերպ. «Գրադարաններ գոյություն ունեն Երևանի գավառում՝ 14, Ալեքսանդրապոլի՝ 10, Էջմիածնում՝ 17, Ջանգեզուրում՝ 6, Նոր Բայազետում՝ 2, Լոռիում՝ 8, Ղարաքիլիսայում՝ 2, Ղարալագազում՝ 3, Դիլիջանում՝ 7 և Մեղրիի գավառակում՝ 1. Ընդամենը՝ 70 գրադարան: Գավառական գրադարանները կազմված են քարտային սիստեմով, իսկ խոշոր կենտրոնականները՝ տասնորդական սիստեմով:

Գավառական գրադարաններին կենտրոնից մատակարարվել է 37513 կտոր գիրք, որից կազմված է 52 գրադարան: Ուղարկված գրքերը հայերեն և ռուսերեն և մասամբ թուրքերեն լեզուներով են:

Գլխաբաղվում արչությունը նյութական միջոցների բացակայության պատճառով հնարավորություն չունի Մոսկվայից ստանալու հրատարակվող նոր գրականություն: Այս բացը ծածկելու համար միջոցներ են ձեռք առնվում»:¹

¹ Խորհրդային Հայաստան, 1923, N39:

իրոք, հետագայում միջոցներ ձեռք առնվեցին գրադարանների քանակը շեշտակիորեն ավելացնելու, գրականության ֆոնդերի կազմը բարելավելու և հարստացնելու, գրադարանային գործը զարգացնելու ուղղությամբ:

1924թ. փետրվարի 12-ին Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը որոշում ընդունեց, որի 1-ին կետում ասված էր. «Հայաստանի սահմաններում գտնվող բոլոր գրադարաններն ու վիճագրատները պարտավոր են, նախքան տպագրված նյութերը հրատարակչին հանձնելը և տպարանից դուրս թողնելը, համեմայն դեպս ոչ ուշ քան երեք օր՝ առաջին օրինակները պատրաստելուց հետո, ներկայացնել առանց վճարի Հայաստանի գրապալատին (հասցեն՝ Երևան, Պետական հանրային գրադարան)»:²

Այսօրվա տեսանկյունից դատելով՝ գուցե զարմանալի թվա, որ տպագիր նյութերից 35-ական օրինակ, ինչպես նաև «5-ական օրինակ պլակատներ, հրամաններ, հարցաքարտեր, նկարներ, բացիկներ՝ տպագրված նյութերով կամ նկարներով, գծանկարներ, ամեն տեսակ վիճատիպ հրատարակություններ և այլն»³ պարտադիր կարգով պարտավորեցվում էր ներկայացնել Հայաստանի գրապալատին: Եվ ոչ միայն այդ, այլև Հայաստանի սահմաններից դուրս լույս տեսած նյութերը, որոնք «հրատարակված են Հայաստանի որևէ պետական հաստատության հաշվով և վաճառվում կամ տարածվում են Հայաստանում», նույնպես պետք է ներկայացվեն Հայաստանի գրապալատին:

Նույն որոշման մեջ ամրագրվել էր նաև հետևյալ կարևոր դրույթը. «Եթե ուղարկած օրինակները թերատ լինեն, ինչ տեսակ թերատություն կուզի լինի, միևնույնն է, տպարանները և վիճագրատները պատասխանատվության կենթարկվեն այնպես, ինչպես եթե նրանք ամենևին ուղարկած չլինեին տպագրած նյութերը»:

Հայաստանի գրապալատին տրամադրվող՝ ՀԽՍՀ սահմաններում լույս տեսնող, բոլոր տպագիր նյութերը պետք է բաշխվեն հետևյալ կերպ. «25 օրինակ Մոսկվայի կենտրոնական գրապալատին, 3 օրինակ Հայաստանի պետական հանրային գրադարանին (այժմ՝ Հայաստանի Ազգային գրադարան – Ռ.Ղ.), 1 օրինակ մանկավարժական ինստիտուտի գրադարանին, 1 օրինակ ուղարկել էջմիածնի գիտական ինստիտուտի մատենադարանին, 1 օրինակ ուղարկել Լենինականի գրադարանին, 1 օրինակ ուղարկել Ստեփանակերտի գրադարանին և 1 օրինակ պահել գրապալատի դիվանում»:⁴

Այսպիսով, պետականորեն հիմք դրվեց տպագիր արտադրանքը խոշոր գրադարաններին հանձնելու քաղաքականությանը, որն հետագայում բերեց գրականության ֆոնդերի աննախադեպ աճին, գրադարանային գործի ըստ ամենայնի ծավալմանը և զարգացմանը:

Հայաստանի բոլոր բնակավայրերում՝ քաղաքներից մինչև շրջկենտրոններ և գյուղեր, բացվեցին նոր գրադարաններ: Խոշոր գյուղերում դրանց թիվը հասավ նույնիսկ 2-3 գրադարանի:

70-ական թվականներին մեր հանրապետությունում ստեղծվեցին գրադարանային խոշոր միավորումներ՝ գրադարանների կենտրոնացված համակարգեր (ԳԿՀ): ԳԿՀ-ի կենտրոնական գրադարանի միջոցով էր կատարվում միավորված գրադարանների ֆինանսավորումը և գրականության համալրումը:⁵

Անշուշտ, դրական միտումները և զարգացումները ակնհայտ էին: Սակայն կային հիմնահարցեր, որոնց լուծումը պայմանավորված էր ժամանակի թելադրանքով: Դա շենքային պայմանների բարելավումն էր, գրադարանների տեղեկատվական դերի բարձրացումը, համակարգչային տեխնոլոգիաների ներդրումը գրադարանային գործում և այլն:

Հայաստանի անկախության հռչակումը, տնտեսական փոփոխությունները, արցախյան գոյամարտը, բնականաբար, տնտեսական, քաղաքական, մշակութային և բարոյական մեծ փորձություն էր մեր ժողովրդի համար, որը չէր կարող ազդեցություն չունենալ մշակութային օջախների, մասնավորապես գրադարանների վրա: Անցել է մեկ տասնամյակ և ժամանակն է փորձել իմաստավորել և ծանր ու թեթև անել եղածը:

² Գրադարանային գործի պատմությունը Սովետական Հայաստանում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Հտ. 1, 1920-1941. -Ե., 1983, էջ 37:

³ Նույն տեղում, էջ 37-38:

⁴ Խորհրդային Հայաստան, 1924, 16 փետր.:

⁵ Հայաստանի Հանրապետություն, 1998, 12 փետր., N27:

Հայտնի է, որ գրադարանի լինելիությունը պայմանավորված է, առաջին հերթին, գրականության ֆոնդի առկայությամբ: Եվ պատահական չէ, որ գրադարան ստեղծելու դեպքում ֆոնդի որոշակի քանակը պարտադիր պայման է: Դա ամրագրվել է նաև «ՀՀ գրադարանային գործի մասին» օրենքի նախագծում, որտեղ սահմանված է առնվազն հազար անուն միավորի պահանջը:

Պարտադիր է նաև գրականության պահպանության համար անհրաժեշտ պայմանների (լուսավորություն, խոնավաչափ և օդափոխիչ սարքեր, անվտանգություն և այլն) ապահովումը: Եթե խնդրին մոտենանք վերը նշված տեսանկյունով, ապա անհրաժեշտ է նշել, որ ոչ քիչ թվով գրադարաններ մեր հանրապետությունում գտնվում են տխուր վիճակում:

Հաշվի առնելով վերջին տասնամյակի իրողությունները, փորձենք գրադարանների քանակի և համալրման խնդիրներն արծարծել՝ նկատի ունենալով պաշտոնական վիճակագրությունը:

Հայաստանի Հանրապետության հանրային բնույթի գրադարանների 1990 և 2000 թվականների քանակը ըստ մարզերի ներկայացնենք ստորև.

		1990թ.	2000թ.	Պակասել է
1.	Երևան ⁶	63	31	32-ով
2.	Արագածոտն	122	113	9
3.	Արարատ	107	98	9
4.	Արմավիր	124	115	9
5.	Գեղարքունիք	151	133	18
6.	Լոռի	166	141	25
7.	Կոտայք	96	83	13
8.	Շիրակ	166	135	31
9.	Սյունիք	177	155	22
10.	Վայոց Ձոր	60	52	8
11.	Տավուշ	95	78	17
		1327	1134	193

1990 թվականին առկա 1327 գրադարանից կենտրոնական քաղաքային էր՝ 5-ը, կենտրոնական շրջանային՝ 37-ը: Այս 42 կենտրոնական գրադարանի մասնաճյուղեր էին 191 քաղաքային, 995 գյուղական և 99 մանկական գրադարաններ:⁷

2000թ. գոյություն ունեցող 1134 գրադարանից 10-ը մարզային կենտրոնական է, 1-ը՝ քաղաքային կենտրոնական (Երևանի Ավ.Իսահակյանի անվան քաղաքային գրադարանը), 31-ը՝ տարածքային կենտրոնական, 157-ը՝ քաղաքային, 883-ը՝ գյուղական, 52-ը՝ մանկական:

Այսպիսով, քաղաքային գրադարանները պակասել են 34-ով, գյուղականը՝ 112-ով, մանկականը՝ 47-ով:

Ընդհանուր թվով՝ 193 գրադարանի լուծարումը՝ անցած դարի վերջին տասնամյակում ընթացող գործընթացների արդյունք է: Գուցե կարելի է մտածել, որ մեր հանրապետության համար հանրային բնույթի 1327 գրադարան ունենալը չհիմնավորված շռայլություն է, մանավանդ որ պետությունը հնարավորություն չունի ֆինանսավորելու և պահելու այդքան գրադարան: Եթե լուծարման ժամանակ հաշվի է առնվում մի շարք գործոններ, ինչպիսիք են՝ տեղաբաշխման հիմնավորվածությունը, գրադարանի ընդհանուր վիճակը, բնակչության համար այլևս հետաքրքրություն չներկայացնելը (նկատի ունենք, որ դրան մոտիկ ավելի խոշոր և հարուստ գրադարան է գործում) և այլն, ապա ամեն ինչ բնական է և նորմալ: Իսկ եթե լուծարվում է շենքը այլ նպատակների համար օգտագործելու (խանութ, գրասենյակ, ռեստորան, բնակելի տուն և այլն), ապա ոչ այնքան գրադարանավարները, որքան հասարակությունը

⁶ Բացառությամբ հանրային բնույթի 3 խոշոր՝ Հայաստանի Ազգային, Խնկո Ապրի անվան հանրապետական մանկական և հանրապետական երաժշտական գրադարանների:

⁷ «Հայաստանի ԳԿՀ-ները 1990 թվականին» վիճակագրական վերլուծության մեջ գումարման սխալ կա, որի պատճառով քաղաքային գրադարանների թիվը ներկայացված է 198, գյուղականը՝ 955, մանկականը՝ 97 (տես էջ 5):

կարող է և պետք է անպայմանորեն իր վերաբերմունքն արտահայտի, որը չի կարող նշանակություն չունենալ:

Ընդունենք, որ բոլոր լուծարումները ճիշտ էին և օրինական: Բայց հարց կարող է ծագել, իսկ կրճատումների հաշվին ինչքանով է բարելավվել մյուս գրադարանների վիճակը: Հարցի պատասխանը ստանալու համար, նորից դիմենք պաշտոնական վիճակագրությանը: Այս անգամ ուշադրություն դարձնենք գրականության ֆոնդերի ընդհանուր վիճակին և համալրմանը, քանի որ առանց գրականության գրադարան չի կարող լինել:

		Գրականության ֆոնդը		Պակասել է
		1990թ.	2000թ.	
1.	Երևան	2.972.999	1.826.842	1.146.157 միավոր
2.	Արագածոտն	916.170	801.528	114.642
3.	Արարատ	1.053.429	956.225	97.204
4.	Արմավիր	1.395.234	1.327.305	67.929
5.	Գեղարքունիք	1.281.464	1.178.300	103.164
6.	Լոռի	2.120.546	1.934.376	186.170
7.	Կոտայք	1.046.721	905.716	141.005
8.	Շիրակ	1.528.551	1.477.784	50.767
9.	Սյունիք	1.474.766	1.320.529	154.237
10.	Վայոց Ձոր	434.664	407.461	27.203
11.	Տավուշ	979.850	841.463	138.387
		15.204.394	12.977.529	2.226.865

Այսպիսով, վերջին տասնամյակում գրականության ֆոնդը պակասել է 2 միլիոն 226 հազար 865 միավորով: Պակասելու միտումը գրադարանների քանակի հետ միասին, վերջին տարիներին շարունակվում է: Այսպես.

	Տարեթիվը	Գրադարանների թիվը	Գրականության ֆոնդը	Պակասել է ֆոնդը
1.	1996	1245	13.877.654	353.303
2.	1997	1203	13.467.683	409.971
3.	1998	1185	13.377.528	90.155
4.	1999	1166	13.111.111	266.417
5.	2000	1134	12.977.529	133.582
				1.253.428

Գրականության ֆոնդի ընդհանուր քանակը (12.977.529) ըստ բնագավառների և տոկոսային հարաբերությամբ արտահայտվում է հետևյալ կերպ.

ա) Հասարակական-քաղաքական գիտություններ – 2.130.399

բ) Բնական գիտություններ, բժշկություն – 677.760

գ) Տեխնիկական գիտություններ, գյուղատնտեսություն – 651.642

դ) Արվեստ, ֆիզկուլտուրա և սպորտ – 729.557

ե) Բանասիրական գիտություններ, գեղարվեստական գրականություն – 8.788.171

ԻՖԼԱ-ի կողմից 1999թ. արձանագրված չափաքանակները և մեր հանրապետության հանրային գրադարանների համապատասխան ցուցանիշները բովանդակային վերլուծությամբ այսպիսին են.

		ՀՀ-ում	ԻՖԼԱ-ի պահանջը
1.	Հասարակական-քաղաքական գիտություններ	16.4%	28.7%
2.	Բնական գիտություններ, բժշկություն	5.2	6.9
3.	Տեխնիկական գիտություններ, գյուղատնտեսություն	5.1	10.2
4.	Արվեստ, ֆիզկուլտուրա և սպորտ	5.6	6.0
5.	Բանասիրական գիտություններ, գեղարվեստական գրականություն	67.7	48.2

«Միջազգային փորձը ցույց է տալիս, որ հանրային բնույթի գրադարանների գրականության ֆոնդը զարգացած երկրներում 10-15 տարում համարյա լրիվ փոխվում է, այսինքն՝ բովանդակությամբ թարմանում, նորանում է: Դա պայմանավորված է

նրանով, որ հանրային բնույթի գրադարանները գրականության երկարաժամկետ պահպանման գործառույթ չունեն»:⁸

1996թ. նոյեմբերին ընդունված «ՀՀ տեղական ինքնակառավարման մասին» օրենքով գրադարանները հանձնվեցին տեղական ինքնակառավարման մարմիններին: Թեև այդ օրենքի 34 հոդվածով համայնքի ղեկավարը «կազմակերպում է համայնքային ենթակայության... գրադարանների գործունեությունը, դրանց կառուցման, շահագործման և նորոգման աշխատանքները», բայց կան փաստեր, որոնք հակառակ են ասում:

2000թ. գյուղական համայնքներին պատկանող 707 գրադարաններ մեկ միավոր գրականությամբ անգամ չեն համալրվել: Եվ արդեն քանի տարի:

2000 թ.-ի վիճակագրական վերլուծության մեջ նշված է, որ հանրային բնույթի 1134 գրադարանում մուտք է եղել 342.952 միավոր: Առերևույթ կարող է թվալ, որ մուտք գործած գրականության քանակը բավարար է, եթե նկատի ունենանք ներկա ֆինանսական վիճակը: Սակայն չմոռանանք, որ 32 գրադարան լուծարվել է, որոնց ֆոնդերը, ըստ կարգի, պետք է հանձնված լինեն մյուս գրադարաններին: Դա կազմում է շուրջ 260-280 հազար միավոր: Ասել է թե, իրական համալրումը ամբողջ տարվա ընթացքում կազմում է շուրջ 60-65 հազար, որը չնչին թիվ է...

Ժամանակը պահանջում է, որ պետական կառույցները լրջորեն զբաղվեն գրադարանների հիմնահարցերով: Տարիներ շարունակ չհամալրվելով նոր գրականությամբ կամա թե ակամա գրադարանները դառնում են ինքնալուծարվող հիմնարկներ: Շատերի մոտ այն թյուր կարծիքը կա, թե իբր գիրք չեն կարդում: Այդպես մտածողներին հրավիրում ենք այցելել Ազգային գրադարան և համոզվել իրենց անհրավագիության մեջ:

Ազգային գրադարանին մեծ ջանքերի և դժվարությունների գնով հաջողվում է նոր հրատարակված գրականություն ձեռք բերել: Գաղտնիքը նոր գրականությամբ գրադարանը համալրելու մեջ է և ոչ թե չկարդալու: Փառք Աստծո, հիմա մեր հանրապետությունում տարեկան լույս է տեսնում շուրջ 1000 անուն գիրք: Այդքանից ոչ մի միավոր գրադարան մուտք չգործելու դեպքում այդ գրադարանը ինչ հետաքրքրություն կարող է առաջացնել հասարակության մեջ: Այս խնդրի լուծումը չի սահմանափակվում այսօրվանով, դա նաև ապագայի երաշխիք է, ազգի մտավոր զարգացման կարևոր գործոն, որին չպետք է մատերի արանքով նայել:

Ակամա հիշեցի 2001թ. հոկտեմբերի 13-15-ը Երևանում անցկացված ԱՊՀ երկրների ազգային գրադարանների տնօրենների 2-րդ խորհրդակցության և Եվրասիայի գրադարանային վեհաժողովի (ԵԳՎ) օրերը: Ղազախստանի Ազգային գրադարանի տնօրեն, ԵԳՎ-ի նախագահ Ռոզա Բերդիգալիևան խորհրդակցության ժամանակ հայտարարեց, որ 3 հազար գրադարան ստանում են Ղազախստանում տպագրված գրականության անվճար օրինակներ: Կարելի է նախանձել, որովհետև մեր հանրապետությունում, ի տարբերություն ԱՊՀ շատ երկրների, պարտադիր օրինակի օրենքն անգամ ընդունված չէ:

Այս հոդվածը չէր գրվի, եթե խնդիրը, իրոք, լուրջ չլիներ և անհետաձգելի լուծում չպահանջեր: Մեր հանրապետության գրադարանների վիճակը մտահոգիչ է: Վերջապես պետք է խնդիրը շահագրգիռ քննարկման նյութ դարձնել: Դա ժամանակի հրամայականն է, որը պահանջում է հավատարիմ լինել մշակութային զարգացման ավանդույթներին:

ԿԱՐԻՆԵ ԱՐԱԲՅԱՆ

Հայաստանի Ազգային գրադարան

**ԳՐԱԴԱՐԱՆԻ ԴՐԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ԵՎ ԿԱՊԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

Հասարակական կյանքում կատարված փոփոխությունները չէին կարող իրենց անդրադարձը չունենալ նաև գրադարանների գործունեության վրա:

Իրականությունն այսօր, ցավոք, այնքան էլ բարենպաստ չէ գրադարանների համար: Նշանակալիորեն կրճատվել է պետական ֆինանսավորումը, նվազել է

⁸ Տեղեկագիրք-4 /Հայկական գրադարանային միություն-Ե., 1999, էջ 16

գրադարանի համալրման հնարավորությունը, չի գործում պարտադիր օրինակի մասին օրենքը: Այս ամենին զուգահեռ փոխվել են նաև ընթերցողների պահանջները, առաջ է եկել նոր տեսակի ծառայությունների և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտություն:

Նման պայմաններում իրենց գոյությունը և հեղինակությունը պահպանելու համար գրադարաններին անհրաժեշտ է վերանայել սեփական գործունեության ավանդական մոտեցումները և մշակել ժամանակակից գրադարանի նոր մոդել: Այս խնդիրների լուծմանը կարող է նպաստել գրադարանում ճիշտ կազմակերպված «Public Relations» (PR) ծառայության գործունեությունը, որը կոչված է ապահովելու կապերը հասարակայնության հետ:

Եվ այսպես ինչ է PR-ը ընդհանրապես, և գրադարանային PR-ը մասնավորապես: Գոյություն ունի PR-ի մոտ 500 սահմանում: Առաջին հայացքից անհասկանալի այս բառակապակցության իմաստը բացահայտելու համար մեջ բերենք դրանցից երկուսը: Անգլիայի «Հասարակական կապերի ինստիտուտը» PR-ին տալիս է այսպիսի ձևակերպում. «PR-ը ծրագրավորված, երկարատև, նպատակասլաց ջանքեր են, որ գործադրվում են կազմակերպության և հասարակայնության միջև բարյացակամ հարաբերություններ և փոխըմբռնում հաստատելու և պահպանելու նպատակով»: Իսկ «Օտար (այլալեզու) բառերի բառարանը» PR-ը մեկնաբանում է հետևյալ կերպ՝ «PR-ը հասարակական կարծիքի ձևավորում է՝ հիմնարկության առավել հաջող գործունեությունը ապահովելու և նրա հեղինակությունը բարձրացնելու նպատակով»: Այսպիսով, PR-ը գիտություն է հասարակական կարծիքը կառավարելու մասին:

“Public Relations” ձևակերպումն իր մեջ պարունակում է հետևյալ ուղղությունները՝ հասարակական կարծիք, հասարակական, կառավարման, ֆինանսական, միջազգային և սպառողական հարաբերություններ, հետազոտումներ և վիճակագրություն: PR-ը առաջացել է սոցիալական հոգեբանության, տրամաբանության, ինֆորմատիկայի կառավարման (մենեջմենթ) և շուկայավարություն (մարկետինգ) սահմանագծում: Որպես ինքնուրույն գիտաճյուղ ձևավորվել է 60-ականների կեսերին: Այսօր PR-ը հասարակական կարծիքի ձևավորման և կառավարման հիմնական լծակներից մեկն է: Թեպետ «կապեր հասարակայնության հետ» ձևակերպումը առաջացել է ոչ այնքան վաղ, նման գործունեությունը հայտնի է դեռ հնագույն ժամանակներից: Այն կառավարման համակարգի օրգանական մասն էր: Օրինակ՝ Հին Հռոմում հասարակական կարծիքի կարևորությունը արտահայտվում էր հետևյալ նշանաբանով “Vox populi – vox dei” -«Ձայն բազմաց – ձայն Աստծո»: Որպես խոսքի ազդեցությամբ խնդիրներ լուծելու հմտություն, PR-ը առաջացել է հենց այդ ժամանակներից:

Անտիկ շրջանում հիմնականում գոյություն ունեին միայն բանավոր հաղորդակցման միջոցներ, և հասարակական կարծիքի վրա առավել ազդեցություն էին ունենում հատկապես ճարտար հռետորները, ինչպես Դեմոսթենեսը Հին Հունաստանում, Կիկերոնը՝ Հին Հռոմում:

Ժամանակակից քաղաքակրթությունը, բացի հռետորությունից և ճարտասանությունից, լսարանին առաջարկում է նաև ազդեցության մի շարք այլ միջոցներ: Դրանք զանգվածային լրատվական միջոցներն են (ՁԼՄ), գովազդը, քարոզչությունը: Սակայն PR-ը պետք է սահմանազատել թե ՁԼՄ-ից, թե գովազդից և թե քարոզչությունից: Վերջիններս կարող են անվանվել PR-ի ամենամոտիկ հարևանները: Լրատվությունը՝ ժուռնալիստիկան, սովորաբար նկարագրում է արդեն կատարված, տեղի ունեցած իրադարձությունը, մինչդեռ PR-ը հաճախ ինքն է հեղինակում այն: Գովազդը սահմանափակվում է միայն առջուվաճառքի խնդիրներով, իսկ PR-ի բնագավառը շատ ավելի լայն է ու բազմակողմանի: PR-ը տարբերվում է նաև քարոզչությունից: Վերջինս ոչ միշտ է հաշվի առնում էթիկական սկզբունքները, երբեմն հետապնդելով անձնական շահեր՝ կեղծելով և աղավաղելով փաստերը: PR-ը ձգտում է փոխըմբռնման կարծիքներն ու գաղափարները միայն կամավոր ընդունելու միջոցով: PR-ի գործունեության հաջողությունը պայմանավորված է էթիկական կանոնների և ազնիվ միջոցների պահպանմամբ: Չնայած այս բոլոր տարբերություններին, PR-ը կարող է և պետք է օգտվի և ՁԼՄ-ից, և գովազդից և թե քարոզչությունից, քանի որ դրանք են հասարակայնության հետ կապերի հիմնական գործոնները:

Սերտ համագործակցությունը ՁԼՄ-ի հետ յուրաքանչյուր կազմակերպության, այդ թվում գրադարանի դրական կերպարի ստեղծման կարևորագույն նախապայմանն է: Ընդ որում այդ համագործակցությունը չպետք է սահմանափակվի լրագրողներին

միայն գրադարանային միջոցառումների հրավիրելով: PR-ի աշխատակիցները պետք է նախապատրաստեն լրագրողների համար տարբեր տեսակի հաղորդագրություններ, օրինակ, մամուլի հաղորդագրություն, որը կարևոր լուր կամ լրատվություն պարունակող հաղորդագրություն է: Օրինակ՝ նոր գրականության ստացում, սեմինարի կազմակերպում, ցուցահանդեսի բացում, դրամաշնորհի ստացում, նոր տվյալների շտեմարանի տեղադրում, նոր տեսակի ծառայությունների մասին և այլն: Սովորաբար այն 1-2 էջից բաղկացած տեղեկատվություն է, որը պատասխանում է 5 հարցի՝ ով, ինչ, որտեղ, երբ, ինչու: Այսինքն, ո՞վ է տվյալ միջոցառման սուբյեկտը, ի՞նչի կամ ու՞մ է նվիրված միջոցառումը, ի՞նչ է կատարվում, որտե՞ղ և ե՞րբ դա պետք է կատարվի կամ արդեն կատարվել է և ինչ նշանակություն է դա ունենալու: Ընդ որում, հաղորդագրությունը պետք է անպայման լինի հատուկ խորհրդանշանով պաշտոնաթղթի վրա, որտեղ մատնանշվում են հիմնարկության հասցեն, հեռախոսի համարը և պատասխանատու անձի տվյալները: Լրատվական միջոցներում որքան շատ լինի դրական հաղորդագրությունը, այնքան լավ: Այս նպատակին կարող են ծառայել նաև հեռուստատեսությունն ու ռադիոն: Ցանկալի է ունենալ և տեսաերիզ, որը կպատմի գրադարանի ֆոնդերի, արժեքների և ծառայությունների մասին:

Գրադարանի դրական կերպարի և հեղինակության ձևավորմանն ու պահպանմանը նպաստում է շուկայագիտության մարկետինգային հիմունքների կիրառումը: Գրադարանում պետք է անցկացվեն մարկետինգի հետազոտություններ, անհրաժեշտ է կատարել լսարանի հստակ սահմանում և վերլուծություն՝ նրա հետաքրքրությունների, պահանջարկի, հայացքների մասին: Դրա համար PR-ը պետք է իրականացնի լուրջ հետազոտական աշխատանք՝ նպատակ ունենալով պատասխանել այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ ում ենք մենք հետաքրքիր, ո՞վ է լինելու մեր հնարավոր սպառողը, ի՞նչն է իրեն գրավում մեր մեջ և այլն:

Գրադարանային մարկետինգի մյուս խնդիրն է՝ գրադարանային ծառայությունների սպառողական պահանջարկի ուսումնասիրումը, ինչպես անվճար, այնպես էլ վճարովի հիմունքներով, ընդ որում որպես սպառող կարող են հանդես գալ ոչ միայն մասնավոր անձինք, այլև կոլեկտիվներ և կազմակերպություններ, որոնց հետ կարող են պայմանագրեր կնքվել՝ մշտական ծառայություններ և տեղեկատվություն տրամադրելու համար:

Վճարովի ծառայությունները կարող են լինել գրադարանային-տեղեկատու, խորհրդատվական, կրթական, հրատարակչական, գովազդային, միջնորդական: Դրանք են՝ նյութերի սպասարկում գրադարանից դուրս, տեղեկատվական սպասարկում, անձնական քարտարանի կազմում, պատճենահանում, միկրոժապավենների բազմացում, գովազդի տեղադրում գրադարանի սրահներում, միջոցառում անցկացնելու նպատակով այլ կազմակերպություններին հարմար տարածքի տրամադրում և այլն: Վճարովի ծառայություններից ստացված շահույթը, բնականաբար, չի կարող լինել այդքան նշանակալի, որպեսզի փոխարինի պետական ֆինանսավորումը:

Գրադարանի զարգացման, համալրման խնդիրները հոգալու, ինչպես նաև տեխնիկական վերազինման համար անհրաժեշտ է ֆինանսավորման այլ աղբյուրների հայթայթում, այսինքն՝ «*ֆանդռեյզինգ*»: PR-ը պետք է կարողանա ներգրավել նվիրատուներին և հովանավորներին: Արդյունավետ ֆանդռեյզինգ անցկացնելու համար պետք է տիրապետել դրա ստրատեգիային՝ ուսումնասիրելով, թե որ պարագաներում և ում են սովորաբար մարդիկ հակված փող հատկացնել: Հաջողությունը կախված է ճիշտ ծրագրավորումից, դոնորների հայտնաբերումից, ինչպես նաև խնդրելու, շնորհակալություն հայտնելու և արդյունքների մասին տեղեկացնելու հմտություններից: Ինչպես ցույց է տալիս փորձը, մարդիկ հակված են փող ծախսել հեղինակություն և հարգանք ձեռք բերելու, ինքնաբավարարվածության համար, հասարակության առաջ պարտավորվածության զգացումից կամ պարզապես սիրելով գիրքն ու գրականությունը: Գրադարանին հեղինակություն կարող է բերել նաև ճիշտ ընտրված հոգաբարձուների խորհուրդը: Նրա անդամները պետք է լինեն հարգանք և ճանաչում վայելող քաղաքացիներ, որոնց օգնությունը կարող է ցուցաբերվել ոչ միայն հովանավորությամբ, այլև նրանց անվիճելի հեղինակությամբ: PR-ի անմիջական պարտականությունն է իր կազմակերպության և հասարակայնության միջև կոնֆլիկտային իրավիճակների կանխարգելումը և նրանց լուծումը: Կարևոր է ուշադրությամբ հետևել հիմնարկության ներքին կյանքին, հայտնաբերել և հրաժարվել այն գործելակերպից և սովորություններից, որոնք հակասում են հասարակական

կարծիքին՝ վտանգելով փոխըմբռնումը: Կազմակերպության հեղինակությունը պահպանելու համար PR-ը պետք է կարգավորի նաև ներքին տարածայնությունները՝ կոլեկտիվում ստեղծելով առողջ մթնոլորտ:

PR-ի գործունեությունը ուղղված է նաև ներքին լսարանին՝ սեփական աշխատակիցներին: Այս դեպքում նա պետք է հանդես գա ոչ թե որպես ղեկավարության խոսափող, այլ փոխհարաբերություններ կարգավորող մի օղակ: Յուրաքանչյուր աշխատակից պետք իրեն գիտակցի որպես կազմակերպության մի մասնիկ, գիտենա նրա արժեքները և նպատակները, ունենա պատասխանատվության զգացում: Ներքին PR-ը իրականացնում է նաև աշխատանքը ապագա պոտենցիալ աշխատակիցների հետ: Օրինակ, ելույթներ բուհերում՝ երիտասարդ կադրեր ներգրավելու համար: Ցավոք երիտասարդ մասնագետների համար գրադարանը այսօր այնքան էլ գրավիչ չէ:

Գրադարանային կադրերի պատրաստումը նույնպես պետք է հարմարվի ժամանակի պահանջներին: Ավանդական գրադարանային մատենագիտական առարկաների դասավանդումը պետք է լրացվի ժամանակակից առարկաների ուսուցմամբ: Դրանք են, օրինակ, գրադարանային մենեջմենթը և մարկետինգը, նաև “Public Relations” գրադարանում հատուկ դասընթացի տեսքով: Օրինակ, Մոսկվայի մշակույթի համալսարանում 1992թ. դասավանդվում է «Գրադարանային գործի մենեջեր» մասնագիտությունը: Այստեղ նախատեսված է նաև “Public Relations”-ի ներածություն դասընթացը:

PR-ը պետք է ձգտի բարենպաստ վերաբերմունք ձևավորել իր կազմակերպության հանդեպ նաև կառավարական շրջանակներում: PR-ի գործունեությունը ներառում է նաև լոբբինգի հասկացությունը՝ ազդեցության կիրառումը գրադարանային օրենքների ընդունման համար: Դա իրականացվում է ղեկավար մարմինների հետ հանդիպումների, պաշտոնական շփումների միջոցով: Օգտակար է նաև համապատասխան փորձագետների ներգրավումը Ազգային ժողովի և կառավարության այն աշխատանքային խմբերում, որոնք մշակում են գրադարանին վերաբերող փաստաթղթային փաթեթները՝ ազդեցություն գործելով հասարակական կարծիքի և ՋԼՄ-ի միջոցով: Մեր պայմաններում, երբ դեռ ընդունված չէ գրադարանի մասին օրենքը, հատկապես կարևորվում է PR-ի գործունեության այս ուղղվածությունը:

Վերոշարադրյալը հանգեցնում է այն ճշմարտությանը, որ գրադարաններին այսօր անհրաժեշտ են փորձառու և համապատասխան գիտելիքներ ունեցող աշխատակիցներ, որենք կձևավորեն PR ծառայությունը: PR մասնագետը պետք է քաջատեղյակ լինի իր հիմնարկության գործունեության տարբեր բնագավառներից, տեսնի նրա խնդիրները և ներուժը: Միայն այդ դեպքում նա կարող է ըստ արժանվույն ներկայացնել իր հաստատությունը: Միանգամայն հասկանալի է, որ PR ծառայության հաջող աշխատանքի հիմնական գրավականն է հանդիսանում ղեկավարության հետ համագործակցությունը և փոխըմբռնումը: Բոլոր դեպքերում, PR-ը նաև վարչական կառավարման հետ կապ ունեցող աշխատանք է, և նրա արդյունավետությունն ապահովելու համար նախընտրելի է, որպեսզի այն գլխավորի գրադարանի ղեկավարներից որևէ մեկը: Միաժամանակ այդ աշխատանքը պետք է լինի թափանցիկ, մատչելի և հասկանալի բոլոր աշխատակիցների համար: PR բաժնի աշխատանքի հիմնական ուղղություններն են տեղեկատու-վերլուծականը, ֆինանսների ներգրավումը, առաջացող ճգնաժամերին արագ արձագանքումը և կարգավորումը, միջազգային ծրագրերի համակարգումը և, իհարկե, աշխատանքը ընթերցողների հետ:

Գրադարանային PR-ը պետք է կարողանա հանրությանը ներկայացնել գրադարանը ամենագրավիչ կողմից՝ կարևորելով այն որպես տեղեկատվության և գիտելիքների աղբյուր, ինչպես նաև ազգային արժեքների գանձարան: Այդ տեսակետից կարևոր է, որպեսզի PR-ը ունենա միջոցառումների և գործողության ամբողջական ծրագիր: PR միջոցառումների ցանկի մեջ կարող են մտնել ցուցահանդեսներ, հանդիպումներ, շնորհանդեսներ, բրոշյուրներ, բուկլետների հրատարակում, գրադարանի գործունեության մասին նյութերի տրամադրում ՋԼՄ-ին, համաշխարհային Ինտերնետ ցանցում համապատասխան էջերի տեղադրում, ընթերցողների կապի հաստատում և պահպանում, գրադարանի աշխատանքի և սպասարկման վերաբերյալ հարցումների պարբերական անցկացում, տեղեկատու դիզայնի մշակում պլակատների և հայտարարությունների համար: Աշխատանքի ճիշտ կազմակերպումը կնպաստի գրադարանի և նրա աշխատակիցների դրական կերպարի և հեղինակության ձևավորմանը:

Ամփոփելով, կցանկանայի անդրադառնալ նաև այն մարդկային հատկություններին, որոնք, իմ կարծիքով, պահանջվում են այս մասնագիտության համար: Իմ պատկերացմամբ PR մասնագետները պետք է լինեն հարուստ գիտելիքներով, հնարամիտ, փաստարկելու և մտքերը համոզիչ շարադրելու ունակ: Ցանկանալի է, որ նրանք լինեն արագ կողմնորոշվող, մարդկանց հետ հեշտությամբ հաղորդակցվող, միևնույն ժամանակ վստահություն ներշնչեն: Եվ թող տարօրինակ չթվա, նրանք պետք է ունենան հաճելի ձայն, հռետորական ունակություններ և համակրելի արտաքին: Ի դեպ, PR-ը այն մասնագիտություններից է, որտեղ կանայք ունեն տղամարդկանց հետ հավասար հնարավորություններ և նույնիսկ ավելի հաճախ են հասնում հաջողության: PR-ում աշխատող մարդիկ պետք նպատակասլաց լինեն, չզլանան նոր նախաձեռնություններից՝ դրանց մեջ տեսնելով նաև նոր հնարավորություններ:

Սա է այսօրվա գրադարանի պահպանման և զարգացման կարևոր նախապայմաններից մեկը:

ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱՌՕՐՅԱՅԻՑ

2001 թ. աշնանը Միության վարչության անունից նամակով դիմեցինք բոլոր մարզային գրադարաններին՝ խնդրելով տրամադրել նրանց գործունեությունը բնութագրող հոդվածներ ներկայացնել: Ուզում ենք շնորհակալությամբ նշել, որ մեր նամակին արձագանքեցին բոլոր մարզային գրադարանները, որոնք ներկայացրել են տարբեր ոճի ու բնույթի նյութեր՝ զուտ անկետային շարադրանքից մինչև նկարագրական-վերլուծականը: Խմբագրությունը նպատակահարմար գտավ ստացված պատասխանները տարբեր կերպ օգտագործել՝ երբեմն հիմնովին խմբագրելով կամ վերաշարադրելով տեքստերը և այն ներկայացնել ընթերցողի դատին: Հոդվածներին կից ներկայացրել ենք մարզային գրադարանների աշխատողների նախկինում դիտարկումները: Այդ դիտարկումները հեղինակներն արտահայտել են «Անի» հյուրանոցի միստերի դահլիճում 1998 թ. հոկտեմբերի 21-23-ին Հայկական գրադարանային միության կողմից կազմակերպված եռօրյա սեմինարի ընթացքում: Հետաքրքիր է նշել, որ մի քանի տարի առաջ մարզային գրադարաններից ոչ մեկը համակարգիչ չուներ: Այսօր բոլոր մարզային գրադարանները, բացառությամբ Տավուշի մարզայինի ունեն համակարգիչներ, ձևավորում են իրենց էլեկտրոնային կատալոգները: Ավելի, Լոռու մարզային գրադարանը, որն 1998-ին «գաղափար չուներ» համակարգիչների վերաբերյալ, ապա այսօր իր հոդվածը ներկայացրել է էլեկտրոնային փոստով, իսկ գրադարանում գործում է ամբողջ մի համակարգչային դասարան: Մնացած գրադարանների համեմատությունները թողնում ենք ընթերցողին:

Ֆրոսյա Ջանջուղազյան, Վանաձոր, Լոռու մարզի հանրապետական գրադարանի փոխտնօրեն

«Համակարգիչ չուներ, չենք տեսել, չենք լսել, գաղափար չուներք: մեկ համակարգիչ ենք խնդրել Ֆրանսիայի Բանյո քաղաքի պատվիրակներից»:

Գայանե Մինասյան, Արմավիրի մարզի հանրապետական գրադարանի նախկին տնօրեն

«Գրադարանները դուրս են մնացել բոլորի ուշադրությունից: Հնարավորություն չուներք գյուղերի հետ կապված համակարգի գրադարանների հետ մեթոդական կապի առումով: Հաշվետվություն չեն ներկայացնում: Մեթոդական աշխատանք չենք կարողանում իրականացնել»:

Ժաննա Գևորգյան, Կոտայքի մարզի հանրապետական գրադարանի տնօրեն

«Գրադարանը վերանորոգման խիստ կարիք ունի: 20 տարուց ավելի չի վերանորոգվել: Քաղաքապետարանը ոչ մի քայլ չի ձեռնարկում: Վարձերը չմոծելու պատճառով սպառնում են շենքից դուրս հանել: Առանց գրադարանային օրենքի որպես մարզային գրադարան անհնար է գոյատևել»:

Սուսաննա Մինասյան, Սյունիքի մարզի հանրապետական գրադարանի տնօրեն

«Երկու տարի անընդհատ ուզում են գրադարանի տարածքը վերցնել, որովհետև գտնվում է քաղաքի կենտրոնում: Գրադարանային տեխնիկա չուներք: 100 հազար դրամից ավելի պարտք ունենք հեռախոսային կապի համար: Պատերազմի ժամանակ ռմբակոծումներից քարոզվել են գրադարանի ապակիները, միջոց չուներք վերականգնելու: Եթե համայնքային գրադարաններում կադրերի նշանակման հարցը լուծվի մարզային գրադարանի հետ համաձայնեցնելով, ապա գրադարանի հեղինակությունը զբալիորեն կբարձրանա»:

Տավուշի մարզի հանրապետական գրադարան.

«Գրադարանը գործում է նախկին պիոներ տան կիսավեր շենքում: Չկա ոչ լույս, ոչ հեռախոս, ոչ ռադիո»:

Գևորգ Ամիրյան, Շիրակի մարզի հանրապետական գրադարանի տնօրեն

«Իրար չենք կարողանում տեսնել: Սա լավ առիթ եղավ, որ բոլորս իրար տեսնենք: Գրադարանի շենքային պայմանները շատ վատ են: Մեր հոյակապ շենքը մեր ձեռքից առան: Ամենակարևոր խնդիրներից մեծը միասնական համակարգչային ծրագրերի և ստանդարտների ընտրության հարցն է»:

ՀԱՍՄԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Գրադարանի տնօրեն

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

1935 թվական, 14-ը օգոստոսի...

Համաձայն Լուսժողկոմատի թիվ 50 հրամանի, որոշվեց Պետական հանրային գրադարանի մասսայական բաժինը հանձնել քաղաքային խորհրդին՝ կենտրոնական քաղաքային գրադարան կազմավորելու համար:

15-ը օգոստոսի, 1936 թվական... Ամիրյան փողոցի (նախկին Նազարովսկայա), 2/8 համարի պատմաճարտարապետական, մշակութային արժեք ներկայացնող, արական գիմնագիայի ննջարանային մասնաշենքի երկու սենյակում տեղավորված մասսայական կենտրոնական գրադարանն իր դռները բացեց ընթերցողների առջև՝ Ազգային գրադարանից նվիրատվություն ստացած 8000 ֆոնդով:

Հետագայում գրքային ֆոնդերի հարստացմանը նպաստեցին ակադեմիկոսներ Է. Հասրաթյանի, Ա. Հովհաննիսյանի, պրոֆեսոր Գ. Օգանեզովի, ՀՀ ժողովրդական նկարիչ Մ. Աբեղյանի, գրողներ Գ. Բեսի, Վ. Տալյանի, արվեստի և գրականության այլ անվանի գործիչների նվիրատվությունները:

1955թ. նոյեմբերի 12-ին գրադարանն անվանակոչվեց Ավետիք Իսահակյանի անվամբ: Այդ առիթով բանաստեղծը գրել է. «Ինձ համար գրադարանը եղել է երկրորդ հայրենի տունը, իսկ օտարության մեջ, մանավանդ Վենետիկում՝ առաջինը: Այն փաստը, որ իմ անունն է կրում քաղաքի առաջին մասսայական գրադարանը, անչափ ուրախացնում է ինձ: Ես միշտ գիրքը սրբություն եմ համարել, գրադարանը՝ յուրահատուկ սրբավայր: Ես կանեմ ամեն ինչ, որ ձեր այս հրաշալի գրադարանում մշտապես զգացվի հայ բազմադարյան գրականության շունչը: Ձեր գրադարանին մաղթում եմ երկար ու բարի ուղի, թող այն լինի հավիտյան, ինչպես որ հավիտյան է գիրքը»:

Վարպետի այս մեծ պատգամը դարձավ գրադարանի հետագա զարգացման ուղենիշերից մեկը:

1979թ. Երթաղխորհրդի գործկոմի մայիսի 16-ի որոշմամբ ստեղծվեց Երևանի բնակչությանը սպասարկող գրադարանների կենտրոնացված համակարգ՝ /ԳԿՀ/, տնօրեն նշանակվեց ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ԿԳ-ի երկարամյա վարիչ Վարվառա Գևորգի Մարգարյանը:

Երևան քաղաքի 46 մասսայական գրադարաններ միավորվեցին ԳԿՀ-ի կազմում: Ավ. Իսահակյանի անվ. կենտրոնական գրադարանը դարձավ ԳԿՀ-ի մեթոդական կենտրոնը:

1995թ. Երթաղգործկոմի որոշմամբ միավորվեցին մանկական գրադարանների կենտրոնացված համակարգը և ԳԿՀ-ն: Ստեղծվեց մեկ միասնական համակարգ՝ 48 գրադարան. այդ թվում՝ 33 քաղաքային, 15 մանկական:

2001թ. միջոցառումները հիմնականում նվիրված էին Քրիստոնեության պետական կրոն հռչակելու 1700-ամյակին:

Միջոցառումներ կազմակերպելիս գրադարանը հաճախ համագործակցում է պետական, հասարակական կազմակերպությունների, գրողների և արվեստագետների հետ: Նման միջոցառումներից հիշատակելի են Իրանահայ միության հետ կազմակերպված «Հայկական եկեղեցիները Իրանում», Հայաստանի կոմպոզիտորների միության հետ անցկացված «Վիվա Վերդի» խորագրով փառատոնը, Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան հայրապետական թեմի հետ Վարդանանց տոն միջոցառումը, «Հայկենք» կամերային երգչախմբի կատարմամբ հոգևոր երաժշտության համերգը, որն անցկացվեց կամերային երաժշտության տանը, Նարեկացու ծննդյան- 1050 և «Մատյան ողբերգության» պրեմի 1000-ամյակին նվիրված գրական-երաժշտական երեկոն և. Պալյանի մասնակցությամբ, Լիպարիտ Սարգսյանի, Սուրեն Վարդևանյանի, Ալեքսանդր Վարպետյանի գրքերի շնորհանդեսները և այլ բազմաթիվ միջոցառումներ:

Յուրաքանչյուր տարի անցկացվում են Ավ. Իսահակյանի ծննդյան և մահվան օրերին նվիրված միջոցառումներ, որոնք սկսվում են Վարպետի շիրիմի մոտ հարգանքի տուրքով և ավարտվում գրական-երաժշտական ցերեկույթներով: Գրադարանում ավանդույթ է դարձել Վարպետի անունը կրող երիտասարդ կատարողների ու ստեղծագործողների մրցույթները: Առաջին մրցույթը տեղի ունեցավ 1993թ.: Վերջին տարիներին ընդարձակվել են մրցույթի սահմանները: Կազմակերպվել է 7 հանրապետական մրցույթ արվեստի ու գրականության տարբեր ճյուղերի վերաբերյալ: Ավ. Իսահակյանի անվ. մրցույթներին մշտապես ներկա է եղել Վարպետի թոռը՝ Ավիկ Իսահակյանը:

Այս բոլոր միջոցառումներն ուղեկցվել են համապատասխան գրքային ցուցահանդեսներով:

ԳԿՀ-ի կենտրոնական գրադարանում գործում է երկու ստուդիա՝ գրական և պոեզիայի, ընթերցողական ակումբը և «Հայկենք» կամերային երգչախումբը: Բոլոր խմբերը գործում են հասարակական հիմունքներով:

ԳԿՀ-ի հիմնական ցուցանիշները 2001թ.

	Ֆոնդը	Ընթերցողները	Տացքը	Հաճախումները
Կենտրոնական գրադարան	526945	17195	255519	137114
Մասնաճյուղեր	272396	12374	187641	107343
Ընդամենը	799341	29569	443160	244457

Վերջին հինգ տարում ԳԿՀ-ի ֆոնդերը համալրվել են 15273 միավոր գրականությամբ:

ԿԳ-ի մատենագիտության բաժինը հանդիսանում է Երևանի մասնաճյուղ գրադարանների մատենագիտական աշխատանքների կազմակերպման կենտրոն:

Մատենագիտության բաժինը համալրում է իր ֆոնդը անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ: Բաժինն իր քարտարանները պարբերաբար համալրում է նոր նյութերով, կատարում ստուգում, գտում, ստեղծում նոր քարտարաններ, ընթերցողներին լիարժեք տեղեկատվությամբ ապահովելու համար:

Բաժինը վարում է գրավոր տեղեկանքների արխիվը, որը հանդիսանում է կարևոր տեղեկատուներից մեկը՝ ընթերցողների պահանջները բավարարելու գործում: Կազմվել են հիշարժան տարեթվերի վերաբերյալ ցանկեր, այդ թվում՝ Ավետիք Իսահակյան-125, Գարեգին Նժդեհ-115, Վազգեն Սարգսյան-40, Քրիստոնեության 1700-ամյակին նվիրված՝ «Նորան Լուսո», «Հայկական եկեղեցիներ», «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» և այլ միջոցառումներ: Հրատարակության է պատրաստվում Լիպարիտ Սարգսյանի կենսամատենագիտությունը:

Մատենագիտության բաժինը մեթոդական օգնություն է ցույց տալիս համայնքային և մասնաճյուղ գրադարաններին թեմատիկ քարտարանների կազմակերպման, գրավոր տեղեկանքների արխիվի կազմման և ինֆորմացիոն աշխատանքների ճիշտ կատարման նպատակով:

Մատենագիտության բաժնի աշխատողների մասնագիտական գիտելիքների բարձրացման նպատակով կազմակերպվում են սեմինար-պարապմունքներ, մատենագիտական կոնսուլտացիաներ, նոր ստացվող գրականության տեսություններ:

Կազմվել են ք մեթոդիստների այցելության գրաֆիկ և պարբերաբար ուսումնասիրել համայնքային գրադարանների աշխատանքները բոլոր օղակներում: Տեղերում նկատված թերությունների և վրիպումների համար արվել են կոնկրետ առաջարկներ և ուղարկվել համայնքների մշակութային բաժիններ՝ նրանց վերապահելով աշխատանքների կատարման ժամկետները:

1998թ. սկսած ԳԿՀ-ի մեթոդական բաժինը ամփոփում է գրադարանների վիճակագրական հաշվետվությունները և ներկայացնում համապատասխան գերատեսչություններին:

Համայնքային գրադարաններին օգնելու նպատակով կազմակերպվել են սեմինարներ և համակարգչային դասընթացներ: Առավել հետաքրքիր էր գործնական խաղը՝ գրադարանային գործի վերաբերյալ, որտեղ մշակված էին ժամանակակից թեմաներով տարբեր իրավիճակներ:

S. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Գրադարանի խմբագիր

ԱՐԱԳԱԾՈՆՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Աշտարակի գրադարանն ունի ութսուն տարվա պատմություն: 1922թ. մինչև 1930թ., գործել է որպես խրճիթ-ընթերցարան, որը տեղավորված է եղել մեծահարուստներից մեկի տան առաջին հարկում: Գրադարանը ձևավորվել է նվիրատվությունների միջոցով: 1926-28 թվականներին որպես խրճիթ-ընթերցարանի վարիչ աշխատել է աշտարակցի մեծանուն գիտնական, ակադեմիկոս Նորայր Սիսակյանը: 1930թ. Աշտարակի գործկոմն առանձին տարածք է տրամադրել գրադարանին և խրճիթ-ընթերցարանը վերակազմավորվել է որպես Աշտարակի հանրային գրադարան, հետագայում դարձել է շրջանային մեթոդական կենտրոն:

Մինչև 1975թ. շրջանային գրադարանը տեղավորված է եղել Աշտարակի շրջգործկոմի առաջին հարկում, 32 հազար գրքային ֆոնդով, իսկ 1975 թվականին տեղափոխվել է քաղաքի կենտրոնում գտնվող բնակելի շենքի տարածք, ուր և գտնվում է մինչև օրս՝ զբաղեցնելով 320 քմ տարածք:

1977թ. Աշտարակի շրջանային գրադարանի հիմքի վրա ստեղծվել է գրադարանների կենտրոնացված համակարգը՝ Աշտարակի ԳԿՀ-ն, որը դարձավ մեթոդական կենտրոն շրջանի բոլոր գրադարանների համար:

«ՀՀ տեղական ինքնակառավարման մասին» օրենքի ընդունումից ԳԿՀ-ները լուծարվեցին: 1997թ. գրադարանը կոչվում է Արագածոտն մարզի հանրապետական գրադարան: Նույն թվականին էլ այն անվանակոչվեց հայ անվանի գրող, ծնունդով աշտարակցի Վարդգես Պետրոսյանի անունով:

Գրադարան հաճախ են այցելել հայտնի մտավորականներ Վ. Ալազանը, Գ. Էմինը, Խ. Գյուլնազարյանը, Վ. Պետրոսյանը, Ժ. Ավետիսյանը, Ա. Ավագյանը, Ղ. Սիրունյանը, Ն. Սիսակյանը, Գ. Ղափանցյանը, Ս. Ներսիսյանը, Վ. Մարգունին և ուրիշներ:

Գրադարանի գրքային ֆոնդը կազմում է 61880 միավոր, գրքատացքը՝ 62593, ընթերցողների թիվը՝ 2411, հաճախումները՝ 31000: Վերջին հինգ տարիների ընթացքում այն համալրվել է ընդամենը 3567 միավոր գրականությամբ:

Գրադարանն ունի համահավաք, կարգային և այբբենական գրացուցակներ, բազմաթիվ քարտարաններ: Տեղեկատու աշխատանք կատարում են ընթերցողներին սպասարկող բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները: Մատենագիտական հարցումը ընդունվում է ցանկացած ձևով՝ բանավոր, գրավոր և հեռախոսով:

Նոր ստացված գրականության համար կազմվում են տեղեկագրեր, որոնց մեջ բացի գրքի նկարագրությունից, տրվում են նաև տվյալ գրքի անոտացիան և գտնվելու վայրը: Այդ տեղեկագրերն ուղարկվում են հիմնարկ ձեռնարկություններին և ուսումնական հաստատություններին:

Գիտության տարբեր բնագավառների վերաբերյալ լույս տեսած և նոր ստացված գրականության մասին անցկացվում են գրքի մատենագիտական տեսություններ, կազմակերպվում տարբեր թեմաներով ինֆորմացիայի օրեր:

Տարվա ընթացքում գրադարանը կազմել է «Մաղմոսավանք - ճարտարապետական համալիր» և Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին նվիրված «Մարզի պատմա-ճարտարապետական հուշարձանների տեղեկատու» բյուլետենները և հիշարժան տարեթվերի օրացույցը: Կազմվել են նաև «Շախմատի աշխարհի չեմպիոնները», «20-րդ դարի գրականության նոբելյան մրցանակակիրները», «Նշանավոր մարդկանց ասույթներ և աֆորիզմներ», «Աշտարակի նշանավոր մարդիկ» ալբոմը և այլն:

Գրադարանային օրենքի բացակայության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ ոչ հստակեցված հարաբերությունների պայմաններում մարզային գրադարանի աշխատանքային կապերը դեռևս թույլ են և բարելավելու կարիք ունեն:

Վերջին հինգ տարիների ընթացքում ուսումնասիրվել են մարզի գրադարանները: Ընդառաջ գնալով համայնքների խնդրանքին, ստուգման են ենթարկվել մի շարք գրադարաններ՝ կապված աշխատողների փոփոխությունների հետ: Արդյունքում համայնքը և նոր գրադարանավարը ընդունել են կենտրոնի մասնագետների կողմից վերստուգված ու համալրված գրքային ֆոնդերով գրադարաններ:

Գրադարանի տնօրինությունը, չնայած ֆինանսական դժվարություններին, որոշակի քայլեր ձեռնարկում է մարզի գրադարանների հետ նպատակային մասնագիտական, տեղեկատվական և մեթոդական աշխատանքներ տանելու ուղղությամբ:

1997-2001թթ. պարբերաբար սեմինարներ են անցկացվել մարզի Աշտարակի, Թալինի, Ապարանի ու Արագածի տարածաշրջաններում: Այդ խորհրդակցությունները տվել են դրական արդյունքներ: Մարզային հանրապետական գրադարանի դերը չի սահմանափակվում միայն գրքի սպասարկումով: Գրադարանը մշտապես համագործակցում է Արագածոտնի մարզպետարանի, Աշտարակի, Ապարանի, Թալինի քաղաքապետարանների հետ: Այսպես՝ մարզպետարանի լրատվության բաժնին պարբերաբար ինֆորմացիա է տրվում գրադարանի կատարած աշխատանքների մասին: Աշտարակի քաղաքապետարանը, հանձնիս քաղաքապետ Ա. Ղալաջյանի, աջակցում է գրադարանին՝ հովանավորելով միջոցառումների զգալի մասը:

Գրադարանի լավ գործընկերներից են՝ Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց դպրատունը, «Արագածոտն» պաշտոնաթերթը, կաբելային հեռուստատեսությունը:

1999թ. դպրատան նորաստեղծ գրադարանի համար մշակվել է 6000 կտոր գիրք և պարբերական, կազմվել է այբբենական գրացուցակ: Հետագայում այս համագործակցությունը շարունակվեց քրիստոնեության 1700-ամյակի կապակցությամբ գրադարանի նախաձեռնած միջոցառումներում, մասնավորապես «Արագածոտնի չորս կաթողիկոսները» խորագիրը կրող միջոցառման ընթացքում:

Արագածոտնի թեմի «Արագածոտն» պաշտոնաթերթում նյութեր են զետեղվում գրադարանի կատարած առավել նշանակալի աշխատանքների մասին:

Մի քանի տարի է, ինչ մարզային գրադարանը սերտ կապեր է պահպանում ԿՀԽ (Կանանց հանրապետական խորհրդի) և IFES (Ընտրական համակարգերի միջազգային կազմակերպության) աշտարակյան գրասենյակների հետ: 2001թ. Աշտարակում, Ապարանում, Թալինում, Ծաղկահովիտում անցկացված սեմինարները կազմակերպվել են IFES-ի հետ համատեղ: Վերջինիս կողմից «Բարի կամք, բարի գործ, բարի ելք» խորագրով միջոցառումներին ակտիվ մասնակցության համար գրադարանն արժանացել է վկայագրի: Մեր կողմից մասնագիտական օգնություն է տրվել այդ կազմակերպության նորաստեղծ գրադարանին:

Մարզային գրադարանում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ՝ «Արագածոտնի ստեղծագործական միտքը դարենուտին» շարքը գրողների, նկարիչների, քանդակագործների հետ հանդիպներով: Կցանկանայինը առանձնացնել «Քրիստոնյա Հայաստան-1700» հոբելյանին նվիրված միջոցառումները, «Իմաստասեր» ինտելեկտուալ խաղ-մրցույթը, Ս. Մ. Մաշտոց դպրատանը անցկացված հանրապետական սեմինարը, որին անդրադառնանք առավել հանգամանալիորեն:

1999թ. հուլիսին գրադարանի նախաձեռնությամբ կայացավ Արագածոտն մարզի գրադարանային աշխատողների սեմինար խորհրդակցությունը, որին ներկա էին ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի փոխնախարար Կ. Արիստակեսյանը, գրադարանային բաժնի պետ Ֆ. Խաչատրյանը, Ազգային գրադարանի տնօրեն Դ. Սարգսյանը, փոխտնօրեն Ռ. Ղազարյանը, Խնկո-Ապրր անվան մանկական գրադարանի փոխտնօրեն Ս. Հովսեփյանը, Արագածոտնի թեմի առաջնորդարանի ներկայացուցիչներ և գրեթե բոլոր մարզերի հանրապետական գրադարանների տնօրեններ:

Սեմինարի նպատակն էր մարզում գրադարանային գործի ներկա վիճակի, գրքային ֆոնդի հետ տարվող աշխատանքների, գրադարանային գործի հիմնական խնդիրների քննարկումը: Վերջին տարիներին, օրենսդրական դաշտի բացակայության պայմաններում, գրադարանային հարցերի կանոնակարգումը լուրջ դժվարությունների է հանդիպում: Սեմինարի ընթացքում անդրադարձ եղավ գյուղապետ-գրադարանավար փոխհարաբերության հարցերին, որը հաճախ սուր բնույթ է կրում: Օգտակար էր գյուղապետների մասնակցությունը քննարկումներին: Սեմինարը ներկայացուցչական և թեմատիկ առումով ստացավ հանրապետական հնչեղություն, որը ցավոք սրտի չկրեց շարունակական բնույթ:

Գրադարանի դերը և գրադարանավարի հեղինակությունը համայնքներում բարելավելու կարիք ունի: Այս առումով ցանկալի կլիներ ունենալ մասնագիտական պարբերական գրադարանային աշխատողներին համախմբելու նպատակով:

ԱԻՂԱ ՂԱԶԱՐՅԱՆ

**Գրադարանի տնօրեն
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ**

1975թ. հունվարին կենտրոնացվեց Հոկտեմբերյանի պետական մասսայական գրադարանների ցանցը: Այս համակարգը հնարավորություն տվեց Հոկտեմբերյանում ստեղծել գրադարանային ժամանակակից խոշոր համակարգ՝ 54 մասնաճյուղով: Համաձայն ՀՀ կառավարության 1997թ. ապրիլի 30-ի որոշման, մարզկենտրոններում տեղաբաշխված գրադարանային համակարգի կենտրոնական գրադարանները վերակազմավորվեցին որպես մարզային գրադարաններ: Արմավիրի մարզի ԳԿՀ-ի կենտրոնական գրադարանը վերանվանվեց Արմավիրի մարզային հանրապետական գրադարան:

1998թ. գրադարանը Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից ստացել է երկու համակարգիչ, որոնցով կազմվում է էլեկտրոնային քարտարան: Հինգ հազար անուն գիրք մուտքագրվել է: 2001 թվականին գրադարանը մասնակցելով «Եվրասիա» հիմնադրամի կողմից հայտարարված «Գրադարանները որպես հանրային հաղորդակցության կենտրոններ» մրցույթին, դրամաշնորհ է ստացել ձեռք բերելու համակարգիչներ և սարքավորումներ:

2001թ. հունվարի 1-ի դրությամբ գրադարանի գրքային ֆոնդը կազմում է 105534 միավոր, ընթերցողների քանակը՝ 6200, հաճախումները՝ 45400, տացքը՝ 154895: Ընթերցողների կազմը՝ մինչև 15 տարեկանը՝ 2850, 15-21 տ.՝ 1200, 21-ից բարձր՝ 2150:

Վերջին հինգ տարում համալրված գրականությունը

	Միավորների քանակը	գրքեր	բրոշյուրներ
1997	191	191	-
1998	3015	3015	-
1999	935	844	91
2000	223	123	100
2001	132	129	3
Ընդամենը	4496	4302	194

Տեղեկատու-մատենագիտական բաժինը կազմում է բազմաբնույթ տեղեկատվական ցանկեր: Ստեղծվել են հարուստ մատենագիտական տեղեկատու քարտարաններ՝ «Մասնագիտությունների քարտարան», «Մարզի գործարար մարդիկ», «Արմավիրի մարզ» և այլն, որոնք օգնում են ընթերցողներին տեղեկություններ ստանալու մարզում գտնվող հիմնարկ ձեռնարկությունների և գործարար մարդկանց մասին: Բաժինը կազմում է նոր ստացված գրականության ցանկեր և թեմատիկ թղթապանակներ, որոնք համալրվում են թերթերից և տպագիր այլ նյութերից:

Տեղական ՁԼՄ-ով տեղեկատվություն է տրվում գրադարանում ստացված նոր գրքերի մասին: 2001թ. գրադարանը կազմակերպել է մի շարք միջոցառումներ («Սուրբ ծնունդ», «Տեառն ընդառաջ», «Մայրության օր», «Ավետումը գրադարանում», «Քրիստոնեա Հայաստան», «Տարեցների օր», «Առնո Բաբաջանյան – 80», «Էներգետիկ օր», «Հանդիպում Արմավիրի պատվավոր քաղաքացիների հետ», «Արմավիրը 70 տարեկան է», «Զիվանի-155», «Նժդեհ- 115», «ՀՀ անկախության 10-ամյակը») լուսաբանվել են տեղական «Հայրենական» թերթում, «ԱՏ», «ՆՈՅ» հեռուստատեսությունում և տեղական ռադիոյով:

Մարզային գրադարանը հանդիսանում է մայր գրադարան և համագործակցում է մարզում գտնվող բոլոր գրադարանների հետ: Այդ նպատակով կիրառվում են գրադարանային աշխատանքի ժամանակակից մեթոդներ և ձևեր: Այսպես, տեղեկատու-մատենագիտական, ֆոնդերի պահպանման բաժինների կողմից կազմվում են բազմաբնույթ թեմաներով ցանկեր և քարտարաններ, որոնք ուղարկվում են գրադարաններին, այդ թվում՝ «Արարատ», «Արմավիր» համալսարաններին, դպրոցական, համայնքների, հասարակական կազմակերպությունների գրադարաններին:

Նկատի ունենալով ընթերցողների աճող պահանջները, գրադարանը տեղական հեռուստաընկերությունների հետ կազմակերպել է «Բաց լսարան» հաղորդաշարը, որը եթեր է հեռարձակվում ամիսը երկու անգամ: Այդ հաղորդաշարին ակտիվ

մասնակցություն են ցուցաբերում մարզի տարբեր հասարակական կազմակերպություններ և ճանաչված մասնագետներ:

Գրադարանն Արմավիրի մարզի տարբեր կազմակերպությունների հետ համատեղ անցկացրել է մի շարք միջոցառումներ «Տիգրան Մեծ» ռազմական վարժարանում և «Հովհաննես Բաղրամյան» գործնասում:

Գրադարանի տեսադաշտից դուրս չեն մնացել նաև թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների հետ տարվող աշխատանքները, որն իրականացվել է «Փաստաբանների միության», «Կարմիր Խաչի», ՆԳ վարչության անչափահասների տեսչության հետ:

ՄԱՐԻԵՏԱ ԱՄԻՐԻԱՆՅԱՆ

Գրադարանի տնօրեն

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Գեղարքունիքի մարզի հանրապետական գրադարանը ստեղծվել է 1883թ. համաքաղաքացի Ստեփան Բատիկյանի նախաձեռնությամբ՝ ընդամենը մի քանի կտոր գրքով: Ներկայումս գրադարանն ունի 68378 միավոր գրականություն: 1978թ. նախկին Կամոյի շրջանում ստեղծվեց գրադարանների կենտրոնացված համակարգ՝ 25 գրադարան-մասնաճյուղերով: Հետագայում ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը զուգընթաց փոխվեց գրադարանի կարգավիճակը՝ վերակազմակերպվելով որպես մարզային հանրապետական գրադարանի՝ ՀՀ Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության իրավասության ներքո:

1999թ. գրադարանը կրում է գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ Վարդգես Պետրոսյանի անունը: Վ. Պետրոսյանն իր աշխատանքային մկրտությունը ստացել է Գավառ քաղաքի՝ գործադիր կոմիտեում, որտեղ այժմ գործում է մեր գրադարանը:

Վերջին տարիներին գրադարանը հիմնականում համալրվում է նախարարության կենտրոնացված միջոցների և նվիրատվությունների հաշվին: Գրադարանի ընթերցողական կազմը ընդգրկում է բնակչության համարյա բոլոր խավերը՝ ծառայողներ, բանվորներ, ուսանողներ, հաշմանդամներ, փախստականներ և այլն:

Գրադարանի հիմնական ցուցանիշներն են՝

Ընթերցողների թիվ՝ 8808

Հաճախում՝ 48798

Գրքատացք՝ 153019

Մարզային գրադարանը տարածաշրջանի ամենախոշոր պետական գրադարանն է և պատասխանատու է գրադարանային գործում պետական քաղաքականության իրականացման համար:

Մարզային գրադարանն ունի 6 մասնագիտացված բաժին, որոնց գործունեությունը նպաստում է այդ քաղաքականության իրագործմանը:

Մարզային գրադարանը որպես հանրային հաղորդակցության կենտրոն, սերտ կապի մեջ է մարզպետարանի և քաղաքապետարանի լրատվական բաժինների հետ, նրանցից ստանում է լրատվական նորույթներ, քաղաքապետարանի ավագանու որոշումների մասին տեղեկություններ, որոնց հիման վրա կազմում է ինֆորմացիոն մեթոդական նյութեր՝ «Գրադարանները և համայնքային տեղեկատվությունը», «Ժամանակակից ռազմավարություն», «Համայնքային գրադարանների հետ տարվող աշխատանքները» և այլն: Բաժինը կազմում է նաև հիշարժան և նշանավոր տարելիցներին նվիրված հանձնարարական ցանկեր, որոնք ուղարկում է մշակույթի բաժիններին, մարզի տարածքի կենտրոնական, բուհական ու դպրոցական գրադարաններին: Այսպես՝ 2001թ-ին կազմվել է Գրիգոր Նարեկացուն, Գարեգին Նժդեհին, Պետրոս Դուրյանին, Միսաք Մեծարենցին, Հրաչյա Աճառյանին և Հայկական խաչքարերին նվիրված հանձնարարական ցանկեր:

Մարզային գրադարանը մեթոդական օգնություն է ցույց տալիս մարզի տարածքում գործող համայնքային, դպրոցական, բուհական գրադարաններին, տարածքի բնակչության գրադարանային սպասարկումն իրականացնելով միջգրադարանային աբոնեմենտի միջոցով:

Գրադարան-ընթերցող կապը սերտ պահելու, ընթերցողների գեղագիտական դաստիարակությանը նպաստելու նպատակով գրադարանը կազմակերպում է բազմաբովանդակ միջոցառումներ ընթերցողական տարբեր խմբերի համար: Այսպես՝ անցկացվել է «Ծովի կախարհ երաժիշտը» խորագրով ցերեկույթ նվիրված

ծովանկարիչ Յովհաննես Այվազովսկուն: Միջոցառումն ուղեկցվել է ինքնուստեղծագործողների գործերի ցուցադրմամբ:

«Ի խորոց սրտի խոսք Նարեկացու հետ» խորագիրը կրող ցերեկույթը նվիրված էր Քրիստոնեության 1700-ամյակին: Ցերեկույթն սկսվեց Սուրբ Մարիամ եկեղեցու սարկավազ Տեր Գագիկի Տերունական աղոթքով: Միջոցառմանը մասնակցում էին նաև բանաստեղծ Ն. Ղազարյանը, վաստակաշատ մանկավարժ Յր. Մադոյանը, վաստակավոր դերասանուհի Բ. Մնեյանը, երկրագիտական թանգարանի ավագ գիտաշխատող Յ. Յովեյանը և ուրիշներ: Նարեկացու ստեղծագործության մասին ելույթ ունեցավ բանասիրության դոկտոր Ազատ Եղիազարյանը: Միջոցառումն ընթանում էր հոգևոր երգերի ուղեկցությամբ: Վերջում ընթերցողները ծանոթացան գրքային ցուցահանդեսին, որը հարուստ նյութ էր պարունակում բանաստեղծի մասին:

«Հայ մտքի մարգարիտները» խորագրով միջոցառումը նվիրված էր Հայաստանում Քրիստոնեության ընդունման 1700-ամյակին: Ցերեկույթին բազմաթիվ հյուրերից բացի մասնակցում էր նաև Գեղարքունյաց թեմի Առաջնորդական տեղապահ Սիոն վարդապետ Ադամյանը, որն իր խոսքում մեծ կարևորություն տվեց աղոթքի դերին ու նշանակությանը: Ցերեկույթին մեծ շուք հաղորդեց գրադարանի երգչախմբի կատարումները՝ հոգևոր թեմաներով:

Հանդիսավորությամբ անցկացվեց գավառեցի լրագրող, բանաստեղծ Կ. Շխիկյանի «Մենախոսություն» գրքի շնորհանդեսը: Գրադարան էին եկել մտավորականներ, կրթության և մշակույթի բնագավառի աշխատողներ, հյուրեր երևանից՝ գրող Ա. Ավագյանը, բանաստեղծ Ն. Ղազարյանը, մարզպետարանից՝ Խ. Խլղաթյանը, Մ. Սարգսյանը: Առանձնապես հուզիչ էր բանաստեղծի կնոջ՝ Նելլիի ելույթը: Նա գրադարանին և ընթերցողներին նվիրեց բանաստեղծի գրքերից:

Միջոցառումները հաճախ կազմակերպվում են նաև գրադարանից դուրս: Այսպես՝ Գարեգին Նժդեհին նվիրված ցերեկույթն անցկացվեց Գավառի զինվորական տեղամասում, նպատակ ունենալով հայ զինվորներին հաղորդակից դարձնել Նժդեհի հայրենասիրական ոգուն ու գաղափարներին: Միջոցառմանը հրավիրված էին Աժ-ի պատգամավոր Հրանուշ Հակոբյանը, տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, այդ թվում նաև զինկոմիսարիատից: Մեծ հայրենասերի կյանքի և գործունեության մասին զեկուցեց պատմության ուսուցչուհի Սաթիկ Արզաքանյանը: Ելույթ ունեցավ նաև Յր. Հակոբյանը և նվերներ հանձնեց զինվորներին:

Նկար 3. 2001 օգոստոս, Խմբանկար՝ միջոցառման կազմակերպիչները զինվորական մասում

Հետաքրքիր ու բովանդակալից ցերեկույթ էր «Վաղամեռիկ հանճարը»՝ նվիրված Պետրոս Դուրյանի ծննդյան 150-ամյակին: Միջոցառումն անցկացվում էր երկրագիտական թանգարանի ընդարձակ դահլիճում, ուր հրավիրվել էին լրագրողներ, Գավառի Լևոն Քալանթարի անվան պետական թատրոնի դերասաններ: Գավառի պետական համալսարանի դասախոս Լուսինե Ղռեջյանը պատմեց բանաստեղծի կյանքի և ստեղծագործության մասին, որն ընդմիջվում էր ասումներով: Թատրոնի դերասանները խաղացին հատվածներ Դուրյանի դրամաներից:

Միջոցառումների թվարկումը կարելի է շարունակել:

Յուրաքանչյուր միջոցառում նկարահանվում և ցուցադրվում է մեր քաղաքի երկու հեռուստաալիքով: Դա նպաստում է, որ գրադարանի շուրջ հավաքվեն մտավորականներ, ինքնուստեղծագործողներ, բժիշկներ, նկարիչներ, գյուղատնտեսներ, որոնց բնութագրմամբ գրադարանը դարձել է յուրօրինակ «Վերնատուն»:

Մարզային գրադարանը սերտ համագործակցության մեջ է մարզպետարանի մշակույթի բաժնի հետ: Հաճախ են կազմակերպվում համատեղ միջոցառումներ: Մարզպետարանի մշակույթի բաժնի խորհրդի անդամ է նաև գրադարանի տնօրենը:

Մարզպետարանի մշակույթի բաժնի աշխատակիցների հետ լինում ենք համայնքային գրադարաններում, հանդիպում համայնքապետերի հետ, օգնում մասնագիտական խնդիրների լուծմանը: Կապ է պահպանվում նաև մարզի տարածքային կենտրոնական գրադարանների հետ:

Վերջին հինգ տարում գրադարանը ստացել է 2627 միավոր գրականություն: Ստացված գրականության մեջ քիչ են դասական հեղինակների և ուսումնական ծրագրային գրքերը, որոնց պահանջը մեծ է: Ցանկալի կլինի ունենալ փոխադրամիջոց՝ ստացված գրականությունը տեղափոխելու, ինչպես նաև կապը տարածքի համայնքային գրադարանների հետ պահելու համար: Մշտապես համագործակցում ենք Ազգային գրադարանի հետ՝ միջգրադարանային աբոնեմենտի (բաժնույթ) միջոցով ձեռք բերելով անհրաժեշտ գրականություն: Հաճախակի լինում ենք Խնկո Ապր անվան հանրապետական մանկական և ԱՎ. Իսահակյանի անվան գրադարաններում, նրանց աշխատանքային փորձին հաղորդակցվելու նպատակով:

Գրադարանն ունի նաև իր պորբլեմները՝ շենքային պայմանները չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին, չունենք դահլիճ, մանկական ընթերցասրահ, գրադարանային տեխնիկա:

Զնայած այս ամենին՝ լցված ենք լավատեսությամբ ու հավատով, որ կատարում ենք մեծ ու բարի գործ:

ՖՐՈՍՅԱ ՋԱՆՁՈՒՂԱԶՅԱՆ

Գրադարանի փոխտնօրեն

ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՂԱՐԱՆԸ

Ստեփան Զորյանի գրադարանի աղջիկն իր նախատիպն ունի: Դա Վիկտորյան է՝ «Գրադարանի աղջիկը» հանրահայտ պատմվածքի հերոսուհին: Իսկ նախատիպը դեռևս նախասովետական շրջանում ստեղծված Վանաձորի (Ղարաքիլիսա, Կիրովական) գրադարանի անխոնջ աշխատակից Վերգինե Մխիթարյանն է: Չէր սխալվել գրողը, երբ իր հերոսուհու իսկական նախատիպը փնտրել ու գտնել էր այս օջախում, ուր նվիրյալ, բանիմաց, տարիների փորձով ծանրաբեռ գրադարանավարները այսօր էլ հավատարիմ իրենց կոչմանը կրթում և դաստիարակում են քաղաքի բուհերի և այլ ուսումնական հաստատությունների ուսանողությանը:

Գրադարանը 1975թվից տեղավորված է տիպային հարմարավետ շենքում, որը կահավորված է հարմար ընթերցասեղաններով ու աթոռներով, գրացուցակային արկղերով: Գրադարանն ունի սպասարկմանը օժանդակող ժամանակակից տեխնիկական սարքեր ու միջոցներ:

**Նկար 4, Լոռու մարզի
հանրապետական գրադարանը**

Ընթերցողների պահանջների բավարարման նպատակով գրադարանն օգտագործել է դոնոր կազմակերպությունների հնարավորությունները: Այսպես՝ փոխտնօրեն Ֆ. Ջանջուղազյանը և մատենագիտության բաժնի վարիչ Լ. Այվազյանը հաղթող են ճանաչվել 1999թ. Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի հովանավորությամբ կազմակերպված «Գրադարանների ֆոնդերի նպատակային համալրում տեղեկատու մասնագիտական գրականությամբ» ծրագրի մրցույթում, որի շրջանակում ձեռք բերվեց 5 հազար ԱՄՆ դոլարի արժողությամբ գիտության տարբեր բնագավառների վերաբերյալ գիտական և ուսումնական գրականություն:

Վերջերս գրադարանի տնօրեն Լ. Մկրտչյանի ղեկավարությամբ (օգնական՝ Ֆ. Ջանջուղազյան), գրադարանը ստացավ «ԵՎրասիա» հիմնադրամի հայտարարած «Գրադարաններն իբրև հանրային հաղորդակցության կենտրոններ» մրցույթի դրամաշնորհը, որի շնորհիվ գրադարանը ձեռք բերեց համակարգային տեխնիկա (հինգ համակարգիչ, սքաներ, տպիչ, թվային կամերա, հեռուստացույց) և գրականություն: Ծրագրի իրականացումը կնպաստի Լոռու մարզում գրադարանների դերի և հեղինակության բարձրացմանը:

Գրադարանում կազմակերպվել են հրապարակային քննարկումներ հասարակական կյանքի, տնտեսության, սոցիալական վերափոխումների և ժողովրդավարության հարցերի շուրջ:

Ժողովրդավարության գործընթացին նպաստելու առումով անցկացվել են հանրամատչելի զեկուցումներ, կլոր սեղաններ, սեմինարներ, բանավեճեր, ուսանողական օրեր, հանդիպումներ իշխանության ներկայացուցիչների հետ, երկխոսություններ, որոնք մեծապես օգնել են տեղական իշխանության

գործունեությունը բնակչությանը ներկայացնելու գործում: Միջոցառումներից կարելի է առանձնացնել գրադարանում կազմակերպված հասարակական քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների, մտավորականների, լրագրողների հանդիպումը Լոռու մարզպետ Յենրիկ Քոչինյանի հետ: Հանդիպման ընթացքում մարզպետը հանգամանորեն ներկայացրեց 2001-2005 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի ընթացքը: Ըստ բնագավառների ներկայացնելով կատարած և նախատեսած աշխատանքները՝ պարոն Քոչինյանը նշեց, որ 2000-2001թթ. մարզում բացվել է 7500 աշխատատեղ, որից 800-ը՝ ժամանակավոր, սակայն գործազրկությունը համարվում է թիվ մեկ խնդիր: Վերջում հնչեցին տարաբնույթ հարցեր և առաջարկներ, որոնց մարզպետը տվեց սպառիչ պատասխաններ, հիմնական շեշտը դնելով էկոլոգիական և սոցիալական հիմնախնդիրների վրա:

Արտագնա սեմինարներ են կազմակերպվել մարզի գրադարաններում՝ Սպիտակում, Թումանյանում, Տաշիրում, Ստեփանավանում: Ձեռք բերված տեխնիկայի շնորհիվ գրադարանում ստեղծվել է տեղեկատվության վերլուծական կենտրոն, որտեղ ստացված նյութերը մշակվում և տրվում են հանրային օգտագործման:

Մշակութային այս օջախը ուշադրության է արժանացել նաև Մեծ Բրիտանիայի դեսպան Թիմոթի Ջոնսի կողմից: Այցելության ժամանակ դեսպանը գրադարանին նվիրեց համաշխարհային դասականների հարյուր հատորով մատենաշարը՝ անգլերեն լեզվով: Ամերիկացի գիտնական, պրոֆեսոր Դենի Բաթրֆիլդը նույնպես, շուրջ 4000 դոլարի արժողությամբ ռուս, արևմտաեվրոպական և ամերիկյան գրականությանը ներդրածի է նվիրել գրադարանին:

Գրադարանի համար հրատապ խնդիր է պարբերական մամուլի համալրումը: Թեև գրադարանը ստանում է «Գարուն», «Նոր- Դար», «Գործարար», «Հայաստանի Հանրապետություն», «Կրթություն», «Գրական հայրենիք», «Հայկական ժամանակ», «Օրինաց երկիր», «Լոռու մարզ» պարբերականները, սակայն դարձյալ բավարար չէ:

Վերջին հինգ տարիներին գրադարանի համալրման հիմնական աղբյուրները ՀՀ Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությունն ու նվիրատվություններն են: Արդյունքում ստացել ենք 5660 միավոր գիրք:

Գրադարանն ունի հարուստ տեղեկատու-մատենագիտական ապարատ: Պարբերաբար կազմակերպվում են գրքային ցուցահանդեսներ, կազմվում են հանձնարարական ցանկեր, անցկացվում միջոցառումներ, որոնցից հատկանշական են «Գարեգին Նժդեհ 115», «Հովհաննես Թումանյան», «Սարմեն 100», «Գրիգոր Հախինյան - հուշ ցերեկույթ» և այլն:

Տարվա աշխատանքների արդյունքում գրադարանն ունի 6358 ընթերցող, 100571 տաքք, 79396 հաճախում:

Գրադարանի աշխատանքներին խոչընդոտում է հատկապես ջեռուցման բացակայությունը, որը բացասաբար է անդրադառնում գրադարանային հավաքածուի պահպանության, ինչպես նաև ընթերցողների ակտիվության վրա:

ԺԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Գրադարանի տնօրեն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Գրադարանը ստեղծվել է 1930-ական թթ. ընդամենը մի քանի հարյուր կտոր գրականության ֆոնդով: 1965թ., երբ Հրազդան շրջկենտրոնը հանրապետական ենթակայության քաղաքի կարգավիճակ ստացավ՝ գրադարանը դարձավ քաղաքային: 1965-1979թթ. Հրազդանի քաղաքային գրադարանը բուռն ու աշխույժ առօրյա է ունեցել: Այս ընթացքում արագ տեմպերով աճում է գրադարանի ֆոնդը, ընթերցասրահը համալրվում բազմաճյուղի պարբերականներով: 1979թ.-ին կազմավորվեց Հրազդանի շրջանի գրադարանների կենտրոնացված համակարգը: Քաղաքային գրադարանը դարձավ ԳԿՀ-ի կենտրոնական գրադարան: «ՀՀ տեղական ինքնակառավարված մասին» օրենքի ընդունումից հետո, 1997թ.ի հունիսից կենտրոնական գրադարանը վերակազմավորվեց Կոտայքի մարզի հանրապետական գրադարանի:

Մարզային գրադարանը տեղավորված է բնակելի շենքի առաջին հարկում, զբաղեցնում է 570 քմ տարածք:

2001թ. գրադարանն ունեցել է.

- 4200 ընթերցող
- 68.816 միավոր գիրք
- 100.500 տացք
- 67.000 հաճախում

Ընթերցողներից 1200-ն ունի բարձրագույն և միջնակարգ կրթություն, մինչև 15 տարեկան երեխաների թիվը՝ 1500 է: Ընթերցողների սպասարկումը կատարվում է արժեքների և ընթերցասրահի միջոցով: Ունի բարեկարգ գրապահոցներ, առանձին ընթերցասրահ:

1999թ. ամիսը երկու անգամ հրատարակում է Կոտայքի մարզի հանրապետական գրադարանի «Վերնատուն» մշակութային լրատուն, որտեղ զետեղվում են մարզի մշակութային նորույթները:

Այսօրվա տարեց և միջին տարիքի շատ ընթերցողներ են հիշում ընթերցասրահի վարիչ՝ Ֆեյյա Նազարյանի կազմակերպած միջոցառումներն ու հանդիպումները գրականության և արվեստի նշանավոր մարդկանց հետ: Մինչ օրս հիշվում են հանդիպումները Պ. Սևակի, Վ. Պետրոսյանի, Ա. Սահակյանի, Հ. Սահյանի, Մ. Սարգսյանի, Ս. Մուրադյանի, Շ. Թաթևյանի, Մ. Կոչյունի, Ս. Խանգաղյանի, Ս. Կապուտիկյանի, Պ. Ջեյթունցյանի, Ա. Քալանթարյանի և այլոց հետ:

Գրադարանն այսօր ջանում է հարազատ մնալ իր լավագույն ավանդույթներին: Ամեն տարի նշվում են Սուրբ Ծնունդը և Ամանորը, Անկախության օրը, Մայիսի 28-ը, Սեպտեմբերի 21-ը և այլ տոներ:

Վերջին տարիներին գրադարանների գործունեության աշխուժացմանը մեծապես նպաստում է Հայկական գրադարանային միությունը, որի ջանքերով արվում է հնարավոր ամեն ինչ գրադարանային գործի և գրադարանավարի դերի բարձրացման համար:

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈՔՅԱՆ

Հայաստանի Ազգային գրադարանի
առաջատար մասնագետ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Գյումրին ինքնատիպ մշակութային քաղաք է, հայտնի նշանավոր գործիչներով և մշակութային օջախներով: Դրանց մեջ իրենց ուրույն տեղն ունեն գրադարանները:

Շիրակի մարզի Ավ. Իսահակյանի անվան հանրապետական գրադարանի ֆոնդի համար հիմք է հանդիսացել 1899-1900թթ.-ին Ալեքսանդրապոլում գործող մասնավոր գրադարանի հավաքածուն: Քաղաքում գործող գավառային ուսումնարանի շենքում գավառապետի հրամանով բացվում է գրադարան, որը 1924թ.-ին Հայաստանի ժողովմիտրիդի հրամանով հաստատվում է որպես պետական գրադարան: 1945թ. Վարպետի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ գրադարանը անվանակոչվել է Ավ. Իսահակյանի անունով: Գրադարանն արժանացել է բազմաթիվ պարգևների՝ 1960թ.-ին

ԽՍՄԿ կուլտուրայի մինիստրության պատվոգրով, 1963թ.-ին «Գերազանցիկ գրադարան» կոչմանը:

Սակայն 1988թ. դեկտեմբերի 7-ի աշխարհացունց երկրաշարժից տուժեց գրադարանային համակարգը: Անմասն չմնաց նաև Շիրակի մարզի Ավ. Իսահակյանի անվան հանրապետական գրադարանը: 1989թ. ամբողջ ֆոնդը տեղավորվեց Անիի շրջանի գյուղերում: Այն բանից հետո, երբ գրադարանից խլեցին նրա սեփական շենքը 1996թ.-ից գրադարանն ապաստան գտավ քաղաքի Թբիլիսյան խճուղու 56 հասցեում:

Գրադարանն ունի 10 բաժին: Բոլոր բաժինները՝ բացառությամբ արվեստի բաժնի, տեղավորված են բնակելի շենքի առաջին հարկում՝ խիստ աննպաստ պայմաններում:

Արվեստի բաժինը գտնվում է Արվեստի ինստիտուտի շենքում: Սոս 4000 կտոր գրականությունն ընդգրկում է արվեստի բոլոր բնագավառները: Բաժինը սպասարկում է քաղաքի Գեղարվեստի կենտրոնին, նկարչական դպրոցին, Վ. Աճեմյանի անվան թատրոնի անձնակազմին և արվեստասեր հասարակայնությանը: 1988թ.-ից ի վեր բաժինը պարբերական մամուլ չի ստանում:

Աղետի գոտու երեխաների դաստիարակման, գեղարվեստական ճաշակի զարգացման գործում անչափ կարևորվում է մանկական բաժնի աշխատանքը: Պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ, խաղ-վիկտորինաներ, գրքի քննարկումներ անվանի մարդկանց հետ:

Այս աշխատանքների շնորհիվ ամրապնդվում է ընթերցողի և գրադարանի կապը:

Մատենագիտության բաժինը, որ նախկինում տարեկան ստացել է 150-160 անուն թերթ և ամսագիր, այսօր ստանում է ընդամենը մի քանի անուն թերթ: Դրանք են՝ «Կանչ», «Ցայգ», «Ազգ», «Երկիր» պարբերականները, որոնք դժվար թե բավարար տեղեկատվության աղբյուր համարվեն:

Սակայն գրադարանի բարեխիղճ աշխատողների շնորհիվ ոչ մի ընթերցող դժգոհ չի հեռանում գրադարանից: Օրական մատենագիտության բաժնից օգտվում են 50-60 ընթերցողներ, որոնց մեծ մասը աշակերտներ, ուսանողներ և մանկավարժներ են: Մատենագիտության բաժնի վարիչ Սիմելա Սավոյանի ջանքերով կազմվել է «Հիշարժան տարեթվերի օրացույցը», որի խմբագիրն է վաստակավոր գրադարանավար, փոխտնօրեն Լաուրա Մակարյանը: Գրադարանի մատենագիտության բաժնում շատ հաճախ վերլուծական նկարագրությունը կատարվում է աշխատակիցների և այլ անհատների միջոցով ձեռք բերված պարբերական մամուլի միջոցով: Այս բաժնում կազմվում են նաև տարբեր քարտարաններ, որոնք հեշտացնում են ընթերցողների սպասարկումը: Այսպես օրինակ՝ «Անվանի մարդկանց մահվան օրերի քարտարանը»:

Գրադարանի միջոցառումները գրեթե միշտ ընթանում են Գյումրիի լեցուն դահլիճներում և իրենց դրական արձագանքն են գտնում մամուլի էջերում:

Գրադարանի ֆոնդի և գույքի ձեռք բերման գործում նշանակալի է Բաց Հասարակության ինստիտուտի հիմնադրամի ներդրումը: ԲՀԻ օգնությամբ ձեռք բերված երեք համակարգիչները նախատեսված են ֆոնդի մուտքագրման, մատենագիտական տեղեկատվության և անցկացվող տարբեր միջոցառումների ձևավորման աշխատանքների համար:

Գրադարանի ֆոնդի համալրման գործում այսօր անուրանալի է նվիրատուների դերը:

Շիրակի մարզի Ավ. Իսահակյանի անվան հանրապետական գրադարանի ֆոնդը կազմում է 390315 միավոր, մոտ 70000 անուն:

Գրադարանն ունի չլուծված հիմնախնդիրներ: Ամենակարևորը՝ առ այսօր լուծված չէ շենքի հարցը: Հուսանք, որ այս հրապարակումն ինչ-որ կերպ կնպաստի խնդրի լուծմանը:

ՍՈՒՍԱՆԱ ՄԻՆԱՍՅԱՆ

Գրադարանի տնօրեն

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱՊԵՏԱՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Սյունիքի մարզի հանրապետական գրադարանը գտնվում է Կապան քաղաքում, բնակելի մի քանի շենքերի առաջին հարկերում՝ զբաղեցնելով 562 քմ տարածք: Սյունիքի մարզը կազմավորվել է 1996թ. իր մեջ ներառելով Կապանի, Գորիսի, Սիսիանի, Մեղրու տարածքները՝ Կապան կենտրոնով: Մարզի տարածքը՝ 4475քկմ, բնակչության թիվը՝ 163. 2 հազար, համայնքների թիվը՝ 113, որից 7-ը՝ քաղաքային:

20-րդ դարի 20-ական թթ. Կապանում գործում էր ընդամենը մեկ խրճիթ-ընթերցարան, 250 միավոր գրականությամբ, որի աշխատանքները վարում էր խանութպան Բախշի Յովհաննիսյանը:

1934 թ. եղած և հավաքովի ֆոնդի վրա հիմնադրվեց առաջին պետական թիվ 1 գրադարանը: Գրադարանավար նշանակվեց Յերսեսյա Սարգսյանը:

1980թ. նախկին Կապանի շրջանի 70 գրադարանները միավորվեցին և ստեղծվեց գրադարանների կենտրոնացված համակարգ (ԳԿՀ)՝ իր կենտրոնական գրադարանով: Հետագայում մասնաճյուղերի թիվը հասավ 80-ի:

1997թ. գրադարան-մասնաճյուղերը տրվեցին համապատասխան քաղաքային և գյուղական համայնքներին, իսկ ԳԿՀ-ի ԿԳ-ն վերանվանվեց Սյունիքի մարզային հանրապետական գրադարան:

Գրադարանը որպես մեթոդ կենտրոն հաճախ է հանդիպում, խոչընդոտների: Համայնքային գրադարանները գտնվում են մարզկենտրոնից մեծ հեռավորության վրա: Գրադարանները չունեն հեռախոսային կապ, նրանց չի տրվում գործուղման ծախսեր: Նոր ղեկավարներից շատերը լավ չգիտեն գրադարանների պրոբլեմները, որի հետևանքով էլ շատ աշխատանքներ ձախողվում են: Չնայած դրան, մեր գրադարանի աշխատողները եղել են տարածաշրջանի՝ Գորիսի, Մեղրու, Ագարակի գրադարաններում, կազմակերպել խորհրդակցություններ: Կապն ավելի սերտ է Կապանի գյուղական համայնքների ղեկավարների և գրադարանների հետ: Նրանց համար կազմակերպվել են սեմինար խորհրդակցություններ, գործնական պարապմունքներ: Նոր աշխատողների համար կազմակերպվել են գործնական դասեր, նրանց ուսուցանելով գրադարանային աշխատանքի մեթոդիկան: Գործում է ներգրադարանային արձեմենտը: Կազմակերպած միջոցառումներին մասնակցում են գրադարանավարները և համայնքի ղեկավարները:

Հինգ տարվա ընթացքում մարզային գրադարանի գրքային ֆոնդը համալրվել է 5620 միավորով: Ֆոնդը հիմնականում համալրվել է անհատ մարդկանց և կազմակերպությունների կողմից (Վաչե և Թամար Մանուկեան բարեգործական հիմնադրամից, ՅՈՒՆԻՍԵՖ-ից, Ազգային գրադարանից, ԲՀԻ-ի օժանդակության հիմնադրամից, Երևանի Ավ. Իսահակյանի անվան քաղաքային կենտրոնական գրադարանից, Սահմանադրական դատարանից, Սյունիքի մարզապետարանից, ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությունից, Վ. Ոսկանյանից, Զ. Մատինյանից, Սբ. Մաշտոց եկեղեցու քահանա տեր Սահակից:) Սակայն այս ամենը չի կարող բավարարել այսօրվա խստապահանջ ընթերցողին:

Եվրասիա հիմնադրամի կողմից «Գրադարաններն իբրև հանրային հաղորդակցության կենտրոններ» ծրագրի աշխատանքների իրագործումը որոշակի ակտիվություն է առաջացրել ընթերցողների շրջանում, որը նպաստել է նրանց հաճախումների աճին:

Անհրաժեշտ ենք գտնում մարզում հրատարակվող բոլոր տիպի տպագիր երկերի անվճար մուտքը գրադարան, որը կնպաստի երկրագիտական-մատենագիտական աշխատանքների բարելավմանը:

Մատենագիտական աշխատանքների կազմակերպմանը օգնում է տեղեկատու ֆոնդն ու պարբերական մամուլի առկայությունը: Բաժնի թեմատիկ քարտարանները թարմացվել են նոր նյութերով: Կազմվել են քարտարաններ և հանձնարարական ցանկեր նվիրված տարվա նշանավոր և հիշարժան տարեթվերին: Բաժինն ունի լավ ձևավորված ավլբոմներ՝ «Մեր անվանի հայրենակիցները», «Կապանը երեկ և այսօր», «Սուրբ պայքարի նվիրյալները»:

Կազմվել են «Հայաստանի մարզերն ու մարզկենտրոնները», «Սյունիքի մարզպետարանի կառուցվածքը», «Սյունիքի մարզի գրադարանների ցանցը» սխեմաներ: Բաժինը բավարարել է ընթերցողների 147 բանավոր և 10 գրավոր պահանջները:

Կազմակերպվել և անցկացվել է մասնագետի և ինֆորմացիայի օրեր, հանդիպումներ լավագույն մասնագետների և գործարարների հետ:

Տարվա ընթացքում կազմակերպվել են խոշոր միջոցառումներ՝ նշանավոր տարելիցներին նվիրված: Մեծարվել են նաև պատերազմի վետերաններն ու ազգային ազատագրական շարժման մասնակիցները, կազմակերպվել են զոհված ազատամարտիկներին նվիրված հուշ-ցերեկույթներ: Տարվա ընթացքում կազմակերպվել են տասնյակ միջոցառումներ:

Սպասարկման բաժնում հանդիպում էր կազմակերպվել Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու քահանա տեր Սահակի հետ: Նա ներկայացրեց հայ եկեղեցու տոները: Վերջում տեր Սահակը գրադարանին նվիրեց 20 գիրք:

Միջոցառումների շարք է նվիրվել Սյունաց երկրի սպարապետ Գարեգին Նժդեհի ծննդյան 115 ամյակին:

- Լեռնահայաստանի հերոսամարտի անվեհեր հերոսը
- Սյունաց քաջագուն հրամանատարը
- Դավիթ Բեկի սրի պատվավոր կրողը
- Ջանգեզուրի փրկիչը
- Սյունաց երկրի սպարապետը
- Սյունիքը թշնամու գերեզման...

Հաջողված միջոցառում էր Կապանի երկրագիտական թանգարանում բացված «Հավատ և ժառանգություն» ցուցահանդեսը, որը ուղեկցվեց ցերեկույթով: Ցուցահանդեսի մի ամբողջ բաժին նվիրված էր Գ. Նժդեհին: Նրա մեծադիր նկարի շուրջ ցուցադրված էր նյութեր նրա սիրազորությունների մասին, անձնական իրեր, ժամանակակիցների հուշեր:

Ընթերցողների որոշակի ակտիվություն նկատվեց հոկտեմբեր ամսից սկսած՝ «Գրադարաններն իբրև հանրային հաղորդակցության կենտրոններ» ծրագրի գործարկման շրջանակներում կազմակերպված միջոցառումների ընթացքում: Դրանք են՝

- Հայ կնոջ դերը հասարակության և պետության մեջ
- Հանրային հաղորդակցության կենտրոնի դերը ժողովրդավարության զարգացման գործում
- Անչափահասների թմրամոլություն և մարմնավաճառություն
- Տեղական ինքնակառավարման մարմինները և ժողովրդավարությունը

«Եվրասիա» հիմնադրամի միջոցով ստացված համակարգչային տեխնիկան առաջիկայում գրադարանին հնարավորություն կտա բարելավելու ընթերցողների սպասարկումը, այն համապատասխանեցնելով ժամանակակից պահանջներին:

ՈՒՋԱ ԼԵՎՈՆՅԱՆ
Գրադարանի տնօրեն

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Եղեգնաձորը պատմական Վայոց Ձոր գավառի մի մասն է: Այն առաջին անգամ հիշատակել է Եղիշեն: Վայոց Ձորում գործել է հայ մշակույթի անգուգական օջախներից մեկը՝ Գլաձորի Համալսարանը, որը ժամանակին համարվել է «Երկրորդ Աթենք պանծալի»:

Անցյալում Վայոց Ձորում եղած հատուկեմտ գրադարաններ գործել են եկեղեցիներում և մատչելի էին միայն հոգևոր դասին:

1922թ. շրջանի մի շարք գյուղերում բացվեցին առաջին խրճիթ ընթերցարանները, որոնք հաստիքային աշխատողներ չունեին: 1922թ. հուլիսին խրճիթ ընթերցարան բացվեց շրջկենտրոնում, որի առաջին տնօրենը դարձավ կոմերիտական Մկրտիչ Սարգսի Հովհաննիսյանը, թերի միջնակարգ կրթությամբ: 1925թ. խրճիթ ընթերցարանի բազայի հիման վրա ստեղծվեց գրադարան, որի վարիչը դարձավ Արշակ Շուշանյանը: 1946թ. գրքային ֆոնդը կազմում էր 1700 միավոր:

1977թ. հունվարի 1-ից ստեղծվեց գրադարանների կենտրոնացված համակարգ(ԳԿՀ), 184,928 միավոր միասնական ֆոնդով և 32 մասնաճյուղ գրադարաններով: Նախկին շրջանային և մանկական գրադարանների բազայի վրա ստեղծվեց Եղեգնաձորի կենտրոնական գրադարանը, որն ուներ 6 մասնագիտացված բաժին: 1997թ. մասնաճյուղ գրադարանները հանձնվեցին գյուղական համայնքների տնօրինությանը: Եղեգնաձորի կենտրոնական գրադարանը դարձավ Վայոց Ձոր մարզի հանրապետական գրադարան, որը ունի 5 բաժին՝ սպասարկման, մանկական, մեթոդ-մատենագիտական, մշակման և համալրման, միասնական ֆոնդի կազմակերպման պահպանման և օգտագործման:

2002թ. հունվարի 1-ի դրությամբ Վայոց Ձոր մարզի հանրապետական գրադարանի ֆոնդը կազմում է.

55.467 միավոր, այդ թվում՝ մանկական –	15.295	
Ընթերցողների թիվը –	2603	203
Գրքատացքը -	53299	29975
Հաճախումը -	39343	18933
Միջոցառումները -	23	13

Գիրք-ընթերցող կապը ամրապնդելու նպատակով կազմակերպվում են տարբեր միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, ցերեկույթներ, ընթերցողական կոնֆերանսներ, գրույցներ և այլն:

Վերջին շրջանում գրադարանում կազմակերպված նշանակալի միջոցառումներից է Քրիստոնեության 1700- ամյակին նվիրված ցուցահանդեսը և ընթերցողական կոնֆերանսը:

Քրիստոնեության 1700-ամյակին նվիրված ցուցահանդեսն ընդգրկում էր «Քրիստոնյա Հայաստան 301-303», «Հայ պատմիչներ», «Հայկական մանրանկարչություն», «Եկեղեցին կրթության օջախ», «Քեզ, քրիստոնյա Հայաստան», «Մեր շնորհալիները», «Հայաստանի Հանրապետության 10 - ամյակ» թեմաները:

Ընթերցողական կոնֆերանսում քննարկվեցին հարցեր նվիրված քրիստոնեության ծագմանն ու տարածմանը, եկեղեցու հոգևոր դերին, աղանդների ներթափանցմանը Հայաստան և այլն:

Գրադարանի մեթոդա-մատենագիտական բաժնի տեղեկատու մատենագիտական ապարատը կազմված է տեղեկատու և մատենագիտական հրատարակությունների ֆոնդից, տարբեր քարտարաններից և տրված գրավոր տեղեկանքների արխիվից:

Բաժինը մեթոդական օգնություն է ցույց տալիս մարզի բոլոր գրադարաններին, ամփոփում մարզի տարածքում գործող գրադարանների հիմնական ցուցանիշները, պատասխանատվություն կրում այդ արդյունքները հանրապետական համապատասխան կառույցներին ներկայացնելու համար:

Բաժինն ունի Եղեգնաձորի երկրագիտական և այլ թեմատիկ քարտարաններ՝ «Քրիստոնյա Հայաստան», «Անկախության օրը», «Նարեկացու 1000-ամյակ», «ՀՀ սահմանադրություն» խորագրերով:

Բնակչության գրադարանային պահանջների առավելագույն բավարարման նպատակով իրականացվում է սպասարկում միջգրադարանային բաժնույթի ծառայության միջոցով՝ համագործակցելով Ազգային գրադարանի և մասնաճյուղ գրադարանների հետ:

Գրադարանի աշխատանքներին շատ են օգնում է Ազգային գրադարանի կողմից ուղարկված ցանկերը և հիշարժան տարեթվերի օրացույցը:

Համայնքային գրադարաններն ունեն մի շարք դժվարություններ: Համայնքներից շատերը չեն կարողանում վարձատրել աշխատողներին և գրադարանը համալրել նոր գրականությամբ: Համայնքային գրադարանների կապը մարզային հանրապետական գրադարանի հետ լիարժեք չէ:

Մարզային գրադարանը գրականություն հիմնականում ստանում է նախարարությունից: Գրադարանը չի կարողանում նույնիսկ տեղական թերթեր ստանալ:

Վերջին հինգ տարվա ընթացքում մարզային գրադարանը ստացել է 2540 միավոր գրականություն:

1997թ.	190
1998թ.	780
1999թ.	630
2000թ.	226
2001թ.	714

Ստացած գրականությունը չի բավարարում ընթերցողների պահանջները, զգացվում է մասնագիտական գրականության խիստ պակաս: Կան դժվարություններ տնտեսական ծախսերի հարցում: Ձմռանը գրադարանը նորմալ չի ջեռուցվում, որն ավելի է դժվարացնում աշխատանքը ընթերցողների հետ: Ցածր է գրադարանային աշխատողների աշխատավարձը: Խնդիրներ կան նաև գրադարանավարի և ընթերցողների միջև: Որոշ ընթերցողներ հաճախ չեն վերադարձնում սպասարկված գրականությունը: Խնդիրը կարգավորելու համար նպատակահարմար է հատուկ կարգ սահմանել:

**ՍԱՀԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գրադարանի տնօրեն**

ՏԱՎՈՒՇԻ ՍԱՐԶԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Տավուշի մարզի հանրապետական գրադարանը գտնվում է Իջևանում և գործում է ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության համակարգում:

Վերջին հինգ տարում գրադարանը ստացել է 2451 միավոր գրականություն: 1997թ.՝ չի համալրվել: 1998թ.՝ 2001 միավոր, 1999թ.՝ 248, 2000թ.՝ 50, 2001թ.՝ 152 միավոր: Գրադարանը հիմնականում համալրվում է նվիրատվությունների և վերջին մեկ տարում նաև քաղաքի լուծարված գրադարանների գրքային ֆոնդերի հաշվին: Գրադարանի գրքային ֆոնդը 2001թ. կազմել է 36449 միավոր, ընթերցողների քանակը՝ 2618, հաճախումները՝ 30289, տացքը՝ 42197, միջին հաճախումը՝ 11.5, միջին ընթերցանությունը՝ 16.1:

2001թ. հորեյանական էր: Գրեթե ամեն ամիս Քրիստոնեության 1700 ամյակին նվիրված շարք է եղել՝ թեմատիկ զրույցներ, մեկնություններ, հոգևոր ընթերցումներ: Այս շարքում առանձնահատուկ էր օգոստոսին գրադարանում կազմակերպված «Մեր հայրերի

անցած ճամփան» մեծ միջոցառումը: Հոգևոր երգչախումբը, (գեղ. դեկ. Վ. Չիբուխչյան), «Հայր մեր»-ով ազդարարեց միջոցառման սկիզբը, որից հետո սարկավագ Հովհ. Խարազյանի քարոզի սրբազան խորհուրդները նոր հավատով լցրեցին բոլորի հոգիները: Այնուհետև ելույթ ունեցան մասնակիցները:

Հիշատակելի են նաև «Պոեզիայի ժամ», «Ավետիք Իսահակյանի պոեզիան» միջոցառումները, «Հայ քնարերգության Վահագնը»՝ «Պետրոս Դուրյան- 150» գրական երեկոն, Անրի Վերնոյի «Մայրիկ» գրքի քննարկումը, Գարեգին Նժդեհի 115- ամյակին նվիրված «Հանճարեղ հայորդին», Ամենայն հայոց բանաստեղծ՝ Հովհ. Թումանյան և զորավար Անդրանիկին նվիրված ցերեկույթը և այլ միջոցառումներ ու քննարկումներ:

2001թ. գրադարանում կազմակերպվել են հետևյալ միջոցառումները. «Քրիստոնեություն- 1700», «Առնո Բաբաջանյան- 80», «Պետրոս Դուրյան- 150», «Հրաչյա Աճառյան- 125», «Ջեյ Լոնդոն- 115» և այլն:

Քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի առթիվ ստեղծվել է քարտարան՝ նվիրված մարզի տարածքում գտնվող վանքերին ու եկեղեցիներին:

Սակայն գրադարանի տեղեկատու-մատենագիտական ապարատը այսօրվա ընթերցողին լիարժեք չի բավարարում:

Մշակույթի այս օջախն ունի հարուստ ավանդույթներ և համագործակցում է քաղաքապետարանի ու տարբեր շահագրգիռ կազմակերպությունների հետ: Արդեն երկրորդ տարին է, որ գրադարանը մասնակցում է քաղաքապետարանի նախաձեռնած Ամանորի, Սուրբ Ծննդյան և Վարդավառի տոնակատարություններին:

Վերջերս քույր քաղաքներ Իջևան-Վալանս (Ֆրանսիա) բարեկամական այցելության շրջանակներում Վալանսից Իջևան ժամանեց ֆրանսիացիների մի մեծ խումբ, որը քաղաքապետարանի նախաձեռնությամբ այցելեց գրադարան: Ֆրանսիացիները մասնակցեցին Ա. Վերնոյի «Մայրիկ» գրքի քննարկմանը: Միջոցառման նպատակն էր նաև մեր երախտագիտությունը հայտնել ֆրանսիայի կառավարությանը և ժողովրդին՝ Ֆրանսիայի սենատի կողմից հայոց ցեղասպանության ընդունման առիթով:

Գրադարանը համագործակցում է Իջևանում գործող մի շարք ուսումնական հաստատությունների՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի և «Գալիք» կրթահամալիրի հետ: «Գալիք» կրթահամալիրում գրադարանն ունի տաքսակետ: Համագործակցում ենք նաև Իջևանի զորամասի գրադարանի հետ, զինվորներին տրամադրելով տեղեկատվություն ու գրականություն:

Գրադարանին հուզող հիմնահարցերը շատ են: Գրադարանը չունի ընթերցասրահ, չենքը վթարային է՝ ունի հիմնական վերանորոգման խիստ կարիք: Չունենք համակարգիչ, հեռախոսակապ, անհրաժեշտ գրադարանային տեխնիկա, փորձի փոխանակման հնարավորություն:

ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐ

ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳՈՎ

Գրադարանավարի մասնագիտական վարքականոններն ընդունված են աշխարհի բազմաթիվ երկրներում: ԻՖԼԱ ինտերնետային էջում տեղադրված է տարբեր երկրների գրադարանավարի մասնագիտական վարքականոնը (տես <http://www.faiife.dk/ethics>): Որոշ վարքականոններ սեղմ են, լակոնիկ: Մյուսները մանրամասն են ու նկարագրական: Այնուամենայնիվ, որքան էլ իրարից տարբեր, դրանցում կան որոշակի ընդհանրություններ: Յուրաքանչյուր երկրի գրադարանային մասնագիտական կազմակերպության մշակած վարքականոնն անպայման տալիս է որոշ սկզբունքային հարցերի պատասխանը, այդ թվում՝ տեղեկատվության ազատության և ընթերցողի ազատ ընտրության իրավունքը, գրադարանների պայքարը գրաքննության դրսևորումների դեմ, մասնագիտական համերաշխության պահպանումը, գրադարանավարի մասնագիտական գիտելիքների հարստացման պարտականությունը և այլն: Հարուստ մշակութային պատմություն ունեցող երկրների գրադարանային աշխատողները նաև հանձն են առնում իրենց երկրի պատմության և մշակույթի արժեքների պահպանության պարտականությունը, այդ մասին քարոզչական աշխատանքը և տեղեկատվության տարածումը:

Հայկական գրադարանային միության կողմից կազմակերպված դասընթացների և սեմինար պարապմունքների ընթացքում՝ սկսած 1998 թվականից, միշտ բարձրացվել է հայ գրադարանավարի մասնագիտական վարքականոնի ստեղծման խնդիրը: Քննարկման համար ներկայացվում ենք «Հայ գրադարանավարի մասնագիտական վարվեցողության վարքականոնի» նախագիծը, որը պատրաստել է ՀԳՄ նախագահ Ներսես Հայրապետյանը: Խնդրում ենք մասնակցել վարքականոնի քննարկումներին: Խմբագրությունը պատրաստ է տպագրել նախագծի վերաբերյալ ձեր արձագանքները և առաջարկությունները:

Համեմատության համար հրապարակում ենք նաև Ուկրաինայի և Սլովենիայի գրադարանային միությունների կողմից ընդունված համապատասխան փաստաթղթերը:

Նախագիծ

ՀԱՅ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱԿԱՆՈՆ (ԿՈՂԵՔՍ)

Ներկա վարքականոնը հիմնվում է բարոյականության համընդհանուր չափանիշների և սկզբունքների վրա: Գրադարանավարն իր հարաբերությունները ընթերցողների հետ կառուցում է փոխադարձ հարգանքի հիման վրա, անկախ սոցիալական կարգավիճակից, ազգությունից, սեռից, տարիքից, կրոնից, քաղաքական համոզմունքներից և այլն: Վարքականոնում տեղեկատվության ազատության իրավունքը դիտարկվում է որպես գրադարանային սպասարկման անկյունաքարերից մեկը:

ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԸ.

- Բոլոր օգտվողներին ապահովում է արդյունավետ, մատչելի տեղեկատվական ծառայություններով, տեղեկատվական պաշարները չի օգտագործում օգտվողներին իրենից կախման մեջ գցելու նպատակով.
- Պայքարում է օգտվողների տեղեկատվական ազատության սահմանափակման և գրաքննության դրսևորումների դեմ.
- Պատասխանատվություն չի կրում ընթերցողի կողմից տեղեկատվության օգտագործման հարուցած հետևանքների համար.
- Պահպանում է օգտվողի տեղեկատվական սպասարկման գաղտնիությունը (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի).
- Հարգում և պահպանում է հեղինակային և ինտելեկտուալ սեփականության իրավունքը.
- Պահպանում և հարստացնում է հայ ժողովրդի հոգևոր արժեքները, աջակցում է Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային զարգացմանը.
- Հոգ է տանում գրադարանավարի մասնագիտության և գրադարանային գործի բարձր հասարակական կարգավիճակի և հեղինակության մասին.
- Հարգանքով է վերաբերվում իր գործընկերներին, պատրաստ է աջակցել և սատարել նրանց.

- Մասնագիտական կարողությունները, ուժը և եռանդը նվիրում է իր գրադարանին, ծառայում նրա խնդիրների իրականացմանը.
- Մշտապես բարձրացնում է մասնագիտական գիտելիքները, մասնակցում է գրադարանային աշխատողների որակավորման բարձրացման դասընթացներին ու միջոցառումներին.
- Սույն վարքականոցի նկատմամբ հարգանքը ՀՀ յուրաքանչյուր գրադարանային աշխատողի բարոյական պարտքը և մասնագիտական պարտականությունն է:

ՍԼՈՎԵՆՅԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԱՐՔԱԿԱՆՈՒ

Սլովենյայի գրադարանների վարքականոցն վերահաստատվել է Սլովենյայի գրադարանային միության ժողովում, որը կայացել է Բլեդում, 1995թ. Նոյեմբերի 8-ին,

Սլովենական գրադարանները ստեղծել են սեփական բարոյագիտության օրենքների ժողովածուն, որի նպատակն է ձևավորել գրադարանավարի անհատականությունը՝ անկախ քաղաքական դիրքից:

Գրադարանային գործի նպատակը և կարևորությունն է՝ ամրապնդել քաղաքակրթության զարգացման կայուն հիմքերը և կոչված է նաև պահպանելու և փոխանցելու գրանցված մարդկային գիտելիքը: Կրելով մեր հասարակության, ազգի, յուրաքանչյուր անհատի զարգացման պատասխանատվությունը, Սլավոնյան գրադարանավարներն ընդունել են մասնագիտական բարոյականության Վարքականոց, և հանձն են առել դրա հիման վրա ձևավորել մեր անհատականությունը, հարաբերությունները մեր գործընկերների, ընթերցողների ինչպես նաև ողջ հասարակական միջավայրի հետ:

1. Գրադարանավարը պետք է իր անհատականությունը կերտի ընդհանուր բարոյական սկզբունքներին համապատասխան: Յուրաքանչյուր գրադարանավարի գործողության միակ չափանիշը պետք է լինի պրոֆեսիոնալիզմը:
2. Գրադարանավարը պետք է պարբերաբար կատարելագործի իր մասնագիտական գիտելիքները և համագործակցի հանուն գրադարանային գործի և հարակից ճյուղերի զարգացման: Նա պետք է տիրապետի իր մասնագիտությանը, նպաստի բարձրացնելու իր մասնագիտության հեղինակությունը և նրա հավաքական ոգին:
3. Գրադարանավարը պետք է աջակցի իր գործընկերներին և հարգի նրանց գիտելիքները: Նրա խոսքը և գործողությունները պետք է օգնեն նրանց, ովքեր խնդիրներ ունեն վարքականոցի սկզբունքներին ճշտորեն հետևելու առումով: Նա պետք է հարգի մյուս մասնագետների գիտելիքները, ինչպես նաև բարոյական նորմերը:
4. Գրադարանավարը պետք է ձգտի իրականացնել իր հիմնարկության նպատակները, բոլոր թյուրիմացությունները պետք է լուծվեն արդարության հիման վրա և հիմնարկության ներսում ընթացող հավասար երկխոսությունների միջոցով: Պետք է աներկբայորեն հավատարիմ լինի իր հիմնարկությանը և աջակցի նրա հեղինակության բարձրացմանը:
5. Հիմնարկության նպատակներին և հնարավորություններին համապատասխան, գրադարանավարը պետք է ապահովի հնարավորինս որակյալ ծառայություններ, բարձրացնի դրանց մատչելիությունը, արդյունավետությունը և բազմազանությունը:
6. Գրադարանավարի վերաբերմունքը ընթերցողների նկատմամբ պետք է հիմնված լինի հավասարության, անաչառության վրա: Նույն վերաբերմունքը ակնկալվում է նաև գրադարանի օգտվողից:
7. Գրադարանավարը պետք է ապահովի ընթերցողի անձնական տվյալների, որոնած նյութերի և տեղեկության գաղտնիությունը:

8. Գրադարանավարը պետք է ջանա տեղեկատվության և փաստաթղթերի անվճար փոխանցման համար, սակայն պատասխանատու չէ այն հետևանքների համար, որոնք տեղի են ունեցել դրանց օգտագործման հետևանքով:
9. Գրադարանավարը պետք է խոչընդոտի գրաքննության բոլոր ձևերին, տարբեր մասնագիտորեն չհիմնավորված մուտքի սահմանափակումներին, փաստաթղթերի ու տեղեկատվության փոխանցման արգելքներին:
10. Գրադարանավարը չպետք է չարաշահի իր դիրքը:
11. Սլովենյայի գրադարանավարների համար այս Վարքականոնը հարգելը բարոյական պարտականություն և մասնագիտական պարտք է:
12. Սլովենյայի գրադարանային միությունը կառաջարկի իր բարոյական և իրավական աջակցությունը այն գրադարանավարին կամ ընթերցողին, ով դժվարություններ կունենա այս սկզբունքներին հետևելիս: Վարքականոնի խախտողները գործ կունենան միայն մասնագիտական դատարանի հետ:

Անգլ. թարգմ.՝ Մարտ Պողոսյան

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ՎԱՐՔԱՎԱՆՈՆ

Հաստատվել է Ուկրաինայի գրադարանային միության կոնֆերանսի կողմից 1996
մայիսի 30-ին

Այս օրենսգրքի նպատակն է գրադարանային աշխատողների և բոլոր գրադարանների ու տեղեկատվական ծառայությունների մասնագիտական վարվելակերպի կանոնների սահմանումը և իրականացումը կյանքում, որոնք գործում են նորանկախ և ժողովրդավարական Ուկրաինայում: Լավ տեղեկացված քաղաքացիների ժողովրդավարական հասարակությունում գրադարանի աշխատակիցների առաքելությունն է նպաստել մտավոր ազատության սկզբունքների հաստատմանը, գաղափարների, տեղեկատվության ազատ և անսահմանափակ փոխանակմանը, ընթերցանության ազատությանը:

Գրադարանավարները պատրաստ են համագործակցել բոլոր կազմակերպությունների, հասարակությունների և այն անհատ քաղաքացիների հետ, որոնք հետաքրքրված են Ուկրաինայում գրադարանագիտության զարգացմամբ և քաղաքացիներին ապահովում են ամբողջական և օբյեկտիվ տեղեկատվությամբ՝ գրադարանի նյութերի և աղբյուրների հավասար և ազատ մուտքի միջոցով:

- մենք ապրում ենք մարդկության ընդհանուր բարոյական սկզբունքներով - մարդավիճակի, գաղափարների բազմակարծության, անկախ սոցիալական կարգավիճակից, կրոնից, ազգությունից, սեռից, տարիքից, քաղաքական հայացքներից հասարակության գերագույն արժեք հանդիսացող անհատի նկատմամբ հարգանքի սկզբունքով.
- մենք հարգում ենք մարդու ազատությունը և խրախուսում տեղեկատվություն ձեռք բերելու անհատի իրավունքը.
- մենք ապրում ենք մտավոր և տեղեկատվական ազատության սկզբունքների համաձայն.
- մենք խոչընդոտում ենք գրադարանի հավաքածուների և ընթերցանության գրաքննության փորձերը.
- պահպանում ենք գրադարանի ընթերցողների ստացած տեղեկատվության գաղտնիությունը, ապահովում գրադարանի ու տեղեկատվական ծառայությունների վստահելիությունը.

- մենք բարոյական պատասխանատվություն ենք կրում գրադարանային աշխատանքի և տեղեկատվական ծառայությունների կազմակերպման միջոցով տրված տեղեկատվության լիարժեքության, արագության և օբյեկտիվության համար.
- մենք պահպանում և համալրում ենք Ուկրաինայի ժողովրդի հոգևոր արժեքները, աջակցում էքնիկ մշակույթների զարգացմանը.
- մենք ջանում ենք ձևավորել անհատի էթնիկական և էսթետիկական իդեալը, խրախուսել ընթերցողների բարոյական և էթիկական որոշումները՝ աշխարհընկալման, բնական աղետներից խուսափելու, ժողովրդի բարեկեցության բարելավման, մարդասիրական դերի և հասարակության մեջ անհատի դերի ընկալման հարցերում.
- մենք տիրապետում ենք մեր մասնագիտությանը, իրականացնում ենք դրա մարդկային առաքելությունը, շարունակաբար զարգացնում գրադարանային գիտելիքները, ունակություններն ու հմտությունները, մատենագիտական տեղեկատվական գործընթացները, փաստաթղթային տեղեկատվական աղբյուրների հանրային օգտագործման կազմակերպումը.
- մենք պահում և շարունակում ենք գրադարանային սովորույթները, աջակցում գրադարանային գիտության և պրակտիկայի զարգացմանը.
- խրախուսում ենք նորամուծություններ, առաջնային ինֆորմացիոն տեխնոլոգիաների ներդրումներ.
- մենք չենք հանդուրժում ընթերցողների, կոլեգաների և գրադարանի ծախսերի հաշվին անձնական շահ ստանալը.
- մենք բարձրացնում ենք գրադարանային մասնագիտության հեղինակությունը, ուշադրություն դարձնում տաղանդավոր երիտասարդներին և օգնում հասնել մասնագիտական կատարելության.
- մասնագիտական գործողություններում մենք ցուցաբերում ենք նախաձեռնություն, պատասխանատվություն, կարգ ու կանոն.
- գրադարանի միջավայրում մենք ձգտում ենք հարաբերությունների ներդաշնակությանը, անդամների բարոյական ինքնագիտակցության զարգացմանը, իրենց հոգևոր ներուժի մոբիլիզացմանը՝ լուծելու համար հասարակության կողմից գրադարանների առջև դրված խնդիրները:

Անգլ. թարգմ.՝ Արիինե Ավետիսյան

ՌՈՒՍ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ՎԱՐՔԱՎԱՆՈՆԸ

- Ռուս գրադարանավարի մասնագիտական գործունեությունը ուղղված է օգտվողի համար հարմարավետ, առանչ խոչնդոտների, իրավահավասար և հարմարավետ մուտքի հնարավորության ստեղծմանը՝ օգտագործելով համաշխարհային գրադարանային պաշարների և նյութերի հնարավորությունները:
- Օգտագործելով ոչ բռնի բոլոր միջոցները ընդդիմանում է գրադարանային նյութերի գրաքննությանը, գրադարանային նյութերի ոչնչացմանը և գողությանը:
- Դիտում է տեղեկատվության ազատ մուտքը որպես ազգային և համաշխարհային արժեքների հետ շփման միջոց:
- Պահպանում է օգտվողի տեղեկատվական գործունեության գաղտնիության իրավունքը, հակազդում է իր վրա հսկողության բոլոր փորձերը, բացառությամբ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի:
- Ճանաչում և ընդունում է ինտելեկտուալ սեփականության բոլոր իրավունքները:
- Ձգտում է մասնագիտական կատարելագործման, մասնագիտական կրթության և ձեռնահասության մակարդակի բարձրացմանը:
- Հարգանքով է վերաբերվում իր գործընկերներին, պաշտպանում է նրանց իրավունքները, եթե դրանք չեն հակասում էթիկայի նորմերին և նպաստում են մասնագիտության հեղինակության բարձրացմանը:

- Հոգ է տանում իր մասնագիտության բարձր հասարակական կարգավիճակի մասին:
- Օգտագործելով իր հաստատության հնարավորությունները, ինչպես նաև ներգրավելով մյուս գրադարանների պաշարները, բոլոր ցանկացողներին ապահովում է բարձրորակ, հարմարավետ, մատչելի և բազմազան ծառայություններով:
- Տեղեկություններ ստանալու ազատ հնարավորությունը դիտում է որպես անձի անկապտելի իրավունք:
- Հակազդում է գրադարանային նյութերից տեղեկություններ ստանալու սահմանափակմանը, կանայականորեն ֆոնդերից չի հանում պահանջվող փաստաթղթերը (գրաքննություն) և անհիմն չի մերժում:
- Պատասխանատվություն չի կրում գրադարանից ստացած տեղեկությունների կամ փաստաթղթերի օգտագործման հետևանքների համար:
- Իր հարաբերությունները օգտվողների հետ հիմնում է նրա անձը և տեղեկատվական պահանջները հարգելու վրա:
- Պահպանում է օգտվողների տեղեկատվական գործունեության տվյալների գաղտնիությունը (բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի):
- Շանաչում է մասնագիտական կատարելագործմանը, մասնագիտական կրթության և ձեռնահասության մակարդակի բարձրացմանը:
- Հարգում է աշխատակիցների գիտելիքները և պատրաստակամությամբ փոխանցում է իր գիտելիքները՝ դա համարելով մասնագիտության զարգացման կարևոր նախապայման:
- Հարգանքով է վերաբերվում բոլոր գործընկերներին, պաշտպանում է նրանց իրավունքները, եթե դրանք չեն հակասում էթիկայի կանոններին և նպաստում են մասնագիտության հեղինակության բարձրացմանը:
- Հոգ է տանում իր մասնագիտության բարձր հասարակական կարգավիճակի մասին, ձգտում է ցույց տալ գրադարանի սոցիալական դերը և անրապնդել նրա հեղինակությունը:

Ռուս. թարգմ.՝ Նաիրա Սարգսյան

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

Նախորդ համարներում ընթերցողին ներկայացրել ենք Լիտվայի Հանրապետության օրենքը գրադարանային գործի մասին, ինչպես նաև «ՀՀ գրադարանային գործի մասին» օրենքի նախագիծը: Հաշվի առնելով, որ առաջիկայում ծրագրված է գրադարանային օրենքի նախագծի քննարկումների կազմակերպումը ՀՀ ԱԺ կողմից, նպատակահարմար գտանք այս համարում ներկայացնել Չեխիայի օրենքը գրադարանների մասին:

ՉԵԽԻԱՅԻ ՕՐԵՆՔԸ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(օրենք գրադարանների մասին)
թիվ 257/2001, 29 հունիսի, 2001թ.

Սույն օրենքն ընդունվել է Չեխիայի Հանրապետության խորհրդարանի կողմից:

Հոդված 1

1. Սույն օրենքը կանոնակարգում է գրադարանային համակարգի, այդ թվում՝ հանրային գրադարանների և տեղեկատվական ծառայությունների գործունեությունը:
2. Սույն օրենքի դրույթները չեն տարածվում առևտրային գործունեության լիցենզիայի հիման վրա գործող գրադարանների վրա:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող տերմինները

Սույն օրենքի կոնտեքստում.

- ա) «գրադարանը» գրադարանների պետական ռեգիստրում գրանցված այն հանրային հիմնարկությունն է, որտեղ բոլոր ցանկացողներին հավասարապես և առանց խտրականության մատուցվում են սույն օրենքով սահմանված գրադարանային և տեղեկատվական ծառայություններ:
- բ) «գրադարանային փաստաթղթեր» տեղեկատվության աղբյուր է՝ գրանցված որպես գրադարանի գրքերի հավաքածուի առանձին միավոր:
- գ) «գրադարանի ֆոնդը» գրադարանային փաստաթղթերի դասակարգված և համապատասխանաբար համալրված ամբողջականությունն է, որը գտնվում է շարունակական պաշտպանության և խնամքի ներքո:
- դ) «միջգրադարանային ծառայությունները» տեղեկատվության և տպագիր նյութերի փոխանակման գծով այն ծառայություններն են, որոնք գրադարանները տրամադրում են միմյանց՝ գրադարանային փաստաթղթերն ընթերցողների համար առավել մատչելի դարձնելու նպատակով, անկախ այն բանից, թե որտեղ են պահվում այդ փաստաթղթերը:
- ե) «պատմական հավաքածուն» գրադարանի այն հավաքածուն է, որը կազմված է մինչև 1860 թվականը լույս տեսած գրադարանային փաստաթղթերից կամ այն գրադարանային փաստաթղթերից, որոնք գրադարանի կանոնադրության կամ որևէ այլ իրավական ակտի համաձայն հանդիսանում են եզակի պատմամշակութային արժեքներ:
- զ) «արխիվային հավաքածուն» գրադարանի այն հավաքածուն է, որը կազմված է գրադարանին օրենքով սահմանված պետական մարմինների կողմից ի պահ հանձնված գրադարանային փաստաթղթերից:
- է) «մասնագիտական հավաքածուն» գրադարանի այն հավաքածուն է, որը կազմված է որոշակի մասնագիտական ոլորտին վերաբերող, որպես կանոն տեխնիկական բնույթի գրադարանային փաստաթղթերից:
- ը) «ռեգիոնալ ֆունկցիաները» այն ֆունկցիաներն են, որոնք կապված են շրջանների կենտրոնական գրադարանների կողմից տեղերում գործող (համայնքային) գրադարաններին՝ վերջիններիս զարգացմանը նպաստելու և օժանդակելու համար, խորհրդատվական, ուսումնական և կորորդինացիոն ծառայությունների մատուցման, ինչպես նաև տեղեկատվական նյութերի փոխանակման և որոշակի ժամանակով գրադարանային փաստաթղթերի հավաքածուների տրամադրման, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման հետ:

- թ) «գրադարանի օպերատորը»⁹ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձն է, որը իր անունից հանրային հիմունքներով գրադարանային և տեղեկատվական ծառայություններ է մատուցում:

Յոթված 3. Գրադարանային համակարգը

1. Գրադարանային համակարգն իր մեջ ներառում է.
 - ա) Չեխիայի Հանրապետության Ազգային գրադարանը (այսուհետև՝ Ազգային գրադարան),
 - բ) Կ.Է. Մականի անվան գրադարանը և կույրերի տպարանը,
 - գ) մշակույթի նախարարության (այսուհետև՝ նախարարության) կողմից հիմնադրված Մորավյան շրջանային գրադարանը Բռնոյում,
 - դ) համապատասխան շրջանային մարմինների կողմից հիմնադրված շրջանային գրադարանները,
 - ե) համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հիմնադրված համայնքային գրադարանները,
 - զ) մասնագիտական գրադարանները:
2. Սույն հոդվածի առաջին պարբերության դ) և ե) կետերում նշված գրադարանները կարող են հիմնադրվել նաև այլ իրավաբանական անձանց կողմից:
3. Գրադարանը կարող է մատուցել գրադարանային և տեղեկատվական ծառայություններ նախարարության կողմից գրադարանների պետական ռեգիստրում գրանցվելու օրվանից:

Յոթված 4. Գրադարանային և տեղեկատվական ծառայությունները

1. Գրադարանային և տեղեկատվական ծառայությունները ներառում են.
 - ա) գրադարանի ֆոնդից կամ միջգրադարանային ծառայությունների շրջանակներում այլ գրադարանի ֆոնդից ստացված նյութերից գրադարանային փաստաթղթեր տրամադրելը,
 - բ) գրքերի, հեղինակների և թեմաների վերաբերյալ մատենագիտական բնույթի բանավոր տեղեկատվություն տալը,
 - գ) միջնորդական ծառայություններ արտաքին աղբյուրներից, մասնավորապես՝ պետական և տեղական կառավարման մարմիններից, տեղեկատվություն ստանալու համար,
 - դ) օժանդակություն գրադարանի տրամադրության տակ եղած անվճար արտաքին աղբյուրներից հեռահաղորդակցության համակարգերի միջոցով տեղեկատվություն ստանալու հարցում:
2. Գրադարանը պարտավոր է անվճար տրամադրել սույն հոդվածի առաջին պարբերությունում թվարկված գրադարանային և տեղեկատվական ծառայությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ.
 - ա) պահանջվող տեղեկատվության տրամադրման համար անհրաժեշտ է պատրաստել ձայներիզների կամ տեսաերիզների պատճեններ,
 - բ) պահանջվող գրադարանային փաստաթղթերը այլ գրադարանի ֆոնդից միջգրադարանային ծառայությունների շրջանակներում ստանալու համար անհրաժեշտ է կատարել պատճենահանման աշխատանքներ,
 - գ) պահանջվող գրադարանային փաստաթղթերը հնարավոր է ստանալ միայն արտասահմանյան գրադարաններից՝ միջազգային միջգրադարանային ծառայությունների շրջանակներում:

⁹ «Գրադարանի օպերատորը» օրենքի տեքստում օգտագործվում է մի քանի իմաստով՝ գրադարանի ղեկավարության և հիմնադրի իմաստով, երբեմն էլ՝ խառը: Այդ պատճառով նպատակահարմար գտանք բնագրին հարազատ նմալու համար օգտագործել «Գրադարանի օպերատոր» եզրը առանց թարգմանելու:

3. Գրադարանը կարող է մատուցել նաև այլ ծառայություններ, մասնավորապես՝ կապված.
 - ա) տեղեկատվության վճարովի աղբյուրներից հեռահաղորդակցության համակարգերի միջոցով տեղեկատվություն ստանալու հնարավորություն ընձեռելու հետ,
 - բ) մշակութային, կրթական և ուսումնական գործունեության հետ,
 - գ) համապատասխան հեղինակային վկայագրերի տպագրման հետ,
 - դ) պատճենահանման աշխատանքների հետ,
 - ե) գրքերի, հեղինակների և թեմաների վերաբերյալ մատենագիտական բնույթի գրավոր տեղեկատվություն տալու հետ:
4. Գրադարանի օպերատորը կարող է որոշակի վճար սահմանել սույն հոդվածի երրորդ պարբերության ա)-ից գ) ենթակետերում նշված ծառայությունների, ինչպես նաև պարտադիր չհամարվող այլ ծառայությունների մատուցման համար իր կատարած փաստացի ծախսերը փոխհատուցելու համար:
5. Գրադարանի օպերատորը կարող է որոշակի վճար սահմանել գրադարանի նոր ընթերցողների գրանցման հետ կապված վարչական ծախսերը փոխհատուցելու համար:
6. Գրադարանի օպերատորը պարտավոր է հավասար պայմաններ ապահովել գրադարանի կողմից մատուցվող գրադարանային և տեղեկատվական ծառայություններից օգտվել ցանկացողների համար:
7. Գրադարանի օպերատորը պետք է հրապարակի գրադարանի կանոնադրության այն կետերը, որոնք մանրամասն սահմանում են գրադարանի կողմից մատուցվող գրադարանային և տեղեկատվական ծառայություններից օգտվելու կարգը:

Գրադարանների գրանցումը

Հոդված 5.

1. Նախարարությունը վարում է հանրային տեղեկատվական համակարգ հանդիսացող գրադարանների պետական ռեգիստրը:
2. Գրադարանների ռեգիստրում գրանցվելու հայտը (հետայսու՝ հայտը) ներկայացվում է գրադարանի օպերատորի կողմից:
3. Հայտն իր մեջ ներառում է.
 - ա) օպերատորի առևտրային անունը կամ անվանումը, նրա՝ որպես իրավաբանական անձի, գրանցման համարը, հասցեն, գործունեության ոլորտը և իրավաբանական կարգավիճակը,
 - բ) եթե օպերատորը ֆիզիկական անձ է՝ օպերատորի անունը, ազգանունը, ծննդյան թիվը և մշտական բնակության հասցեն,
 - գ) գրադարանի հասցեն, անվանումը և տեսակը (հոդվ. 9 - 12) և, անհրաժեշտության դեպքում, մասնագիտացումը:
4. Հայտին կից ներկայացվում է գրադարանի կանոնադրությունը:
5. Եթե գրադարանի օպերատորը պետական ռեգիստրում օրենքով սահմանված կարգով գրանցված իրավաբանական անձ է, հայտին կցվում է նաև ոչ ավելի, քան 60 օր առաջ տրված քաղվածք պետական ռեգիստրի համապատասխան հատվածից: Եթե գրադարանի օպերատորը բյուջետային կազմակերպություն է կամ պետական կառավարման մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի վարչական միավոր, հայտին համապատասխանաբար կցվում է կամ կազմակերպության հիմնադրման վկայագիրը, կամ գերատեսչության լիազորությունների ցանկը կամ կանոնադրությունը:
6. Եթե ներկայացվող հայտը ամբողջական չէ, նախարարությունը պահանջում է օպերատորից 15 - օրյա ժամկետում լրացնել այն, իսկ եթե հայտը չի բավարարում

սահմանված պահանջներին, նախարարությունը հետաձգում է դրա քննարկումը՝ այդ մասին տեղյակ պահելով օպերատորին:

Հոդված 6.

1. Նախարարությունը պարտավոր է գրանցել գրադարանը ռեգիստրում, եթե այն, պահպանելով գրադարանից օգտվելու հավասարության սկզբունքը, մատուցում է սույն օրենքով սահմանված բոլոր գրադարանային և տեղեկատվական ծառայությունները: Գրադարանի օպերատորից ամբողջական հայտ ստանալուց հետո 15 օրվա ընթացքում նախարարությունն օպերատորին տալիս է գրադարանների ռեգիստրում գրանցման վկայագիր:
2. Նախարարությունը մերժում է հայտը, եթե գրադարանը չի ապահովում սույն օրենքով սահմանված բոլոր գրադարանային և տեղեկատվական ծառայությունները՝ պահպանելով գրադարանից օգտվելու հավասարության սկզբունքը:

Հոդված 7.

1. Ռեգիստրում գրանցված տվյալներից որևէ մեկի փոփոխելու դեպքում, գրադարանի օպերատորը պարտավոր է 30-օրյա ժամկետում գրավոր տեղյակ պահել նախարարությանն այդ փոփոխության մասին:
2. Օպերատորից նման տեղեկանք ստանալուց հետո նախարարությունը պետք է 30-օրյա ժամկետում համապատասխան փոփոխություն կատարի ռեգիստրում և այդ մասին վկայագիր տա օպերատորին:

Հոդված 8.

1. Նախարարությունն իր սեփական նախաձեռնությամբ կամ մեկ այլ իրավաբանական անձի առաջարկով կարող է որոշում ընդունել գրադարանի գրանցումը գրադարանների պետական ռեգիստրում չեղյալ համարելու մասին, եթե գրադարանն այլևս չի համապատասխանում հանրային գրադարանի այն սահմանմանը, որը տրված է սույն օրենքի երկրորդ հոդվածի ա) ենթակետով:
2. Գրադարանի օպերատորի կողմից գրադարանի գործունեության դադարեցման մասին գրավոր տեղեկանք ստանալու դեպքում, նախարարությունը որոշում է ընդունում գրադարանի գրանցումը գրադարանների պետական ռեգիստրում չեղյալ համարելու մասին:
3. Սույն հոդվածի 1) և 2) կետերով սահմանված իր որոշման մեջ նախարարությունը պետք է նշի, թե որ օրվանից է ուժը կորցնում գրադարանի գրանցումը ռեգիստրում:

Գրադարանների տեսակները

Հոդված 9. Ազգային գրադարանը

1. Ազգային գրադարանը մասնագիտական հավաքածուներով համալրված ունիվերսալ գրադարանային ֆոնդ ունեցող գրադարան է: Ազգային գրադարանն ունի մշտական արխիվային և պատմական հավաքածուներ:
2. Ազգային գրադարանը հանդիսանում է գրադարանային համակարգի կենտրոնը: Համակարգում այն իրականացնում է համակարգման, տեղեկատվական, տեխնիկական, ուսումնական, վերլուծական, գիտահետազոտական, ստանդարտացման, մեթոդոլոգիական և խորհրդատվական գործառույթներ: Նշված գործառույթների շրջանակներում Ազգային գրադարանը, մասնավորապես.
 - ա) մշակում է Չեխիայի Հանրապետության տարածքում գործող բոլոր հանրային գրադարանների գրադարանային ֆոնդերի մեջ մտնող գրադարանային փաստաթղթերի ազգային համահավաք գրացուցակ՝ վերջինս մատչելի դարձնելով գրադարանների օգտագործման համար.
 - բ) կազմում է ազգային մատենագիտությունը և ապահովում ազգային մատենագիտական համակարգի աշխատանքի համակարգումը.
 - գ) հանդես է գալիս որպես գրքի և երաժշտական ստեղծագործությունների միջազգային ստանդարտ համարների գրանցման լիազոր պետական մարմին.

- դ) հանդես է գալիս որպես միջգրադարանային ծառայությունների հարցերով հանրապետական կենտրոն.
- ե) հանդես է գալիս որպես պաշտոնական հրապարակումների միջազգային փոխանակման հարցերով հանրապետական կենտրոն.
- զ) հեղինակային իրավունքների հարցերով հանձնաժողովի հետ հեղինակների ստեղծագործությունների իրացման համար փոխհատուցման վերաբերյալ բանակցությունների ժամանակ ներկայացնում է գրադարանային համակարգը:

Յոթված 10. Կ.Է. Մականի անվան գրադարանը և կուլտերիս տպարանը և Մորավյանի անվան շրջանային գրադարանը Բռնոյում

1. Կ.Է. Մականի անվան գրադարանը և կուլտերիս տպարանը ունիվերսալ գրադարանային հավաքածու ունեցող գրադարան է, որն ունի մշտական արխիվային և պատմական հավաքածուներ:
2. Մորավյանի անվան շրջանային գրադարանը Բռնոյում որոշ մասնագիտական հավաքածուներով համալրված ունիվերսալ գրադարանային ֆոնդ ունեցող գրադարան է: Գրադարանն ունի մշտական արխիվային և պատմական հավաքածուներ: Այն հանդիսանում է Հարավային Մորավիա շրջանի կենտրոնական շրջանային գրադարանը:

Յոթված 11. Շրջանային գրադարանները

1. Շրջանային գրադարանը որոշ մասնագիտական հավաքածուներով համալրված ունիվերսալ ֆոնդ ունեցող գրադարան է: Այն ունի մշտական արխիվային և պատմական հավաքածուներ:
2. Շրջանային գրադարանը մտնում է գրադարանային համակարգի մեջ, որում այն իրականացնում է համակարգման, տեղեկատվական, տեխնիկական, ուսումնական, վերլուծական, գիտահետազոտական, մեթոդոլոգիական և խորհրդատվական ֆունկցիաներ: Նշված ֆունկցիաների շրջանակներում շրջանային գրադարանը, մասնավորապես.
 - ա) համագործակցում է Ազգային գրադարանի հետ ազգային մատենագրության կազմման և համահավաք գրացուցակի մշակման հարցերում,
 - բ) շրջանի համար մշակում է գրադարանային տվյալների հանրային բազա և համակարգում է շրջանային մատենագրական համակարգը,
 - գ) հանդես է գալիս որպես միջգրադարանային ծառայությունների հարցերով շրջանային կենտրոն,
 - դ) շրջանի մնացած գրադարանների հետ համատեղ ներդնում է նոր տեխնոլոգիաներ գրադարանային և տեղեկատվական ծառայությունների մատուցման համար:
3. Շրջանային գրադարանն իրականացնում է իր գործառույթները և համակարգում է շրջանի մնացած գրադարանների կողմից իրենց գործառույթների իրականացումը: Երկկողմանի գրավոր պայմանագրի հիման վրա շրջանային գրադարանը կարող է իր գործառույթների մի մասը փոխանցել շրջանի համայնքային գրադարաններից որևէ մեկին:
4. Այն դեպքում, երբ շրջանային գրադարանը հանդիսանում է նաև որևէ համայնքի համայնքային գրադարան, տվյալ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները կիսում են շրջանային գրադարանին սույն օրենքով վերապահված լիազորությունների իրականացման պատասխանատվությունը:

Յոթված 12. Համայնքային գրադարանները

1. Համայնքային գրադարանը ունիվերսալ գրադարանային հավաքածու ունեցող գրադարան է, որը կարող է համալրված լինել նաև որոշ մասնագիտական հավաքածուներով:
2. Համայնքային գրադարանը մտնում է գրադարանային համակարգի մեջ, որտեղ այն իրականացնում է տեղեկատվական, մշակութային և ուսումնական գործառույթներ:

Յոթված 13. Մասնագիտական գրադարանները

1. Մասնագիտական գրադարանը համապատասխան մասնագիտական հավաքածու ունեցող գրադարան է:
2. Մասնագիտական գրադարանը մտնում է գրադարանային համակարգի մեջ, որտող այն իրականացնում է համակարգման, տեղեկատվական, տեխնիկական, ուսումնական, վերլուծական, գիտահետազոտական, մեթոդալոգիական և խորհրդատվական գործառույթներ: Նշված գործառույթների շրջանակներում մասնագիտական գրադարանը, մասնավորապես.
 - ա) համագործակցում է Ազգային գրադարանի հետ ազգային մատենագիտության կազմման և ազգային համահավաք գրացուցակի մշակման հարցերում,
 - բ) շրջանի համար մշակում է հանրային օգտագործման թեմատիկ և մասնագիտական գրադարանային տվյալների բազա,
 - գ) Ազգային գրադարանի հետ համատեղ հանդես է գալիս որպես իր մասնագիտական ոլորտում միջգրադարանային ծառայությունների հարցերով կենտրոն,
 - դ) համապատասխան մասնագիտական ուղղվածություն ունեցող այլ գրադարանների հետ համատեղ ներդնում է նոր տեխնոլոգիաներ գրադարանային և տեղեկատվական ծառայությունների մատուցման նպատակով:

Հոդված 14. Միջգրադարանային ծառայություններ

1. Այն դեպքերում, երբ ընթերցողին հետաքրքրող գրադարանային փաստաթուղթը չկա տվյալ գրադարանի ֆոնդում, գրադարանը պարտավոր է միջգրադարանային ծառայությունների շրջանակներում դիմել այլ գրադարանի՝ խնդրելով տրամադրել տվյալ գրադարանային փաստաթուղթը կամ տեղեկատվություն այդ փաստաթղթի վերաբերյալ՝ կախված նրանից, թե ինչ է հետաքրքրում ընթերցողին:
2. Նման դիմում ստացած գրադարանը (այսուհետև՝ դոնոր) պարտավոր է իր գրադարանային ֆոնդից դիմող գրադարանին որոշակի ժամանակահատվածով տրամադրել պահանջվող գրադարանային փաստաթուղթը, դրա պատճենը կամ տեղեկատվություն այդ փաստաթղթի վերաբերյալ՝ կախված նրանից, թե ինչպես է ձևակերպել իր խնդրանքը դիմող գրադարանը:
3. Իր դիմումի հիման վրա, պահանջվող գրադարանային փաստաթուղթը ժամանակավոր օգտագործման համար ստանալու դեպքում, դիմող գրադարանը պարտավոր է երկու գրադարանների միջև համաձայնեցված ժամկետներում և բարվոք վիճակում վերադարձնել ստացված գրադարանային փաստաթուղթը դոնոր գրադարանին: Փաստաթուղթը դոնոր գրադարանից ստանալու պահից մինչև այն վերադարձնելը դիմող գրադարանը նյութական պատասխանատվություն է կրում այդ ժամանակահատվածում փաստաթղթին հասցված որևէ վնասի կամ փաստաթղթի կորստի համար:
4. Գրադարանը պարտավոր է միջգրադարանային ծառայությունների շրջանակներում անվճար բավարարել գրադարանային փաստաթղթեր կամ տեղեկատվություն տրամադրելու դիմումները: Փոխհատուցման ենթակա են միայն փաստաթղթի պատճենահանման և փոխադրման հետ կապված փաստացի ծախսերը:
5. Գրադարանի հիմնադիրը պարտավոր է վարել գրադարանի կողմից իրականացված միջգրադարանային ծառայությունների գրանցման մատյան:
6. Միջգրադարանային ծառայությունների շրջանակներում գրադարանային փաստաթուղթ տրամադրելու մասին դիմումի ձևը և այն ներկայացնելու կարգը սահմանվում են սույն օրենքի կիրարկման մասին համապատասխան նորմատիվ օրենքով: Նշված օրենքով կարգավորվում են նաև միջազգային միջգրադարանային ծառայությունների շրջանակներում նյութերի և տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև տեխնիկական ու խորհրդատվական օգնություն ստանալու հետ կապված հարաբերությունները:

Հոդված 15. Գրադարաններին տրամադրվող օժանդակությունը

1. Օրենքով սահմանված կարգով գրադարանի հիմնադիրը կարող է նպատակային լրավճարներ ստանալ պետական բյուջեից, պետական ֆինանսական միջոցներից կամ Ազգային ֆոնդից, մասնավորապես.

- ա) գիտահետազոտական ծրագրեր իրականացնելու համար,
 - բ) գրադարանային և տեղեկատվական ծառայությունների մատուցման նպատակով նոր տեխնոլոգիաների ներդրման համար,
 - գ) գրադարանը համակարգչային ցանցով վերազինելու համար,
 - դ) տեղեկատվության աղբյուրներն էլեկտրոնային ֆորմատի բերելու և դրանց մատչելիությունն ապահովելու համար,
 - ե) գրադարանի հավաքածուն համալրելու համար,
 - զ) գրադարանի հավաքածուն շրջակա միջավայրի վնասակար ազդեցություններից պաշտպանելու համար,
 - է) հաշմանդամ քաղաքացիների համար գրադարանի հավաքածուից օգտվելը մատչելի և դյուրին դարձնելու համար,
 - ը) մշակութային, կրթական և ուսումնական ծրագրեր իրականացնելու համար,
 - թ) շրջանային գրադարանների կողմից իրենց գործառույթների իրականացումն ապահովելու համար,
 - ժ) գրադարանի աշխատակազմի հետագա վերապատրաստումն ապահովելու համար,
 - ի) գրադարանին պատկանող շինությունների կառուցման և վերանորոգման համար,
 - լ) գրադարանին պատկանող շինություններն անվտանգության և հակահրդեհային համակարգերով վերազինելու համար:
2. Լրավճարներ տրամադրելու նպատակով գրադարանային գործունեության առաջնահերթ ոլորտները սահմանելու մասին որոշումը նախարարությունը ներկայացնում է գրադարանների կենտրոնական խորհրդի հաստատմանը:
3. Սույն հոդվածի առաջին պարբերությունում նշված լրավճարներ տրամադրման կարգը, մասնավորապես՝ պայմանները, չափը և ժամկետները, սահմանվում են կառավարության որոշմամբ:

Հոդված 16. Գրադարանի հավաքածուի գրանցումը և կատարված գրառումների ստուգումը

1. Գրադարանի հիմնադիրը պետք է վարի գրադարանի հավաքածուի գրանցամատյան (այսուհետև՝ մատյան): Մատյանի վարումը պետք է հնարավորություն ստեղծի վերահսկել առանձին փաստաթղթերի ստացումը և գրադարանի հավաքածուի մեջ դրանց անսխալ գրանցումը:
2. Մատյանում կատարված գրառումների արդիականությունն ապահովելու համար, գրադարանի հիմնադիրը պետք է ստուգի կատարված գրառումները հետևյալ պարբերականությամբ՝
- ա) 5 տարին մեկ անգամ, եթե գրադարանի ֆոնդը պարունակում է մինչև 100 հզ. գրադարանային փաստաթուղթ,
 - բ) 10 տարին մեկ անգամ, եթե գրադարանի ֆոնդը պարունակում է 100 հզ-ից մինչև 200 հզ. գրադարանային փաստաթուղթ,
 - գ) 15 տարին մեկ անգամ, եթե գրադարանի ֆոնդը պարունակում է 200 հզ-ից մինչև 1 մլն. գրադարանային փաստաթուղթ:
3. Այն դեպքում, երբ գրադարանի ֆոնդը կազմում է 1 մլն-ից մինչև 3 մլն. գրադարանային փաստաթուղթ, գրադարանի հիմնադիրը պետք է իրականացնի կատարված գրանցումների ստուգումը փուլերով՝ տարեկան ստուգելով ֆոնդում եղած փաստաթղթերի առնվազն 5%-ը:
4. Այն դեպքում, երբ գրադարանի ֆոնդը կազմում է ավելի քան 3 մլն. գրադարանային փաստաթուղթ, գրադարանի հիմնադիրը պետք է իրականացնի կատարված գրանցումների ստուգումը գրադարանի հիմնադիրների ժողովի կողմից հաստատված պլանով՝ տարեկան ստուգելով առնվազն 200 հզ. փաստաթուղթ:

5. Ստուգման արդյունքների հիման վրա կազմվում է արձանագրություն: Արձանագրության կազմման համար պատասխանատու է գրադարանի հիմնադիրը:
6. Սույն օրենքի համաձայն, գրադարանի ֆոնդի ստուգման իրականացման համար որևէ նորմատիվ ակտով հատուկ կարգ չի սահմանվում:
7. Մատյանի կազմման և վարման կարգը, ինչպես նաև ստուգման արդյունքների մասին արձանագրության կազմման կարգը սահմանվում են սույն օրենքի կիրարկման մասին համապատասխան նորմատիվ ակտով:

Հոդված 17. Գրադարանային փաստաթղթերի օտարումը

1. Գրադարանի ֆոնդից կարող են օտարվել միայն.
 - ա) այն գրադարանային փաստաթղթերը, որոնք չեն համապատասխանում հավաքածուի մասնագիտական բնագավառին և ուղղվածությանը,
 - բ) բազմօրինակ փաստաթղթերի ավելորդ օրինակները,
 - գ) այն գրադարանային փաստաթղթերը, որոնք չափազանց մաշված են, թերի են կամ այնքան վնասված են, որ այլևս չեն կարող ծառայել որպես տեղեկատվության աղբյուր:
2. Արխիվային և պատմական հավաքածուներից գրադարանային փաստաթղթերը կարող են օտարվել միայն նախարարության համաձայնությամբ:
3. Գրադարանը պարտավոր է օտարված գրադարանային փաստաթղթերը վաճառել՝
 - ա) առաջին պարբերության «ա» և «բ» կետերում նախատեսված դեպքերում՝ նույն տեսակի մեկ այլ գրադարանի, իսկ եթե վերջինիս հրաժարվում է գնել, ապա ուսումնական հիմնարկության մաս կազմող որևէ գրադարանի,
 - բ) երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքում՝ Ազգային գրադարանին,
 - գ) եթե գրադարանի փաստաթղթերը չեն իրացվում նման եղականով, ապա գրադարանը պետք է մեկ այլ գնորդի առաջարկի գնել օտարված գրադարանային փաստաթղթերը: Եթե նույնիսկ վերջին դեպքում դրանք չեն վաճառվում, գրադարանը կարող է դրանք նվիրել կամ ոչնչացնել:
4. Առաջինից երրորդ պարբերություններով սահմանված դրույթները չեն տարածվում գրադարանային այն փաստաթղթերի օտարման վրա, որոնք պահպանվում են օրենքով:
5. Գրադարանի լուծարման դեպքում գրադարանի հիմնադրի հետագա գործողությունները պետք է համապատասխանեն սույն օրենքի հոդված 17-ի 2-4-րդ պարբերությունների դրույթներին:

Հոդված 18. Գրադարանի հավաքածուի պահպանումը

Գրադարանի հիմնադիրը.

- ա) ապահովում է գրադարանային փաստաթղթերի տեղավորման և պահեստավորման այնպիսի սխեմա, որը թույլ կտա առավել արդյունավետ իրականացնել գրադարանային և տեղեկատվական ծառայությունները,
- բ) միջոցներ է ձեռնարկում գրադարանային հավաքածուն գողությունից, շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունից և վնասակար այլ գործոններից պաշտպանելու համար,
- գ) ապահովում է գրադարանային փաստաթղթերի վերականգնումը կամ դրանց տեղափոխումը տեղեկատվության այլ կրիչի վրա, եթե դա անհրաժեշտ է դրանց մշտական պահպանման համար:

Պատժամիջոցները

Հոդված 19.

1. Գրադարանի օպերատորի կողմից հոդված 7-ի 1-ին պարբերությամբ, հոդված 14-ի 5-րդ պարբերությամբ և հոդված 16-ի 1-4-րդ պարբերություններով սահմանված իր պարտականություններից կամ հոդված 18-ով սահմանված պարտավորություններից

որևէ մեկը խախտելու փաստ արձանագրելու դեպքում, նախարարությունը օպերատորին պարտադրում է որոշակի ժամկետում վերացնել հայտաբերված խախտումները:

2. Եթե գրադարանի օպերատորը համապատասխան միջոցներ չի ձեռնարկում հայտաբերված խախտումները սահմանված ժամկետում վերացնելու համար, ապա նախարարությունը օպերատորին ենթարկում է վարչական տույժի՝ 5.000-ից մինչև 200.000 չեխական կրոնայի (ԶԿ) տուգանքի տեսքով:

Հոդված 20.

Նախարարությունը 25.000-ից մինչև 500.000 ԶԿ-ի չափով տուգանքի է ենթարկում գրադարանի օպերատորին, եթե վերջինս չի կատարում սույն օրենքի հոդված 14-ի երկրորդ կամ երրորդ պարբերությունների պահանջներից բխող իր պարտականությունները, խախտում է գրադարանային փաստաթղթերի դուրս գրման համար սույն օրենքի հոդված 17-ի երկրորդ և երրորդ պարբերություններով սահմանված կարգը կամ չի կատարում սույն օրենքի հոդված 17-ի հինգերորդ պարբերության պահանջներից բխող իր պարտականությունները:

Հոդված 21.

1. Տուգանքի չափը որոշելիս նախարարությունը հաշվի է առնում օրենքի խախտման մասշտաբները և ծանրությունը, ինչպես նաև օրինախախտ գործողությունների հետևանքները:
2. Նախարարությունը կարող է պատժամիջոցների կիրառման հետ կապված պաշտոնական քայլեր ձեռնարկել օրենքի խախտման փաստն արձանագրելուց հետո մեկ տարվա ընթացքում: Պատժամիջոցները չեն կարող կիրառվել, եթե օրինախախտման փաստը տեղ է գտել ավելի քան երեք տարի առաջ: Կրկնվող օրինախախտումների դեպքում համապատասխան պատժամիջոցների կիրառման հետ կապված գործընթացները կարող են սկսվել վերջին անգամ խախտման փաստն արձանագրելուց հետո երեք տարվա ընթացքում:
3. Տուգանք կարող է սահմանվել օրինախախտման վերջին փաստի գրանցման պահից հետո հինգ տարվա ընթացքում:
4. Տուգանքը պետք է վճարվի այն սահմանելու մասին համապատասխան որոշման ուժի մեջ մտնելուց հետո 30 օրվա ընթացքում: Տուգանքի գումարը գանձվում է նախարարության կողմից, վարչական իրավախախտումների մասին օրենսդրության պահանջների համաձայն:
5. Տուգանքներից ստացված գումարը համարվում է պետական եկամուտ:
6. Տուգանք սահմանելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Հոդված 22. Օրենքի կիրարկման ապահովումը

Օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածներով սահմանված դրույթները կիրարկելու համար նախարարությունը պետք է ընդունի համապատասխան ենթաօրենսդրական ակտ:

Անցումային և եզրափակիչ դրույթներ

Հոդված 23.

Սույն օրենքի համաձայն որոշումներ կայացնելու և վկայագրեր տալու հետ կապված հարցերը կարգավորվում են վարչական օրենսգրքով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 24.

1. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին հավասարության և հանրամատչելիության սկզբունքների հիման վրա գրադարանային և տեղեկատվական ծառայություններ մատուցող հանրային գրադարանները օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 12 ամսվա ընթացքում կհամարվեն «գրադարան» սույն օրենքի իմաստով:
2. Այն գրադարանները, որոնք չեն ապահովում սույն օրենքի հոդված 4-ի առաջին պարբերության դ) ենթակետով սահմանված ծառայությունները, կարող են գրանցվել գրադարանների պետական ռեգիստրում սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված

կարգի համաձայն: Եթե մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը գրադարանը չապահովի վերը նշված ծառայությունների իրականացումը, նախարարությունը չէղյալ կհամարի գրադարանի գրանցումը ռեզիստրում:

Հոդված 25.

Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո «Գրադարանների միասնական համակարգի մասին» թիվ 53/1959 օրենքը կորցնում է իր ուժը:

Հոդված 26. Ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2002 թվականի հունվարի 1-ին:

Անզլ. թարգմ. 7. Կարապետյանի

ԻԳՈՒՄՆՈՎԱ ՆԱՏԱԼՅԱ

Եվրասիայի գրադարանային վեհաժողով
ասոցիացիայի մասնագիտական խորհրդի նախագահ
ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՊՀ մասնակից երկրների տիպային գրադարանային կողմից ներդրման և գրադարանային գործում օրենսդրական իրավիճակի մասին

Համաձայն ԱՊՀ միջպառլամենտական վեհաժողովի մշակույթի մշտական հանձնաժողովի և ԱՊՀ մասնակից պետությունների ազգային գրադարանների տնօրենների համատեղ որոշման (15.09.2001թ.: Երևան), անց է կացվել ԱՊՀ երկրներում գրադարանային գործի օրենսդրական ապահովվածության և օրենքների օգտագործման վերաբերյալ վերլուծություն, որոնք ընդգրկված են ԱՊՀ մասնակից պետությունների համար նախատեսված տիպային գրադարանային կողմից մեջ: Արդյունքում ստացվել են հետևյալ տվյալները:

«Գրադարանային գործի մասին»

«Գրադարանային գործի մասին» օրենքը ընդունվել և գործում է ԱՊՀ հանրապետությունների մեծ մասում՝ Ադրբեջանում (1999), Բելոռուսում (1995), Մոլդովայում (1997), Ղրղզստանում (1998), Ռուսաստանում (1994), Թուրքմենիայում (2000), Ուկրաինայում (1993):

2001 թվականին Մոլդովայում և Ուկրաինայում օրենքներ ընդունվեցին գրադարանային գործի մասին գործող օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Օրենքի նոր խմբագրության նախագիծ նախապատրաստված է Բելոռուսում: Հայաստանում, Ղազախստանում և Ուզբեկստանում «Գրադարանային գործի մասին» օրենքը մշակված է և ներկայացված իրենց խորհրդարաններին, բայց մինչ այժմ ընդունված չեն: Ղրղզստանի մասնագետների կարծիքով «Գրադարանային գործի մասին» դեռևս 1998 թվին ընդունված օրենքի հիմնական հոդվածները չեն գործում: Դա առաջին հերթին վերաբերվում է հանրապետությունների գրադարանների նյութական և ֆինանսական ապահովվածությանը:

«Փաստաթղթերի պարտադիր օրինակի մասին»

«Փաստաթղթերի պարտադիր օրինակի մասին» օրենքը ընդունվել է Ղրղզստանում (1997), Ռուսաստանում (1994), Ուկրաինայում (1999): 2002թ. հունվարի 23-ին Ռուսաստանում ընդունվել է օրենք՝ «Փաստաթղթերի պարտադիր օրինակի մասին» դաշնային օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Բելոռուսում և Ուզբեկստանում օրենքը մշակվել և ներկայացվել է հանրապետությունների խորհրդարաններին, բայց չի ընդունվել: Ղազախստանում, համաձայն կառավարության որոշման, ընդունվել է փաստաթուղթ՝ 3000 հանրային և հատուկ գրադարաններին, այդ թվում նաև մանկական, պատանեկան, ֆիզիկական արատներով անձանց սպասարկող և այլ գրադարաններին հրատարակությունների պարտադիր անվճար օրինակի ապահովման վերաբերյալ: Ադրբեջանում և Մոլդովայում «Գրադարանային գործի մասին» օրենքների հատուկ հոդվածներով և այլ փաստաթղթերով կարգավորվում է պարտադիր օրինակի գործողության բնագավառը:

«Ազգային գրադարանի մասին» օրենք

Ներկա տիպային օրենքը եղել է և այժմ էլ հրատապ է նախկին խորհրդային Միության հանրապետությունների ազգային գրադարանների զարգացման համար: Մշակվում են կանոնադրություններ, և այլ փաստաթղթեր, որոնք կարգավորում են ազգային գրադարանների գործունեությունը: «Ազգային գրադարանների մասին» տիպային օրենքի ստեղծումը առաջ բերեց նման օրենքների ստեղծման անհրաժեշտությունը հանրապետություններում: Այսպես՝ Բելոռուսում օրենքի նախագիծն արդեն ներկայացված է խորհրդարան: Ղրղզստանում սկսվել է դրա մշակումը: Ռուսաստանի Դաշնության որոշ ինքնավարություններում ընդունված են օրենքներ «Ազգային գրադարանների մասին»: Շատ երկրներում «Գրադարանային գործի մասին» օրենքում ազգային գրադարանների գործունեությանը նվիրված է հատուկ բաժին: Ադրբեջանում տիպային օրենքի հիման վրա կազմվել է կանոնադրություն «Ազգային գրադարանի մասին», որը ներկա պահին ներկայացված է Կառավարությանը: Ռուսաստանի ազգային և Ռուսաստանի պետական գրադարանների համար Ռուսաստանի Դաշնության կառավարությունը հաստատել է կանոնադրություններ, որոնք կարգավորում են նրանց գործունեությունը:

«Հանրային գրադարանի մասին» օրենք

Մինչև տիպային օրենքի ստեղծումը, ԱՊՀ երկրներում «Հանրային գրադարանի մասին» նման օրենքի մշակումներ չեն եղել: Հանրային գրադարանների վերաբերյալ օրենսդրական նորմերը գրանցված են այլ՝ հիմնականում «Գրադարանային գործի մասին» օրենքներում: «Հանրային գրադարանի մասին» տիպային օրենքի հրապարակումից և հանրային գրադարանի ծառայության զարգացման մասին ԻՖԼԱ/ՅՈՒՆԵՍԿՕ 2001 թվականին հաստատված ղեկավարման ուղեցույցների ընդունումից հետո Ռուսաստանում մշակվեց և ընդունվեց «Հանրային գրադարանի գործունեության մասին տիպային չափորոշիչները»: Թուրքմենիայում խորհրդարան է ներկայացված «Հանրային գրադարանի մասին» օրենքի նախագիծը: 2001 թվականին Ադրբեջանում մշակված է «Հանրային գրադարանների մասին» կանոնադրությունը:

«Գրքային հուշարձանների մասին»

Գրադարանային մասնագետների կարծիքով սա այն կարևոր օրենքներից մեկն է, որոնցով ղեկավարվում են ԱՊՀ հանրապետությունների գրադարանները, քանի որ ձեռագիր և տպագիր գրքային ժառանգության պահպանմանը և օգտագործմանը տրվում է առաջնային նշանակություն: Բելոռուսի *Ազգային ժողովի ներկայացուցիչների պալատի մշակույթի հանձնաժողովի* աշխատանքային գործունեության ծրագրում 2004 թվականին ընդգրկված է «Գրքային հուշարձանների մասին» օրենքի նախագծի քննարկումը: Համաձայնության փուլում է Բելոռուսի նախագահի հրամանագրի նախագիծը՝ «Բելոռուսի Հանրապետության գրքային հուշարձանների ազգային ֆոնդի կանոնադրության հաստատման մասին»: Ռուսաստանում մշակված «Ռուսաստանի Դաշնության գրքային հուշարձանների կանոնակարգը» ներկա պահին գտնվում է հաստատման փուլում: Ադրբեջանում գործում են ենթաօրենսդրական ակտեր՝ «Տպագիր նյութերի և գրքային ֆոնդերի հաշվառումը, պահպանումը և օգտագործումը» (Նախարարների Կաբինետի հ. 29 որոշում, 6.03.2000թ.), «Գրքային ֆոնդերի վերագնահատման մասին», Կանոններ «Գրքերին վնաս հասցնելու համար ընթերցողական և իրավաբանական պատասխանատվության կիրարկման մասին», հաստատված Ադրբեջանի մշակույթի նախարարության կողմից, Ուկրաինայի Նախարարների Կաբինետի կողմից 1999 թվականին ընդունվել է «Գրադարանային և արխիվային ֆոնդերի պահպանման ծրագիր 2002-2005 թվականների համար»:

«Մեքենայական ընթերցման կրիչների վրա մատենագիտական գրանցումների մասին»

Տիպային օրենսդրական ակտերի համակարգում հատուկ նշանակություն ունի «Մեքենայական ընթերցման կրիչների վրա մատենագիտական գրանցումների մասին» օրենքը: Տվյալ տիպային օրենքի մշակման և ներդրման հեռանկարները ԱՊՀ հանրապետություններում մատենագիտական և հեղինակային գրանցումների հաղորդակցական ՅՈՒՆԻՍԱՐԿ ֆորմատների հիմքի վրա, բավականին մեծ են: Տվյալ տիպային օրենքի ներդրումը հնարավորություն կտա կառուցել տարածաշրջանային (ԱՊՀ շրջանակներում) համատեղ տեղեկատվական համակարգ, «Սոնեգոսի» շրջանակներում օնլայնի ռեժիմով էլեկտրոնային կատալոգների տվյալների շտեմարանների և լիատեքստ տեղեկատվության օգտագործման հնարավորությամբ: Տարածաշրջանային տեղեկատվական համակարգի ձևավորման առաջին փուլը կիրականացվի Ռուսմարկ,

Բելմարկ, Ղազախմարկ ազգային ֆորմատների և ընդհանուր հաղորդակցական ֆորմատների մշակման շնորհիվ: Եվրասիայի գրադարանային վեհաժողովի գործող օրենսդրական համակարգի ԱՊՀ մասնակից պետությունների համար նախատեսված տիպային գրադարանային օրենսգրքի օգտագործման հետազոտության հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները՝

1. Գրադարանները ակտիվորեն օգտագործում են իրենց օրինաստեղծ գործունեության մեջ մոդելային գրադարանային կոդեքսի օրենսդրական ակտերը ԱՊՀ մասնակից պետությունների համար, ինչպես փաստաթղթերի մշակման և քննարկման փուլում, այնպես էլ դրանց հաստատումը ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի կողմից: Մոդելային օրենքները հիմք են ծառայում տարբեր տիպի նորմատիվ փաստաթղթերի ստեղծման համար, որոնք կարգավորում են գրադարանների աշխատանքը:

2. Գրադարանային մասնագետները նշում են, որ ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի կողմից հաստատված օրենքները, ցավոք, ակտիվորեն չեն ընդունվում հանրապետությունների ազգային խորհրդարանների կողմից և չունեն պարտադիր բնույթ:

Պատճառն, ըստ երևույթին, Միջխորհրդարանական վեհաժողովի և հանրապետությունների խորհրդարանների փոխգործունեության աննարդյունք և չմշակված լծակներն են: Գործընթացը գնում է «ներքևից-վերև», այլ ոչ թե հակառակը, դա էլ նվազեցնում է գրադարանային գործունեության շրջանում օրենսդրական գործունեության արդյունավետությունը:

Ռուս. թարգմ.՝ Անահիտ Ավագյան

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՈԱՖԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Հայաստանի Ազգային գրադարանի փոխտնօրեն
ՀԳՄ-ի քարտուղար

ԹԲԻԼԻՍՅԱՆ ՍԵՄԻՆԱՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

2001թ. մայիսի 5-8-ը Վրաստանի Հանրապետության մայրաքաղաքում տեղի ունեցավ Հարավ-Կովկասյան երկրների գրադարանային միությունների տարածաշրջանային սեմինարը՝ «Հարավ-Կովկասյան գրադարանային միությունների ամրապնդումը» թեմայով:

Սեմինարի նպատակն էր.

- խրախուսել և զարգացնել Հարավ-Կովկասյան գրադարանային միությունների համագործակցությունը.
- օգնել ազգային և տարածաշրջանային միություններին բարձրացնելու գրադարանների դերը հասարակության մեջ՝ բնակչության տեղեկատվությունը ապահովելու նպատակով.
- մշակել տարածաշրջանային, ազգային և միջազգային օժանդակումը ուժեղացնելու մեթոդներ.
- մշակել սեմինարի անցկացման օրինակելի նմուշ, որը գրադարանային միությունների և գրադարանների հետ համատեղ կօգտագործվի նոր ձևավորվող ժողովրդավարական երկրներում:

Սեմինարի կազմակերպիչներն էին՝ Ամերիկյան գրադարանային միությունը, Հայկական գրադարանային միությունը, Ադրբեջանում գրադարանային գործի զարգացման միությունը և Վրաստանի տեղեկատվական մասնագետների միությունը:

Սեմինարին մասնակցում էին տասական ներկայացուցիչ Հայաստանից, Վրաստանից, Ադրբեջանից և 7 հոգի Ամերիկայի Միացյալ Նահանգներից:

Ամերիկյան պատվիրակության կազմում Թբիլիսի էր ժամանել նաև մեր հայրենակցուհին՝ Հայկական գրադարանային միության պատվավոր անդամ Սիլվա Նաթալի Մանուկյանը, որի ներկայությունը հայկական պատվիրակության համար ոգևորիչ էր:

Սեմինարի բացմանը խոսք ասաց և մասնակիցներին հաջողություններ մաղթեց Վրաստանում ԱՄՆ-ի դեսպանը:

Արարողակարգային ողջույնի խոսքերից հետո «Գրադարաններ. ժողովրդավարության անկյունաքարը» զեկուցմամբ հանդես եկավ Ամերիկյան գրադարանային միության նախագահ Նենսի Քրանիքը:

Ն. Քրանիքի զեկուցումը խարսխված էր ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտի՝ գրադարանի մասին ասված, հետևյալ մտքի վրա՝ Գրադարանը արագ մտքի մեծագույն խորհրդանիշ է:

Այնուհետև նա կարևորեց գրադարանի դերը, որպես ժողովրդավարական հասարակության անհրաժեշտ մաս: Տեղեկացված հասարակությունը համարվում է ժողովրդավարության հիմքը: Վերջին հաշվով ժողովրդավարությունը բանավեճ է մարդկանց միջև: Անհրաժեշտ է նպաստել հասարակության ազատությանը՝ քաղաքացիների ազատ (անվճար) և բաց մուտքը դեպի տեղեկատվությունը ապահովելով: Գրադարանը պետք է ապահովի տեղեկատվության միջոցներով քաղաքացիների գիտելիքների զարգացումը, որն անհրաժեշտ է ժողովրդավարական գործընթացներին մասնակցելու համար: Գրադարանը պետք է հնարավորություն տա անցկացնել ազատ, անկաշկանդ, չսահմանափակված երկխոսություն և երաշխավորի մտքերի ազատությունը:

Գրադարանները գոյություն ունեն ամենուր և բոլորի համար: Նրանք ապահովում են հասարակության երկխոսության ազատությունը: Այդպիսով, նրանք տարածում են տեղեկատվություն, որպեսզի հասարակությունը կարողանա մասնակից դառնալ ղեկավարման գործընթացներին: Նրանք ապահովում են մուտքը դեպի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ տեղեկատվությունը, որպեսզի հասարակությունը կարողանա վերահսկել իր ընտրած պաշտոնատար անձանց աշխատանքը: Գրադարանը հասարակության այն հավաքատեղին է, որտեղ կարելի է կիսել հետաքրքրությունները և հոգսերը: Նա հնարավորություն է ստեղծում զարգացնելու գիտելիքները, ստանալու տեղեկատվության բոլոր տեսակները և արդյունավետ օգտագործելու ստացած տեղեկությունները:

Այս ամենը կատարվում է ժողովրդավարության անկյունաքարը հանդիսացող ամերիկյան գրադարաններում, - նշեց Ամերիկյան գրադարանային միության նախագահը:

Սեմինարի մասնակից հանրապետություններից յուրաքանչյուրը ներկայացրեց իրենց միության աշխատանքները և հիմնախնդիրները:

Վրացական կողմից հանդես եկան Ազգային պառլամենտական գրադարանի փոխտնօրեն՝ Էմզար Զգերենյան, որի ելույթը ճանաչողական բնույթ ուներ և Վրաստանի տեղեկատվական մասնագետների միության նախագահ Բեսիկի Ստվիլիան:

Ադրբեջանի գրադարանային միության նախագահ Խալիլ Իսմայիլովը և փոխնախագահ Մուշգան Նազարովան ներկայացրեցին իրենց միությունը՝ նշելով, որ այն դեռևս ձևավորման փուլում է և դժվարություններ կան փորձի պակասի, աշխատանքային ուղղությունների ճշգրտման առումով:

Հայկական գրադարանային միության նախագահ Ներսես Հայրապետյանը հանդես եկավ միության վերջին տարիների գործունեության մասին ելույթով: Պետք է նշել, որ ՀԳՄ-ն ասելիք չատ ուներ: Այն նախաձեռնությունները, որոնցով ներկայացավ ՀԳՄ, (հատկապես կադրերի որակավորման բարձրացում և կրթական ծրագրեր) հավանության արժանացան սեմինարի մասնակիցների կողմից: Կարևոր էր նաև այն, որ Ն.Հայրապետյանի զեկուցումը ուղեկցվում էր համապատասխան սխեմաների և աղյուսակների ցուցադրությամբ:

Ամերիկյան պատվիրակության անդամ Սիլվա Մանուկյանը սեմինարի մասնակիցներին պատմեց իր և Հայկական գրադարանային միության 7-ամյա համագործակցության մասին՝ նշելով, թե ինչպիսի դժվարություններ է հաղթահարել ՀԳՄ-ն: Հիմա կարելի է ասել, որ այն կայացած կազմակերպություն է,- նշեց Ս.Մանուկյանը:

Այնուհետև սեմինարի մասնակիցներն առանձին խմբերում քննարկեցին հետևյալ հարցերը.

- գրադարանային միությունների ամրապնդումը հանուն իր անդամների, գրադարանների և հասարակության.
- գրադարանային միությունների ամրապնդման և ուժեղացման խնդիրները:

Այս հարցերի քննարկման արդյունքների ամփոփումը ցույց տվեց, որ մասնակիցները կարևորում են գրադարանային միությունների դերը հասարակության մեջ՝ որպես գրադարանային մասնագիտության հեղինակության բարձրացման, գրադարանավարների շահերի պաշտպանության և համախմբման կարևորագույն գործոնի:

Ի տարբերություն Ամերիկյան գրադարանային միության Հարավ-Կովկասյան երկրների գրադարանային միությունները լուրջ անելիքներ ունեն հասարակության մեջ գրադարանի և գրադարանային գործի տեղը և դերը կարևորելու ուղղությամբ:

Սեմինարի 2-րդ օրը ԱՄՆ-ի պատվիրակության անդամ Նենսի Բոյլը (Կոլորադոյի նահանգ) հանդես եկավ «Գրադարանի շահերի հիմնական տարրերը» զեկուցմամբ:

ԱԳՄ-ի նախագահ Նենսի Քրանիքը ելույթ ունեցավ «Գրադարանային միությունների շահերի պաշտպանության նշանակությունը խոշոր միջոցառումների ընթացքում» թեմայով: Նա հատկապես կարևորեց այնպիսի միջոցառումների անցկացումը ինչպիսիք են՝ Ազգային գրադարանային շաբաթը, Գրադարանային օրենսդրության և Ինֆորմացիայի ազատության օրը:

Նենսի Դավենպորտի (ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանից) զեկուցումը հետաքրքրական էր նրանով, որ արժարժում էր պետական իշխանավորների և օրենսդիրների հետ կապված աշխատանքում գրադարանային խնդիրների լուծման հարցերը:

Սեմինարի մասնակիցներին առանձին խմբերում քննարկեցին գրադարանի հետաքրքրությունների պաշտպանության նախաձեռնության օրինակներ:

Հայկական պատվիրակությունը նշեց տարբեր հիմնադրամների հետ համագործակցության ծրագրերի մասին, որոնք նպաստել են կադրերի ուսուցման, համակարգիչների ձեռք բերման, ինտերնետային կապի ստեղծման, գրականության վերականգնման աշխատանքներին:

Ադրբեջանական պատվիրակությունը կարևորեց նախագահ Հ. Ալիևի ամենամյա այցն Ազգային գրադարան, որի հիմքը դրվել է 1994 թվականին: Դրանից հետո յուրաքանչյուր այցելության ժամանակ Հ.Ալիևը Ադրբեջանի Ազգային գրադարանին է նվիրում 5 հազար դոլար: Իսկ Թուրքիային նվիրված ցուցահանդեսի կազմակերպումից հետո, թուրքական կողմը վերանորոգել է շենքի մի ամբողջական հատված:

Վրաստանի ազգային պառլամենտական գրադարանում նորոգվել և ժամանակակից խնդիրներին համապատասխան ձևավորվել էր նիստերի դահլիճը և, ձեռք էին բերվել սարքավորումներ՝ սինխրոնիկ թարգմանություններ կատարելու համար:

Սեմինարի 2-րդ օրվա վերջին և 3-րդ օրը միջև կեսօր Հարավ-կովկասյան երկրների պատվիրակություններն առանձին քննարկեցին իրենց տեսակետները և մտտեցումները տարածաշրջանային գործունեության մասին:

Ամերիկյան Ստահոգոլն այն էր, որ երեք կողմերի մասնակցությամբ դեռևս չի հաջողվել սեմինար-խորհրդակցություններ

անցկացնել Երևանում և Բաքվում: Համենայն դեպս, նման ցանկություն կողմերը հայտնեցին: Այս գործում կարևորվում է միջնորդ երկրների ջանքերը:

Համագործակցությունը ընդլայնելու և խորացնելու համար պատվիրակությունները նպատակահարմար գտան համատեղ հրատարակություններ իրականացնել, ինչպես նաև, որոշակի ծրագրերի շրջանակում, սեմինար անցկացնել գրադարանավարների համար:

Թբիլիսիում՝ սեմինարի ընթացքում, ծնվեց և իմաստավորվեց Հայաստանում ազգային գրադարանային շաբաթ անցկացնելու գաղափարը, որը հավանության արժանացավ Ամերիկյան գրադարանային միության կողմից: Նրանք համաձայնություն տվեցին համագործակցելու և հովանավորելու Հայկական գրադարանային միության նախաձեռնությունը:

Սեմինարի ծրագիրը հազեցած էր: Տիրում էր գործնական մթնոլորտ: Նշենք նաև, որ սեմինարը վարողների և աշխատանքների մասնակցում էր ԵՆԻ Սայմոնսին՝ Ամերիկյան գրադարանային միության նախկին նախագահը: Երկամյա աշխատանքային փորձով, եռանդով, ճիշտ կողմնորոշվելու հմտությամբ և հունորով, նա նպաստեց սեմինարի անցկացման հաջողությանը¹⁰:

Սեմինարի կազմակերպումը հովանավորել էին՝ Քարնեգի կորպորացիան, Բաց հասարակություն և ինստիտուտը, Դեմոկրատիայի գծով դրամաշնորհի հանձնաժողովը, Ինտերնացիոնալ կրթության գծով ամերիկյան խորհուրդը, Վրաստանում ԱՄՆ-ի դեսպանատան հասարակական հարաբերությունների սեկտորը:

Հյուրընկալողները, իրենց բնորոշ հյուրասիրությամբ, ստեղծեցին սեմինարի անցկացման համար անհրաժեշտ տրամադրություն: Մասնակիցների համար էքսկուրսիա կազմակերպվեց Վրաստանի հայտնի վանքը՝ Մոխեթի:

Թբիլիսիում գտնվելու օրերին հայկական պատվիրակության անդամները այցելեցին Խոջիվանք՝ ծաղիկներ դրեցին հայ գրականության և մշակույթի մեծերի գերեզմաններին: Վերադառնալուց առաջ այցելեցինք նաև սուրբ Գևորգ եկեղեցի:

Տեղի քահանան տեղեկատվություն տվեց եկեղեցու և թբիլիսահայերի մասին:

...Եվս մի անհրաժեշտ և արդյունավետ քայլ կատարվեց տարածարջանային համագործակցության ճանապարհին:

ՆԵՐՍԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Միության նախագահ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԴՐԻՍՈՒՄ

Հունիսի 9-17-ը Սուդակում, Ղրիմ տեղի ունեցավ «Գրադարանները և ասոցիացիաները փոփոխվող աշխարհում. նոր տեխնոլոգիաներ և համագործակցության նոր ձևեր» միջազգային 8-րդ գիտաժողովը: Այն ԱՊՀ տարածքում կազմակերպվող ամենամերկայացուցչական գրադարանային ֆորումն է, որի աշխատանքին այս տարի մասնակցում էին մոտ 40 երկրների ավելի քան 1200 ներկայացուցիչներ: Կազմկոմիտեի աշխատանքը ղեկավարում էր Էլեկտրոնային գրադարանների և նոր տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործողների և մշակողների միջազգային ասոցիացիայի նախագահ, Ռուսաստանի պետական հանրային գիտատեխնիկական գրադարանի առաջին փոխտնօրեն Յակով Շրայբերգը:

Բացման լիագումար միստում լսվեց գիտաժողովի ամենամյա զեկույցը, որը ներկայացրեց նույն Յա. Շրայբերգը: Այն գրադարանային-տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման միտումներին նվիրված փայլուն ելույթ էր՝ համեմված համաաշխարհային գրադարանագիտական գործընթացների վերաբերյալ փաստական հարուստ տեղեկություններով, գրադարանների ավտոմատացման և տեղեկատվական համագործակցության խնդիրների մանրամասն վերլուծությամբ: Գրադարանային քաղաքականության, հասարակություն և գրադարան հարաբերության հարցերին էր նվիրված Ռուդոմինոյի անվան արտասահմանյան լեզուներով գրականության համառուսաստանյան գրադարանի գլխավոր տնօրեն Եկատերինա Գենիևայի «Հիշողություններ ապագայի մասին գրադարանների բաց էջերում» վերնագրված հրապարակախոսական, քաղաքացիական շնչով համեմված ելույթը:

Աշխատանքն ընթանում էր ըստ 11 մասնաճյուղերի: Բացի այդ գործում էր 8 կլոր սեղան, 18 սեմինար, կազմակերպվեց ավելի քան 20 հատուկ շնորհանդես: Գիտաժողովի ընթացքում ներկայացվեց ավելի քան 400 զեկույցում:

¹⁰ Անն Սայմոնը և Սիլվա Մանուկյանը հայկական պատվիրակության հետ վերադարձան Երևան: Մայիսի 11-ին Հայաստանի Ազգային գրադարանում կայացավ հանդիպում նրանց հետ:

Խոշորագույն պատվիրակությամբ ներկայացել էր Ռուսաստանը: Միայն Մոսկվայից կար ավելի քան 400 մասնակից: Մեր հարևան հանրապետություններից Ադրբեջանը ուներ 5, Վրաստանը՝ 2 ներկայացուցիչ: Գիտաժողովի գլխավոր հովանավորը Ռուսաստանի Բաց հասարակության ինստիտուտի (ԲՀԻ) հիմնադրամն էր, որի աջակցությամբ աշխատանքին մասնակցում էին ավելի քան 280 գրադարանային աշխատողներ: Հայաստանից գիտաժողովին մասնակցում էին 4 գրադարանային աշխատողներ՝ 3-ը ԲՀԻ հայկական մասնաճյուղի, մեկը՝ Միջազգային հետազոտությունների և փոխանակումների խորհրդի (Այրեքս) հովանավորությամբ:

Հանրապետական գիտատեխնիկական գրադարանի տնօրեն Ռաֆայել Հարությունյանի ելույթը նվիրված էր էլեկտրոնային գրադարանների ստեղծման խնդիրներին: «Գրադարանային կադրեր, մասնագիտություն և կրթություն» 6-րդ մասնաճյուղի 3-րդ նիստում ներկայացվեցին Հայկական գրադարանային միության նախագահ Ներսես Հայրապետյանի և Երևանի Ավ. Իսահակյանի անվան քաղաքային կենտրոնական գրադարանի տնօրեն Հասմիկ Կարապետյանի զեկուցումները:

Գիտաժողովի շրջանակում տեղի ունեցավ ԱՊՀ երկրների միջգրադարանային բաժնույթի համակարգի վերահաստատմանը նվիրված խորհրդակցություն, որին մասնակցում էր Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանը: Ներկայացված կանոնադրության նախագծի վերաբերյալ արվեցին մի շարք լուրջ դիտողություններ:

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գրադարանի գրքային ֆոնդի բաժնի վարիչ

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՕՐ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Հարավ-Կովկասյան երկրների գրադարանային և տեղեկատվական մասնագետների թեխնիկում 2001թ. մայիսին կայացած եռօրյա կոնֆերանսի ընթացքում որոշում ընդունվեց 2002թ. ազգային գրադարանային շաբաթվա անցկացման մասին: Հանրապետական գիտատեխնիկական գրադարանը 2001թ. հոկտեմբերի 4-ին կազմակերպեց միջոցառում նվիրված գրադարանի օրվան: Այն անց էր կացվում ազգային գրադարանային շաբաթվա ծրագրի նախապատրաստման շրջանակներում: Գրադարանի օրվա նպատակն էր հանրության լայն խավերին իրազեկ դարձնել արդի գրադարանի՝ որպես գիտական ու տեղեկատվական սպասարկում իրականացնող կառույցի առօրյային, դերին ու ծրագրերին, ինչպես նաև ներկա էտապում նրան հուզող հարցերին, հոգսերին ու պահանջներին: Նմանօրինակ միջոցառումները նպաստում են գրադարանների գործընթացի բարելավմանը, գրադարանավարների գործնական շփմանը, փորձի փոխանակմանը և գրադարանների համար աջակիցներ ու հովանավորներ գտնելուն:

Միջոցառումը պատշաճ կազմակերպելու համար ընտրվեց կազմկոմիտե գրադարանի տնօրեն Ռ. Հարությունյանի ղեկավարությամբ: Կազմվեց միջոցառման ծրագիր: Ճշտվեց ժամանակացույցը: Որոշվեց, թե ովքեր են հրավիրվելու:

Միջոցառման ընթացքում կազմակերպվել էին ցուցահանդեսներ գրադարանի ընթերցասրահներում: Մեծ դահլիճի ճեմասրահում ցուցադրվեցին շնորհալի ստեղծագործող Ա. Հայրապետյանի ձեռագործ աշխատանքները: Տեղի ունեցավ Գ. Քարամյանի «Հովհաննես Դավթյան» գրքի շնորհանդեսը՝ նվիրված հայ ականավոր գիտնականի կյանքին ու գործունեությանը: Գիրքը ներկայացրեց ՀԳԱԱ ակադեմիկոս Ա. Մանթաշյանը: Շնորհանդեսին ներկա էին գիտնականի այրին և նրա հարազատները: Օգտվելով պատեհ առիթից, որ Ֆլորիդայի համալսարանի գրադարանի տնօրեն Վ. Միլլերը հյուրընկալվում էր Երևանում, հրավիրեցինք մասնակցելու միջոցառմանը: Նա կարդաց դասախոսություն «Ապագայի գրադարանները. պատկերացումներ և իրագործում» թեմայով: Ա. Հայրապետյանի սրտառուչ և հաճելի համերգով էլ ավարտվեց միջոցառումը:

Գրադարանի օրվա միջոցառմանը հրավիրվել էին Հայկական գրադարանային միության վարչության անդամները, Երևանի խոշորագույն գրադարանների գրադարանավարներ, գիտնականներ, լրագրողներ, քաղաքական գործիչներ, ձեռներեցներ, համայնքի ներկայացուցիչներ: Միջոցառմանը հրավիրվել էին նաև Արաբկիր համայնքի դպրոցների ավարտական դասարանի աշակերտները: Հանրապետական գիտատեխնիկական գրադարանը հետագայում ևս կպահպանի կապերը դպրոցների հետ:

ՆԵՐՍԵՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Միության նախագահ

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Հոկտեմբերի 5-6-ին ՀՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի քննարկումը: Քննարկումը կազմակերպել էին ՀՀ ԱԺ և ՀՀ կառավարությունը: ՀՀ ԱԺ և կառավարության կողմից նախագիծը քննարկելիս պաշտոնական ներկայացուցիչներ էին նշանակված ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Շավարշ Քոչարյանը և ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար Ռուանդ Շառոյանը: Քննարկմանը մասնակցում էին օրենքի նախագծի ուղորտները ներկայացնող հաստատությունների, պետական և հասարակական կազմակերպությունների, ՋԼՄ ներկայացուցիչներ:

Նախագիծը ներկայացրեց և հարցերին պատասխանեց ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի փոխնախարար Կարեն Արիստակեսյանը: Գրադարանների տեսակետը ներկայացնելու համար քննարկմանը մասնակցում էին Հայաստանի Ազգային, հանրապետական երաժշտական, Խնկո Ապրր անվան հանրապետական մանկական գրադարանների տնօրենները:

ՆԵՐՍԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Միության նախագահ

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՎԵՐԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 13-15-ը ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության և Հայաստանի Ազգային գրադարանի նախաձեռնությամբ Երևանում տեղի ունեցավ Եվրասիայի գրադարանային վեհաժողով (ԵԳՎ) միջազգային կազմակերպության համակարգող խորհրդի 9-րդ նստաշրջանը և ԱՊՀ մասնակից պետությունների ազգային գրադարանների տնօրենների 2-րդ խորհրդակցությունը:

ԵԳՎ-ն ստեղծվել է 1993 թ-ին: Հայաստանի Ազգային գրադարանը նրա հիմնադիր անդամներից է: Կազմակերպությունը հանդես է եկել ԱՊՀ մասնակից երկրների գրադարանային օրենսդրության միասնականացման, միջգրադարանային բաժանորդագրության, երկրների միջև տպագիր երկերի պարտադիր օրինակների փոխանակության և մի շարք այլ օրենսդրական նախաձեռնություններով:

Նստաշրջանի և խորհրդակցության աշխատանքին մասնակցելու համար Երևան էին ժամանել Ռուսաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի ազգային գրադարանների տնօրենները և առաջատար գրադարանային մասնագետներ: Խորհրդակցության օրակարգում քննարկվեց «ԱՊՀ երկրներում գրադարանային գործի կազմակերպման և զարգացման հեռանկարները նոր պայմաններում» հարցը:

Հոկտեմբերի 13-ին Երևանի պետական համալսարանի հյուրատան դահլիճում տեղի ունեցավ խորհրդակցության հանդիսավոր բացումը: ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության անունից ողջույնի խոսքով մասնակիցներին դիմեց փոխնախարար Կարեն Արիստակեսյանը: Նույն օրը ԵԳՎ գլխավոր համակարգող ընտրվեց ՌԴԳ-ի գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն Ե. Նիկոնորովան:

2001թ. հոկտեմբերի 14-ին Հայաստանի գրողների միության նախագահության դահլիճում տեղի ունեցավ ԱՊՀ ազգային գրադարանների տնօրենների խորհրդակցություն, որին մասնակցում էին Հայաստանի Ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանը, Ռուսաստանի պետական գրադարանի գլխավոր տնօրեն Վ. Ֆեոդորովը, Ռուսաստանի ազգային գրադարանի գլխավոր տնօրեն Վլադիմիր Ջայցևը, Ղազախստանի ազգային գրադարանի տնօրեն Ռոզա Բերդիգալիևան և Ղրղզստանի ազգային գրադարանի տնօրեն Անարա Չինիբաևան:

ՌԴԳ գլխավոր տնօրեն Վ. Ֆեոդորովը ներկայացնելով ԱՊՀ տարածքի ամենախոշոր գրադարանը տեղեկացրեց, որ գրադարանն ըստ հաստիքացուցակի ունի 3100 աշխատող: Փաստացի աշխատողների քանակը միշտ պակաս է. 700-800 աշխատատեղ թափուր է, որի հաշվին գրադարանը կարողանում է կարգավորել աշխատավարձի հավելումների խնդիրը: Բարձր է կադրերի հոսունությունը: Տարեկան գրադարանից ազատվում է մոտ 500 աշխատող: Ըստ Ֆեոդորովի դրանք հիմնականում ուսանողներ են, որոնք աշխատանքի են անցնում գրապահոցում և սպասարկման բաժնում, շնորհիվ գրադարանի բավական բարձր վերապատրաստման կարողությունների ձեռք են բերում գիտելիքներ և փորձ և տեղափոխվում են այլ ոլորտներ՝ գտնելով ավելի բարձր վարձատրվող աշխատանք: Այս տարի ՌԴԳ «Ադամանդ» ֆիրմայի հետ համատեղ իրականացնում է զրբերի թվայնացման մի ծրագիր: Ամսեկան թվայնացվում է 2 հազար միջին ծավալի գիրք: ՌԴԳ

համագործակցելով Ռուսաստանի ԱԳ հետ պատրաստում է այս երկու գրադարանների միացյալ էլեկտրոնային կատալոգը:

ԱՊՀ ազգային գրադարանների միջև համագործակցության շրջանակում նա առանձնացրեց գրքափոխանակության, գրադարանների համալրման և ավտոմատացման խնդիրները: Նա առանձնապես կարևորեց նախկին ԽՍՀՄ ժողովուրդների լեզուներով գրականության հետ տարվող աշխատանքի փոխհամաձայնեցման խնդիրը: Իբրև ԱՊՀ երկրների ազգային գրադարանների փոխհամալրման մի տարբերակ նա առաջարկեց նոր լույս տեսած գրականության ցուցահանդեսների կազմակերպումը, որի նյութերը ամբողջությամբ նվիրատվության կարգով թողնվում է հյուրընկալող գրադարանին: ՌՊԳ տնօրենը առաջարկեց ԱՊՀ ազգային գրադարանների տնօրեններին համագործակցել և ձևավորել գրական-մշակութային կապերի վերաբերյալ էջեր և դրանք տեղադրել իրենց սեփական ինտերնետային էջերում:

Իր ելույթում հետաքրքիր տեղեկություններ հաղորդեց Ղազախստանի ԱԳ տնօրեն, ԵԳՎ նախագահ Ռ. Բերդիգալիևան: 1991թ. համեմատությամբ Ղազախստանում գրադարանների թիվը 21 հազարից կրճատվել է և 2001թ. կազմում է 10 հազար գրադարան: Թեև Ղազախստանում մինչև օրս օրենք չի ընդունվել պարտադիր օրինակի մասին, սակայն կառավարության հատուկ որոշումներով մոտ 3000 գրադարան ստանում են պարտադիր վճարովի օրինակներ, որի ֆինանսավորումը կատարվում է պատական կենտրոնացված հատկացումներով: Ղազախստանի ԱԳ-ում ներկայումս աշխատում է 120 գրադարանավար: Գրադարանն ունի իր էլեկտրոնային կատալոգը: Երեք գրադարանավարից մեկը աշխատում է համակարգչով: Գրադարանում մեծ աշխատանքներ են տարվել մամուլի թվայնացման ուղղությամբ: Պարբերական մամուլի շտեմարանում գրանցված են պարբերականներ սկսած 1913թ-ից: Այն թողարկվել է նաև լազերային սկավառակով: Գրադարանի վերջին տարիների նորանվտանգություններից է դրամաշնորհային կենտրոնի ստեղծումը և գրադարանին կից ասպիրանտուրայի բացումը, որը հնարավորություն է տալիս սեփական գիտական կադրերի պատրաստման համար:

Ռուսաստանի ազգային գրադարանի տնօրեն Վ. Ջայցևը իր ելույթում առաջարկեց ԵԳՎ կազմում ստեղծել ԱԳ տնօրենների մշտական հանձնաժողով և այդ կառույցը անդամագրել ԻՖԼԱ-ին: Իր գլխավորած գրադարանի մասին նա հաղորդեց, որ սեպտեմբերի 1-ին ավարտել են գլխավոր այբբենական գրացուցակի քարտերի թվայնացումը և շուտով այն կտեղադրեն իրենց ինտերնետ հանգույցում:

Ա. Զինիբաևան, ներկայացնելով Ղրղզստանի ԱԳ ասաց, որ 1991թ. համեմատությամբ իրենց հանրապետությունում փակվել է 742 գրադարան, հիմնականում՝ արհմիութենական և հանրային բնույթի: Ներկայումս Ղրղզստանում կա 3040 գրադարան, այդ թվում՝ 1007 հանրային բնույթի: Հրատարակում են «Գրադարանային Ղրղզստան» հանդեսը, որտեղ լուսաբանվում է հանրապետության գրադարանային առօրյան: Գրադարանն իրականացրել է 11 դրամաշնորհային ծրագիր: Աշխատանքներ են տարվում համակարգչացման ուղղությամբ: Գրադարանում կա 50 անհատական համակարգիչ, որոնք միավորված են 3 լոկալ ցանցի մեջ:

Օգտվելով պատեհ առիթից, որ այդ նույն օրերին Երևանում տեղի էր ունենում ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի մշակույթի, տեղեկատվության, տուրիզմի և սպորտի մշտական հանձնաժողովի հերթական նիստը հոկտեմբերի 15-ին դրան մասնակցեցին նաև Ռ. Բերդիգալիևան և ԵԳՎ գլխավոր համակարգող Ն. Իգունովան: ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի պատգամավորների հետ քննարկվեցին ԵԳՎ մշակույթի, տեղեկատվության, տուրիզմի և սպորտի մշտական հանձնաժողովի համագործակցության խնդիրները և եղանակները:

Խորհրդակցության մասնակիցների համար կազմակերպվեցին նաև այցեր մշակութային հաստատություններ և տեսարժան վայրեր:

ԵԳՎ խորհրդակցություններին մասնակցում էին ներկայացուցիչներ տարբեր գրադարաններից:

Հոկտեմբերի 22-24-ին Երևանում տեղի ունեցավ Եվրոխորհրդի մշակույթի, գիտության և կրթության միջխորհրդարանական վեհաժողովի մշտական հանձնաժողովի նիստը:

Հոկտեմբերի 22-ի առավոտյան նիստում «Գրադարանները, մշակույթը և մշակութային ժառանգությունը. մարտահրավերներ և հնարավորություններ» թեմայով ելույթ ունեցավ ՀԳՄ նախագահ Ն. Հայրապետյանը: Ձեկուցման մեջ նա անդրադարձավ Հայաստանում գրադարանային համակարգի գործունեության իրավական և օրենսդրական հարցերին, ՀԳՄ գործունեությանը, տարածաշրջանային համագործակցության և

Եվրոպական գրադարանային-տեղեկատվական կազմակերպությունների հետ Հայաստանի գրադարանների ինտեգրման խնդիրներին:

Դեկտեմբերի 3-15-ը Հայկական գրադարանային միությունը Վրաստանի տեղեկատվական մասնագետների միության հետ համատեղ կազմակերպել էր երկշաբաթյա վերապատրաստման դասընթացներ: Այն վարեց Վրաստանի և Հայաստանի գրադարանային մասնագետների միացյալ խումբը: Պարապմունքները տեղի ունեցան Հայաստանի Ազգային գրադարանի և IREX-ի Ինտերնետի ուսուցման ծրագրի միացյալ ինտերնետ կենտրոնում: Ուսուցման թեմաներն էին «Գրադարանի կառավարում», վարող՝ Գեորգի Շատիրիշվիլի, «Ինֆորմացիայի կառավարում», Աննա Շիրինյան, «Էլեկտրոնային գրադարանային գրացուցակներ և դասակարգում», Սաթենիկ Ավագյան, «Ինտելեկտուալ ազատություն», Իրինա Չանտուրիշվիլի, «Դրամաշնորհները և գրադարանի համար միջոցների հայթայթումը», Քեթևան Ստվիլիա և այլն: Պարապմունքները անցկացվեցին հայերեն և ռուսերեն լեզուներով: Մասնակցեցին 17 գրադարանային աշխատող Հայաստանի Ազգային, Երևանի Ավ. Իսահակյանի անվան քաղաքային կենտրոնական, Հանրապետական գիտա-բժշկական, ՀՀ ԳԱԱ հիմնական և այլ գրադարաններից:

Սեփական լրատվություն

ՄԵՐ ՀՅՈՒՐԱՍՐԱՀԸ

ՆԻՆԵԼ ՈՍԿԱՆՅԱՆԻ ՀԵՏ

Ամանորի առիթով ՀԳՄ «Տեղեկագրքի» խմբագրակազմը այցելեց անվանի մատենագետ, ՀՀ վաստակավոր գրադարանավար Նինել Աշոտի Ոսկանյանին: Հյուրընկալ տանտիրուհին մեզ դիմավորեց երևանի կենտրոնում գտնվող իր բնակարանում:

Ներս մտնելով անմիջապես հայտնվում ես մի ինքնատիպ և անկրկնելի միջավայրում: Ն. Ոսկանյանի բնակարանը մի յուրօրինակ թանգարան է: Անմիջապես ուշադրություն են գրավում գրքերի, ծովային խխունջների, գեղանկարների և լուսանկարների, քանդակների և արձանիկների հավաքածուները: Քարերի ու խխունջների հանդեպ սերը բացատրվում է բնության նկատմամբ նրա պաշտամունքով: Դրանք Ն. Ոսկանյանի համար բնության անձեռակերտ ստեղծագործություններ են, որոնք, իր կարծիքով, ստեղծվել են ոչ թե մարդու, այլ՝ Աստծո կամքով:

Ն. Ոսկանյանի օրը սկսվում է ծաղիկների հետ զրուցելով: Նա ծաղիկներին է «զիջել» նաև իր փոքրիկ բնակարանի միակ սեղանը: «Ծաղիկներն ինձ ուժ են տալիս», -ասում է նա: Եվ իրոք, 10-րդ հարկի բարձունքում այս սեղանը մի փոքրիկ աշխարհ է: Տարբեր երկրներ կատարած բազմաթիվ ուղևորություններից և գործուղումներից նա, որպես օրագրություն, բերել է պես-պես ծաղիկներ, որոնք չորացնելով, դարձրել է յուրահատուկ մի հավաքածու, վերնագրելով՝ «Ճամփորդական հուշերս ծաղիկների լեզվով»:

Տասնամյակներ շարունակ շփվել ու մտերմացել է մշակույթի և արվեստի անվանի գործիչների հետ՝ Մարտիրոս Սարյան, Պարույր Սևակ, Սիլվա Կապուտիկյան, Վազգեն Առաքին Կաթողիկոս, Ռաֆայել Իշխանյան, Գառու, Համո Սահյան, Վահագն Դավթյան... Անհնար է բոլորին թվարկել:

Նրա անձնական գրադարանում կան բազմաթիվ հեղինակային մակագրություններ, որոնք, ինչպես ինքն է ասում. «Ամեն անգամ կարդալով... վեր են բարձրանում»: Ահա դրանցից մի քանիսը՝

- Մ. Սարյան - «Սիրելի Նինելին, հայ ժողովրդի մասին լավագույն երազանքների համար»:
- Վազգեն Ա, Կաթողիկոս Ամենայն Հայոց. «Մեծարգո տիկին Նինել Ոսկանյանին, գնահատանքով և օրհնությամբ», 22.02.1967թ.
- Ալիսա Կիրակոսյան «Իմ, շատ իմ, Նինել Ոսկանյանին, որուն ճանաչելու բախտը ունեցա, իբրև իմ հարազատին հարազատը, իմ սրտին սիրտը», մակագրությունն արված է «Արմատ և էություն», 1967 զրքի վրա, 2.12.1967թ.
- Պ. Սևակ - «Լավագույն տարիներիս լավագույն ընկերուհուս՝ սքանչելի Նինելին և իր սիրելի Մակարին, քնքուշ սիրով ու եղբայրական նվիրվածությամբ իրենց Պարույրից»:
- Լևոն Ջեքիյան - «Սիրելի Նինելին, Վենետիկյան հին օրերու լաւագոյն յուշերով ու երեսնեան նոր օրերու ամենաջերմ իղձերով»:

Մարտիրոս Սարյանի, Երվանդ Քոչարի և Հովհաննես Ջարդարյանի վրձնած Ոսկանյանի դիմանկարների ներքո ահա թեյի սեղանի շուրջ սկսում ենք մտերիմ զրույցը, որը ականայից դառնում է հարցազրույց նրա հետ:

Հարց – Ինչպե՞ս ընտրեցիք գրադարանավարի մասնագիտությունը, արդյոք այն միանգամից եք ընտրել, թե կյանքում այլ նախասիրություններ էլ եք ունեցել:

Պատասխան – Ամենից շատ սիրել են գրականությունը և բնությունը: Սերը դեպի գրականությունը ինձ տարավ գրադարան, իսկ սերը դեպի բնությունը՝ բազմաթիվ ճամփորդություններ ամբողջ Հայաստանով՝ վանքեր, տեսարժան վայրեր, ինչպես նաև աշխարհի 15 երկրներ, 42 քաղաքներ, չհաշված նախկին Խորհրդային բոլոր հանրապետությունները: Շատ են հավանում հետևյալ ասույթը. «Եթե նման են օրերդ բոլոր, կնշանակի ապրել ես մեկ օր»: Առաջնորդվել են այդ ասույթով և հաստատ մեկ օր չեն ապրել...

Կյանքի սեմին երազում էի դառնալ բժիշկ կամ մանկավարժ: Միշտ երազել են լինել մանկապարտեզի դաստիարակ, քանի որ երեխաները ասես մաքուր գրատախտակներ են և քո չիրականացած երազանքները կարող ես ներարկել նրանց, փոխանցել քո գաղափարները, սկզբունքները: Ափսոս, մանկավարժ չդարձա:

Ինչո՞ւ բժիշկ ու մանկավարժ: Որովհետև այդ երկուսը ամենամարդասիրական մասնագիտություններն են: Մեկը բուժում է մարդու մարմինը, մյուսը՝ հոգին:

Իսկ ինչո՞ւ այնուամենայնիվ դարձա մատենագետ: Իմ կարծիքով մարդը չպետք է սոսկ կատարող լինի, այլ դրսևորի իր եսը իր գործի մեջ, նվիրվի անմնացորդ: Գտնում եմ, որ մատենագետից, գիտելիքներից բացի, պահանջվում է ավելի շատ բարեխղճություն,

անշահախնդիր նվիրում: Մի տեսակ նվիրում ես ինքդ քեզ անհայտ, անծանոթ ընթերցողին: Այսինքն՝ մատենագետը չպետք է ակնկալի, թե աշխատանքի դիմաց որևէ փոխհատուցում կլինի: Քո գիտելիքները պետք ծառայեցնես մարդկանց, առանց նրանց տեսնելու և ճանաչելու: Ժամանակն է տալիս մատենագետի աշխատանքի գնահատականը:

Չարդ – Կարող եք առանձնացնել Ձեր կյանքի առավել նշանակալի իրադարձությունները:

Դրանք են մայր դառնալու, տատիկ դառնալու և թոռներ ունենալու ամենաերջանիկ պահերը... Ապա նաև «Չայ գրքի մատենագիտության» առաջին հատորի տպագրությունը, որին 25 տարի նվիրվել են անմնացորդ, անգամ ընտանիքիս հաշվին: Երջանկություն են ապրել, երբ առաջին անգամ այցելեցի Վենետիկի սբ. Մարկոսի տաճարը և ոտք դրեցի Սուրբ Ղազար կղզի... Երբ 1969թ. կանգնել էի դեմհանդիման եգիպտական բուրգերին, երբ 1991թ. Վաշինգտոնի Կոնգրեսի գրադարանում էի...

Ծնվել են գարնան զարթոնքի հետ, մարտի 4-ին Երևանում, ծառայողի ընտանիքում: Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը գերազանցությամբ ավարտելուց հետո ընդունվել են Մոսկվայի Չերնիշևսկու անվան ինստիտուտի գրականության ֆակուլտետը: Սակայն Չայրենական մեծ պատերազմի պատճառով, ուսումնա շարունակել են Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի եվրոպական գրականության բաժնում: Ապա ընդունվել են համալսարանի արտասահմանյան գրականության գծով ասպիրանտուրան:

1951թ. դասավանդել են Երևանի պետական համալսարանի և Երևանի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ու մշակույթի ֆակուլտետների գրադարանային բաժիններում /«Արտասահմանյան գրականություն» և «Գրքի պատմություն»/:

Դասախոսական աշխատանքին զուգընթաց 1956թ. մինչև 2000թ., աշխատել են Չայաստանի Ազգային (Նախկին Ալ. Մյասնիկյանի անվան) գրադարանում, երկար տարիներ ղեկավարել են հայ գրքի մատենագիտության բաժինը: 1957-1962թթ. սովորել են Մոսկվայի կուլտուրայի ինստիտուտի գրադարանային ֆակուլտետի հեռակա բաժնում:

Չարդ – Ինչն էք գնահատում մարդու մեջ:

Պատասխան – Լավատեսությունը և բարությունը: Առաջնորդվում են Աստվածաշնչյան ոսկե օրենքով՝ ուրիշների հետ վարվիր այնպես, ինչպես կուզես քեզ հետ վարվեն:

Չարդ – Իսկ ինչը չէք ընդունում մարդու մեջ: Ինչն էք համարում արգահատելի:

Պատասխան – Չարությունը և նախանձը: Արդեն նախանձ բառը նշանակում է՝ **Նախ իմ անձը**: Կա նախանձի երկու տեսակ: Առաջինը, երբ հավասարը հավասարին է նախանձում, որը կոչվում է բարի նախանձ, թեև այդ ձևակերպումը չեն ընդունում: Եվ երկրորդ, երբ անարժանը նախանձում է արժանավորին: Սա ինձ համար ամենատեղիկն և ամենաքստմնելիկն է: Այստեղ առաջին նախանձի մրցակցությունը չկա: Փոխարենը վատը, անարժանը ձգտում է իրենից բարձրին ցածրացնել, իրեն հավասարեցնել: Սա ակամա հիշեցնում է Լև Տոլստոյի «Փիղը և քոթոթը» առակը: Անարժանը հայտնվում է քոթոթի ծիծաղելի և ողորմելի վիճակում:

Չարդ – Ինչ կանեիք, եթե շատ հարուստ լինեիք:

Պատասխան - Դեռևս երիտասարդության տարիներին մտածել էի ծերանոց, մանկատուն հիմնելու մասին: Սակայն այնպիսի մանկատուն, ուր ծնողազուրկ, նոր կյանք մտնող երեխան չզգա իր դժբախտ վիճակը, ծնողների բացակայությունը և կյանք մտնի ուրախությամբ: Իսկ ծերանոցը ես պատկերացնում եմ, իբրև մի հաստատություն, ուր ապրողները կարողանան օգտակար լինել հասարակությանը և զգան, որ դեռ կյանքին պետք են: Դեռ կարող են իրենց հարուստ կենսափորձը հաղորդել երիտասարդներին, մինչև իսկ աշխատել օրվա կեսը: Եվ կյանքից չհեռանան իբրև հասարակությանը ոչ պիտանի, անօգտակար մեկը:

Չարդ – Երջանիկ եք, թե ոչ:

Պատասխան - Առաձգական է երջանկություն հասկացողությունը: Երջանկության զգացումը, գիտակցումը սուբյեկտիվ է, նայած ում համար ինչ է երջանկության չափանիշը: Ես երջանիկ եմ, չնայած երբեք հարուստ չեմ եղել և բարձր պաշտոններ չեմ ունեցել ու չեմ ձգտել դրանց: Երջանիկ լինելու համար պետք է շատ բանի չձգտել: Ցանկանալ այնքան, որքան կարող ես վերցնել: Կյանքում պետք է լինել չափավոր և աշխատել ավելի շատ տալ, քան պահանջել:

Ես երջանիկ եմ, քանի որ ունեցել եմ ազնիվ և սիրող ամուսին, լավ զավակներ, հասել եմ իմ բոլոր սերերին՝ սիրած աշխատանք, ճանապարհորդություններ, հետաքրքիր և անվանի մարդկանց շրջապատ, բաներ, որոնց հասնելու համար, ոչ թե դրան էր պետք, այլ՝ սեր և նվիրում...

Հարց – Դուք երկար տարիներ դասավանդել եք մանկավարժական ինստիտուտի գրադարանային բաժնում, ի՞նչ կցանկանաք Ձեր ուսանողներին և գործընկերներին:

Պատասխան – Մատենագետներին կցանկանամ բարեխղճություն և նվիրում գործին: Իսկ բոլորին կուզեի դիմել կոչով, որ միշտ հիշեն Ավ. Իսահակյանի համճարեղ խոսքերը. «Աղքատ հայրենիքումդ ապրելը հերոսություն է, իսկ անարդար հայրենիքումդ ապրելը՝ իսկական հայրենասիրություն»: Իմ կարծիքով արդար լինելու համար պետք է միշտ ավելին տաս, քան պահանջես: Եվ այսօր երբ մարդիկ զանգատվում են երկրի վիճակից և իշխանություններից, լավ կլիներ, որ ամեն մեկը թեկուզ իր հոգու խորքում ինքն իրեն հարցնի, թե ինքն ինչ է տվել իր հայրենիքին: Ինչպես Յուզոն է ասել. «Բարի լինելը հեշտ է, դժվարը արդար լինելն է»:

Ուրեմն թող Աստված պահապան լինի իսկական հայրենասերներին:

Անվանի մատենագետը ներկայումս աշխատում է ամփոփել իր հուշերի գիրքը: Սեղանի մի անկյունում բազմաթիվ գրքերի շարքում նկատեցինք Ռաֆայել Իշխանյանի «Կատալոգների կազմակերպումը մասսայական գրադարաններում» գիրքը, հեղինակի ջերմ մակագրությամբ. «Նիմել ջան, նվիրում եմ այս թշվառ գիրքը, որն ահա աշխատել եմ զարդարել գարնան, ծաղկի և քո մասին հորինածս տողերով.

Գարնան արևն է շողերը թափում
Ձնծաղկի նագուկ թերթիկների պես,
Քո սև աչքերի հմայիչ մութում
Վարդերի հրով շողշողում կարծես,
Գարուն է եկել ձնծաղկով զուգված,
Բայց քո կրծքի տակ վաղուց է գարուն
Քո սրտի վրա միշտ վարդեր են բաց
Գարուն թե ձմեռ սեր են հուրհրում...

17.3.1957թ., Երևան

ՀՈՒՐԳԵՆ ԱՐԱՒԱՆՅԱՆ

ՈԱՖԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Հայաստանի Ազգային գրադարանի փոխտնօրեն
ՀԳՄ քարտուղար

ԳՈՒՐԳԵՆ ԱՐԱՒԱՆՅԱՆ 1921-1995

Ծննդյան 80-ամյակի առթիվ

Այս անունը 1960-ական թվականներից հայտնի էր մեր հանրապետության և նրա սահմաններից շատ հեռու՝ գրադարանային աշխատողների շրջանում: Շուրջ 45 տարի նա սիրով և անմնացորդ ծառայեց հայ մշակույթին և գրադարանային գործին:

Գուրգեն Գարեգինի Աղախանյանը ծնվել է 1921թ. դեկտեմբերի 18-ին Երևանում՝ ծառայողի ընտանիքում: 1939-ին ավարտել է մայրաքաղաքի թիվ 29 միջնակարգ դպրոցը: Այնուհետև ընդունվել է Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը, որտեղից նույն թվականի նոյեմբերի 24-ին զորակոչվել է խորհրդային բանակ: Ծառայել է Օդեսայի ռազմական օկրուգում, 1940թ. օգոստոսի 25-ից սովորել է 176 հրաձգային դիվիզիայի կրտսեր քաշեկների պատրաստման դասընթացներում: Ստացել է կրտսեր քաշեկի կոչում և նշանակվել 591-րդ հրաձգային զնդի վաշտի հրամանատարի տեղակալ քաղաքական գծով:

Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերից՝ Հարավ-Արևմտյան ճակատում մասնակցել է կռիվներին, վիրավորվել և գերի ընկել: Ազատվելուց հետո, 1944թ. օգոստոսից, 2-րդ Ուկրաինական ճակատում որպես սպա մասնակցել է մի շարք մարտերի: Բուդապեշտի ազատագրման ժամանակ ծանր վիրավորվել է մեջքից: 1945թ. սեպտեմբերի 17-ին գորացրվել է:

Բանակից վերադառնալուց հետո 1945-1950թթ. սովորելով Պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, այն ավարտել է գերազանցության դիպլոմով ստանալով պատմաբան, միջազգայնագետի որակավորում:

1950թ. որպես փոխտնօրեն Գ.Աղախանյանը աշխատանքի է նշանակվում ՀԻՍՅ պետական գրապալատում: Ավելի քան մեկ տասնամյակ աշխատելով գրապալատում նա նպաստեց հայ մատենագիտության-գրքագիտության զարգացման գործին: Նրա եռանդուն գործունեության և բանիմաց մասնակցությամբ կազմվեցին ու հրատարակվեցին բազմաթիվ մատենագիտություններ:

1961թ. օգոստոսին Գ.Աղախանյանը նշանակվում է ՀԻՍՅ մշակույթի նախարարության գրադարանային բաժնի պետ: Մինչև կենսաթոշակի անցնելը (1988թ.) նա վարեց այդ պաշտոնը դրսևորելով իրեն որպես հմուտ կազմակերպիչ, շրջահայաց և բանիմաց ղեկավար, խոհուն և համբերատար անձնավորություն, սրտամոտ և կատակասեր ընկեր:

Գրադարանագիտական-մատենագիտական շատ գրքեր են կազմվել, քարգմանվել և խմբագրվել նրա կողմից: Այսպես. «Գիրքը և պարբերական մամուլը Հայկական ՍՍՀ-ում 40 տարում (Ե., 1960թ.)», «Գիրքը և պարբերական մամուլը Հայկական ՍՍՀ-ում 1962թ.-ին» (Ե., 1965թ.), «Սոյուզպեչատ» Հայկական ՍՍՀ թերթերի և ամսագրերի 1960թ. կատալոգ» (Ե., 1959թ.): Արժե հիշատակել մեր հայրենակից, համաշխարհային հռչակ ունեցող գրադարանագետ Օ.Զուբարյանի «Ընդհանուր գրադարանագիտություն» (Ե., 1963թ.) դասագրքի քարգմանությունը, Ն.Ֆ.Գորբաչևսկայայի «Մասսայական գրադարանների աշխատանքը երկրագիտական գրականության հետ» (Ե., 1980թ.), Հ.Կոստիկյանի «Հասարակական-քաղաքական գրականության մատենագիտություն» (1964թ.), «Հայկական ՍՍՀ գրադարանների աշխատանքի փորձից» (Ժողովածու Ե., 1969թ.) և այլ գրքերի խմբագրումները:

Բազմաթիվ հոդվածներ է Գ.Աղախանյանը տպագրել ժողովածուներում, հանրապետական և մասնագիտական մամուլում՝ գրադարանային գործի հրատապ հարցերի վերաբերյալ: Թվարկենք մի քանիսը. «Գրքային ֆոնդերի կազմակերպումը և օգտագործումը հանրապետության գրադարաններում» (Գրադարանային գործի զարգացումը Սովետական Հայաստանում.-Ե., 1967.- էջ 34-44), «Գրքային ֆոնդերի ձևավորման ու պահպանման նոր կարգը» (Կուլտուր-լուսավորական աշխատանք 1975, N7, էջ 31-35), «Գրադարանային գործի զարգացման մտահոգությամբ» (Կուլտ. լուս. աշխատանք.- 1979, N8, էջ 24-25), «Գրադարանային գործի հեռանկարները» (Կուլտ-լուս. աշխատանք, 1985, N5, էջ 10-12), «Գրքի և գրադարանի վեհ կոչումը» (Կուլտ-լուս. աշխատանք, 1981, N3, էջ 4-8), «Գրադարանային գործի վերակառուցման հիմնական ուղիները» (Կուլտ-լուս. աշխատանք, 1988, N1, էջ 1-4) և այլն:

Վարչական աշխատանքին զուգընթաց Գ.Աղախանյանը դասավանդել է Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետի գրադարանային բաժնում: Երկար տարիներ անփոփոխ եղել է որակավորման պետական հանձնաժողովի նախագահ՝ Էջմիածնի ակումբ-գրադարանային տեխնիկումի գրադարանային ֆակուլտետում:

Մեծ ջանքեր է ներդրել Գ.Աղախանյանը 1970-80-ական թվականներին հանրապետությունում գրադարանների կենտրոնացված համակարգեր (ԳԿՀ) կազմակերպելու գործում: Նրա նախաձեռնությամբ, ամեն տարի, հանրապետության նախկին շրջկենտրոններում և քաղաքներում անց էին կացվում փնջային սեմինար-խորհրդակցություններ, որոնք նոր լիցք էին հաղորդում գրադարանավարների ընթացիկ աշխատանքին: Այդ խորհրդակցություններին, որպես կանոն, մասնակցում էին տեղի կուսակցական և գործադիր իշխանության ներկայացուցիչները: Նրանց ներկայությամբ գրադարանային հիմնահարցերի քննարկումն, անշուշտ, օգտակար էր և նպաստում էր գործնական հարցերի լուծմանը:

1988 թվականին կենսաթոշակի անցնելուց հետո Գ.Աղախանյանը նշանակվեց Ազգային գրադարանի (նախկինում Ալ.Մյասնիկյանի անվան պետական գրադարան- Ռ.Ղ.) Վճարովի ծառայությունների բաժնի վարիչ, այնուհետև 1989թ. հոկտեմբերից գրադարանագիտության և մատենագիտության գիտահետազոտական բաժնի վարիչ: 1991թ. հուլիսից մինչև կյանքի վերջը նույն բաժնում, որպես առաջին կարգի գրադարանավար:

Տասնամյակներ շարունակ՝ մինչև կյանքի վերջը, Գ.Աղախանյանը դասախոսական աշխատանք էր տանում Մշակույթի նախարարության մշտական գործող դասընթացներում՝ դասավանդելով գրադարանային առարկաներ:

Գ.Աղախանյանի համագործակցությունը և ընկերությունը Ազգային գրադարանի նախկին տնօրեն Ա.Թիրաբյանի, նույն գրադարանի փոխտնօրեն Ա.Օհանյանի, Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի նախկին վարիչ Յ.Կոստիկյանի հետ դրական նշանակություն ունեցավ և լիովին նպաստեց մեր հանրապետության գրադարանային գործի զարգացմանը:

Նրա ծառայողական կյանքը հարթ չի ընթացել: Երբեմն պայքարել է իր նկատմամբ արված զրպարտությունների դեմ: Իր համբերատարության, անհիշաչարության, բարության և ինքնատիրապետման շնորհիվ կարողացել է, այսպես ասած, կշեռքի մեջ չմտնել իր կողմը: Եթե նրան դա հաջողված չլիներ, ապա 27 տարի չէր կարողանա նախարարությունում աշխատել, այն էլ բաժնի վարիչ:

1989թ. մայիսին երբ Ազգային գրադարանի հետ կապված հարց պետք է քննարկվեր, ոմանք ասում էին, որ Գ.Աղախանյանն այդ քննարկմանը անորոշ դիրք կբռնի: Սակայն ի հեճուկս այդ չարախոսների, նա սկզբունքային եղավ և հիմնավոր պատասխաններ տվեց գրադարանի հեղինակությունը իրենց նպատակների համար օգտագործող արատավորողներին:

Աշխատանքի բերումով բազմաթիվ անգամ Գ.Աղախանյանի հետ եղել են գործուղումների մեր հանրապետության քաղաքներում, նախկին շրջկենտրոններում և հանրապետությունից դուրս: Ճանապարհների իսկական ընկեր էր նա: Չնայած ոչ քիչ դժվարություններին, ոչ մի անգամ նրա դեմքին դժգոհություն, նեղարտվածություն չեն նկատել: Թեև մեր տարիքների միջև տասնամյակների տարբերություն կար, բայց ոչ մի բանով նա զգալ չէր տալիս, ընդհակառակը զարմանում էի նրա եռանդի, հումորի, ընկերականության վրա: Անմիջապես մտերմանում էր իր շրջապատի մարդկանց: Տաշքենդում, ինքնաթիռի թռիչքի ուշացման պատճառով, մի ամբողջ օր մնացինք օդանավակայանում: Կարճ ժամանակում մտերմացավ մի քանի երիտասարդների հետ և սպասումը անեկդոտների, պատմությունների, համատեղ ծանոթներ «հայտնաբերելու» մթնոլորտում աննկատ անցավ: Երբ քեֆի և ուրախության սեղաններ էին բացվում, թամադան ինքն էր: Նա կենացները համեմուն էր զվարճալի պատմություններով և անեկդոտներով: Առանց հոգնելու, բոլորին լսելով, սեղանը հասցնում էր տրամաբանական ավարտին: Սիրում էր պարել, որով սեղանակիցների տրամադրությունը ավելի էր բարձրացնում:

Իսկ երբ կոնֆերանս, խորհրդակցություն կամ սեմինար էր վարում, արդեն լրիվ ուրիշ մարդ էր, պաշտոնական և հիմնական նպատակի իրականացումը ապահովվող ղեկավար:

Մշակույթին վերաբերվող, կուսակցության և կառավարության որոշումները մեկ առ մեկ անգիր հիշում էր: Խորհրդակցություններից մեկի ժամանակ, երբ նա իր բանավոր ելույթում հայտնեց ոչ այնքան հայտնի որոշման տարեթիվը, ամիսը և համարը, մասնակիցներից

մեկն, որ ինձնից հեռու չէր նստած, ասաց պիտի ստուգեմ, հնարավոր չէ այդպես հիշել: Չետո, այդ մարդը զարմացած ասաց, որ ամբողջովին ճիշտ էր:

Կինը՝ տիկին Նեկտարը, որ աշխատում էր Ուսուցիչների կատարելագործման ինստիտուտում, երբեմն գործուղման ժամանակ ամուսնուն ուղեկցում էր: Իսկ մյուս դեպքերում, որտեղ որ գնում էր, տեղ հասնելուց անմիջապես հետո զանգում էր տուն: Իր և իր ընտանիքի մասին քիչ էր խոսում կամ համարյա չէր խոսում: Բայց զգացվում էր, թե ինչքան սիրով է կապված իր երկու աղջիկների՝ Գոհարիկի, Յասմինի և թոռնիկների հետ:

Արդեն 7 տարի է նա չկա: Յանրապետության խոշոր գրադարաններում համակարգչացման և տեղեկատվական միասնական ցանց ստեղծելու աշխատանքներ են տարվում: Նա նման գործընթացի արդյունքը տեսել էր արտասահմանյան զարգացած երկրներում և հիացմունքով էր պատմում այդ մասին: Անշուշտ, շատ կուրախանար, եթե նման գործ տեսներ նա մեզանում: Ավա՛ղ, նա չկա, սակայն անունը և գործը հիշվում է: Ասենք շնորհավոր 80-ամյակդ Գուրգեն Գարեգինիչ, համեստ, կիրթ, բարի և գրադարանային գործի նվիրյալ...

ԲԱԼԱԲԵԿ ՄԵԼՅԱՆ Ծննդյան 75-ամյակի առթիվ

Լրացավ գրադարանագետ, մատենագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Բալաբեկ Գրիգորի Մելյանի 75-ամյակը:

Բ. Մելյանը ծնվել է 1926 թ դեկտեմբերի 12-ին Տավուշի մարզի Վերին Կարմիրաղբյուր գյուղում (նախկին Շամշադինի շրջան): 1944թ. գորակոչվել է բանակ, ծառայել մի շարք զորամասերում: 1950-1960թթ. աշխատել է գյուղի ակումբի, ապա նաև ակումբին կից գրադարանի վարիչ:

1955թ.՝ միջնակարգն ավարտելուց 12 տարի հետո ընդունվել է Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի գրադարանային բաժինը, ապա ավարտել է նաև նույն ֆակուլտետի բանասիրության բաժինը:

1961թ. ընտանիքով տեղափոխվել է Երևան:

Երևանյան շրջանում Մելյանի աշխատանքային մկրտությունը սկսվել է Ավ. Իսահակյանի անվան քաղաքային կենտրոնական գրադարանում որպես համալրման բաժնի վարիչ: Երկու տարի անց նա նշանակվում է Խնկո Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանի նորաբաց գիտամեթոդական բաժնի վարիչ, ապա տնօրենի գիտական գծով տեղակալ: Աշխատանքը մանկական գրադարանում արգասաբեր եղավ Բ.Մելյանի գրադարանագիտական-մատենագիտական հետազա ողջ գործունեության համար: Այստեղ նա կարևոր մասնակցություն ունեցավ գրադարանի կողմից նախաձեռնված մի շարք մատենագիտական աշխատանքների կազմման և հրատարակման գործում:

1972թ. նա տեղափոխվում է դասախոսական աշխատանքի: Մելյանը ընտրվում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գրադարանային բաժնի ավագ դասախոս: 1985թ. պաշտպանում է գիտական թեզ և ստանում բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1985-98թթ-ին Մելյանը պաշտոնավարել է իբրև գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ:

Նա տպագրել է շուրջ վեց տասնյակ գիրք ու գրքույկ՝ մատենագիտական ցանկեր, ուսումնական ձեռնարկներ, մեծ թվով հոդվածներ և թղթակցություններ: Մելյանի կազմած մատենագիտություններից կարելի է հիշատակել «Յայ մանկական գրականության մատենագիտություն» բազմահատորյակը /համահեղինակ/, Յովհաննես Շիրազի, Մկրտիչ Կորյունի, Վախթանգ Անանյանի, Գուրգեն Գաբրիելյանի կենսամատենագիտությունները և այլ հայ մանկագիրների անհատական ցանկերը: Նա կազմել է նաև «Կարմիր ծիլեր», «Կարմիր աքլոր» և այլ պարբերականների մատենագիտությունները:

2001 թ. տարեվերջին Յայաստանի Ազգային գրադարանը Մելյանի ծննդյան 75-ամյակի առթիվ կազմակերպել էր գրքային ցուցահանդես և հանդիպում հեղինակի հետ: Յաշվի առնելով գրադարանային գործին մատուցած նրա ծառայությունները, Բ.Գ. Մելյանը գրադարանի կողմից պարգևատրվեց հայ առաջին տպագրիչ Յակոբ Մեղապարտի անվան հուշամեդալով:

Խմբագրակազմը սրտանց շնորհավորում է վաստակաշատ մատենագետին ծննդյան 75-ամյակի առթիվ և ցանկանում առողջություն, աշխատանքային և ստեղծագործական հաջողություններ:

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՈՒՐԱՆ

Գիրքը լույս է տեսել ԲՀԻ օժանդակությամբ հիմնադրամի հայկական մասնաճյուղի հովանավորությամբ: Այն տպագրության է պատրաստել Հայաստանի Ազգային գրադարանը: Ներկայացնում ենք մի հատված գրքի «Հրատարակչի կողմից» ներածական հոդվածից:

Գրադարանային-մատենագիտական տերմինաբանության հարցերով Ազգային գրադարանում սկսել են զբաղվել անցած դարի 30-ական թվականներից: 1950 թվականին լույս է տեսել Արամ Բաբայանի «Գրադարանային տերմինների բառարանը»՝ ակադեմիկոս Գուրգեն Սևակի խմբագրությամբ:

Հասարակական կյանքի և գիտության ճյուղերի հետագա զարգացումը, բնականաբար, իր ազդեցությունը պետք է ունենար գրադարանային և մատենագիտական բնագավառների տեսական և գործնական ոլորտների թեմատիկայի ընդլայնման, նոր իրողությունների իմաստավորման և դրան համապատասխան տերմինաշինության կարգավորման և առավել ընդգրկուն դարձնելու գործում:

Դեռևս 1983 թվականին Ազգային գրադարանի գրադարանագիտության գիտահետազոտական բաժնում սկսվել է գրադարանային-մատենագիտական տերմինների բառարանի կազմման աշխատանքը:

1990-1991 թվականներին բառարանը խմբագրել է մեծանուն գիտնական, ակադեմիկոս Էդուարդ Աղայանը:

Հնարավորություն չլինելու պատճառով բառարանը ժամանակին չի հրատարակվել:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ գրադարանային-մատենագիտական տերմինաշինության գործում անգնահատելի ավանդ է ունեցել հայտնի լեզվաբան, դոկտոր-պրոֆեսոր Ռաֆայել Իշխանյանը, ինչպես նաև ուրիշներ, ովքեր իրենց առաջարկություններով նպաստել են տերմինների և դրանց համարժեքների ընտրությանը:

Բառարանը թերի կլիներ, եթե նրանում տեղ չգտնեին վերջին տասնամյակում գրադարաններում գործածության մեջ մտած համակարգչային տերմինները: Ուստի այն ներկայացվել է հավելվածով՝ հայերեն-անգլերեն-ռուսերեն և անգլերեն-հայերեն-ռուսերեն:

Շուրջ 1600 տերմին ունեցող ներկա բառարանում հիմնականում կիրառված է հղիչների երեք համակարգ՝ հոմանիշներից հիմնական տերմիններին, հապավումներից տերմինների լրիվ ձևին և ոչ հանձնարարելի, երբեմն հնացած տերմինների հղումը նոր, հանձնարարելի տերմիններին:

ԲԱԽՏԻԱՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Թատերագետ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Թումանյանի ներկա՝ ռուսերեն մատենագիտությունն բովանդակում է 1961-2000 թվականները՝ քառասնամյա մի ժամանակաշրջան, որն ընդգրկում է նաև մեծ բանաստեղծի 100-ամյակի տոնակատարությունը ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս՝ վկայելով նրա մեծ հեղինակությունը:

Այսպիսի մի գործ գլուխ բերելու համար, ժամանակից բացի, կազմողի առաջ ստեղծել են բազմապիսի բարդ պրոբլեմներ, որոնք կարելի է ասել, հաջողությամբ են հաղթահարվել:

Շատերին թվում է, թե մատենագիտություն կազմելը պատրաստի նյութերի արձանագրում է, մինչդեռ դա բարդ, բանասիրական, ինչ-որ չափով գիտական աշխատանք է, որովհետև կազմողը հազար ու մի տվյալ պետք է ստուգի, համեմատի, ճշտի, բացթողումը լրացնի, սխալն ուղղի և բազմապիսի հարցեր:

Թումանյանի մատենագիտությունը կազմված է խնամքով, նյութի իմացությամբ, թեև անհնար է անթերի սպառել Թումանյանի թեման:

Կատարված լավ աշխատանքի հետ, ցանկալի կլիներ, որ գրքում տրված լիներ Թումանյանի ստեղծագործությունների այբբենական ցանկը, որի անհրաժեշտությունն զգացվում է հատկապես թարգմանությունների համար: Չէ՞ որ մի քանի գործեր տարբեր

թարգմանություններ են ունեցել: Այսպես՝ «Ամբան Հուռին» գնում է “Хури-бездельница” և “Бездельница Ури” վերնագրերով: Լավ կլիներ դրանք իրար մոտ բերվերին:

Կոնկրետություն պետք է մտցվեր նաև օգտագործված պարբերական մամուլի մեջ՝ կամ նախապես տրվեր մամուլի ցանկը և դրանց հրատարակության վայրերը, կամ էլ՝ ամեն անգամ (մանավանդ Հայաստանից դուրս քաղաքների դեպքում) թերթի կամ ամսագրի կողքին փակագծում գրվեր վայրի անունը, ինչպես, օրինակ “Баку” (Баку): Դա Բաքվի՝ 1950-ական թվականներից լույս տեսնող քաղաքային թերթ է: Բայց Բաքվում 1925-ից լույս է տեսնում նաև “Вышка” անունով քաղաքային թերթ, որի դիմաց քաղաքը չի նշված: Ո՞վ իմանա, որ К. Агаханян-ը Բաքվում լույս տեսնող (“Вышка”) թերթում է թունամյանի մասին գրել (հեղինակը հայ՝ Բաքվի Ախունդովի անվան հանրապետական գրադարանի հայկական բաժնի վարիչ Քնարիկ Աղախանյանն է):

Բաքվի պարբերական մամուլից հիշատակված են նաև “Азербайджан” և “Литература и искусство”: Սրանք երկուսն էլ ադրբեջաներեն են, առաջինը՝ ամսագիր, երկրորդը՝ «Աղաբիյյաթ վա ինջասանաթ» («Գրականություն և արվեստ») - շաբաթաթերթ:

Բաքվում ռուսերեն լեզվով “Է՛ր ի՛ձ ի՛ծ ի՛ծ” թերթ չի եղել, եղածը հայերեն և ադրբեջաներեն են եղել:

Գրքում հիշատակված է Բետո ժղենտու անունը երկու ձևով՝ Բետո և Վիսարիոն: Կարելի էր միացնել կամ տալ տե՛ս-ով: Թվում է թե Բաքվի հեղինակներից Նâèàèè-ն, նույն ինքը Ի . Նâèàĭ â-ը պետք է լինի (նախկին երևանցի Սիրալի Սեփոզյան-սայաթնովագետը):

Ես ուրախ և շնորհակալ եմ, որ հիշատակված է իմ “Ãðàà àðĭ ýĭ ñêĭ é è áĭ èääðñêĭ é ĭĭ ýçèè” հոդվածը, բայց այն նվիրված է ոչ թե Մոսկվայում Բուլղարական դեսպանության աշխատակից Ս. Մալեկին, այլ ռուս բանաստեղծ և թարգմանիչ Սերգեյ Գորոդեցկուն:

Մատենագիտության մեջ կարող էր տեղ գտնել նաև իմ ևս երկու աշխատանք. 1)- “Èç èĭðĭ ðèè àðĭ ýĭ ĭ òèðàèĭ ñèèð òààòðàèüĭ üð ñâýçàè” (“Òààòðàèüĭ üà ñâýçè”. 1972) հոդվածը, որ մի էջ նշված է Օդեսայում 1930 թվականին «Ալմաստ» օպերայի ուկրաիններեն բեմադրության մասին և 2) “120-èàòèà Àðĭ ýĭ ñêĭ áĭ òààòðàèüĭ ĭ áĭ ĭ áùàñòàà” գիրքը (Ãð., 1984), որ մի շարք էջերում խոսվում է թունամյանի՝ Կ.Պոլսում հայարտուն բացելու առաջարկի և «Անուշ», «Գիքոր» և այլ գործերի բեմադրությունների, թունամյանի թատերական փառատոնի մասին:

Ընդհանուր առմամբ, ողջունելի է թունամյանի մատենագիտության լույս ընծայումը, այն մեծապես կնպաստի թունամյանագիտության զարգացմանը:

ԱՆԱՀԻՏ ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՐՔ ԻՆՏԵՐՆԵՏԻ ՎԵՐԱԲԵՐՈՅԱԼ

Ժամանակակից իրականության մեջ յուրաքանչյուր քայլ կապված է համակարգիչների, ինֆորմատիկայի, Ինտերնետի հետ: Ինտերնետը դարձել է հասարակական միջավայրի գերակա հասկացություններից մեկը: Վերջինիս հետ է կապվում մարդկային գործունեության գործնականում բոլոր ոլորտները: Կարելի է ասել, որ ներկայումս անհատը և ինտերնետ համակարգը դառնում են մի անբալկետիլի ամբողջություն: Ինտերնետը ընդգրկում է գիտության յուրաքանչյուր բնագավառ: Այն հաստատվել է նաև գրադարանային գործի ոլորտում:

Ինտերնետային տեղեկատվության մասին գրականությունը ավելի ու ավելի լայն լսարան է նվաճում: Այդ թեմային են նվիրվում բազմաթիվ գիտական աշխատություններ, հոդվածներ, կազմակերպվում են գիտաժողովներ, սեմինարներ և այլ միջոցառումներ:

Վերջերս լույս է տեսել Ռաֆայել Հարությունյանի «Ինֆորմատիկան և Ինտերնետը բիզնեսի ոլորտում» գիրքը: Գիրքը ընդարձակ ընդգրկում ունի, սկսած ինֆորմատիկայի գիտական էության բացատրությունից մինչև ինֆորմացիոն տեխնոլոգիաների ապագան: Այն տեղեկացնում է Հայաստանի Հանրապետությունում ինտերնետի զարգացման մասին: Օգտակար տեղեկություններ է տալիս ինտերնետի հայկական էջերի հասցեների, ինտերնետի սպասարկող կազմակերպությունների գործունեության և այլ թեմաների վերաբերյալ:

Բազմաթիվ բնորոշումների շարքում հեղինակը Ինտերնետը դիտարկել է նաև որպես տեղեկատվական երկխոսության ծառայություն: Ինտերնետի օգտակար ծառայությունների վերաբերյալ հեղինակի բերած հարյուրավոր օրինակներից ներկայացնենք հետևյալը: «Prodigy» (<http://www.prodigy.com>) առաջին կոմերցիոն դիալոգային ծառայությունն է, որը գիտակցեց Ինտերնետի կարևորությունը սեփական բիզնեսի զարգացման համար, օգտվողներին առաջարկեց ոչ միայն դեպի Ինտերնետ մուտքի սպասարկումներ, այլ նաև իրենց WEB էջերի ստեղծման սպասարկումներ» (տես էջ 55):

Գիրքը շատ առուններով օգտակար է գրադարանի տեղեկատու-մատենագիտական սպասարկման և ինտերնետի ծառայության աշխատակիցների համար: Սակայն այն զուրկ է նաև վրիպումներից և անճշտություններից: Բավական վիճարկելի է գրքի լեզուն: Հեղինակը նախապատվությունը տվել է օտար տերմինների և հասկացությունների օգտագործմանը, նույնիսկ այն դեպքում, երբ կան այդ բառերի ու հասկացությունների ընդհանուր կողմից ընդունված և կիրառվող բառաձևերը: Օրինակ, գրված է մոդիֆիկացում – պետք է լինի՝ **ծևափոխություն**, մոմենտ – **պահ**, օֆիսային - **գրասենյակային**, վիզա -**այցահրավեր**, ինվեստոր – **ներդրող**, կոմունիկացիոն – **հաղորդակցական**, ռեսուրս – **պաշար**, սպեցիֆիկ - **առանձնահատուկ**, պրակտիկ օգտագործման - **գործնական կիրառման**, տելեբժշկական սերվիսի – **հեռուստաբժշկական ծառայության** և այլն. օրինակները բերվում են միայն 120-121 էջերից: Գրքում հանդիպում են նաև անճշտություններ: Օրինակ, 209 էջում սխալ է նշված Երևանի պետական բժշկական համալսարանի ինտերնետային հասցեն: Բերված հասցեն (<http://www.melib.am/ysmu>) հղում է դեպի Հանրապետական գիտա-բժշկական գրադարանի էջը, մինչդեռ բժշկական համալսարանի սեփական էջի հասցեն է՝ (<http://www.ysmu.am>)

Գրքի վերջում ընդգրկված է յոթը հավելված, որոնք տեղեկություններ են տալիս գործարար տեղեկատվության, Հայաստանի դեղին էջերի և կառավարության մասին, ինչպես նաև անգլերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով համակարգչային եզրերի բացատրական բառարան:

ՆԻՆԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ

Մատենագետ

ՀՀ վաստակավոր գրադարանավար

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՆ

Այս գիրքը Ներսես Հայրապետյանի առաջին փորձը չէ: Նա հեղինակել է «Չարենցը և գիրքը», «Արտասահմանյան մատենագիտություն», «Հայկական նորանուն պարբերական մամուլի մատենագիտություն 1987-1996» գրքերը, որոնցից հատկապես վերջինը մամուլի պատմության հետազոտողների համար անփոխարինելի ուղեցույց է:

Ի դեմս «Ամերիկյան գրադարանագիտություն և տեղեկատուներ» գրքի ընթերցողի ուշադրությանը և գնահատականին է ներկայացված իրոք հրաշալի և օգտակար հրատարակություն:

Գրքի առաջին բաժնում հեղինակը մասնագիտական մանրամասներով ներկայացնում է ԱՄՆ-ի խոշորագույն հանրային և համալսարանական գրադարանների աշխատանքը, նրանց փորձը, աշխատանքի կազմակերպման մեթոդները և այլն: Հետաքրքիր է «Հայ գիրքը ամերիկյան գրադարաններում» գլուխը, որտեղ ներկայացվում են այն համալսարանները, որտեղ տարվում են հայագիտական ուսումնասիրություններ և կան հայագիտական ամբիոններ, որոնց շնորհիվ այդ հաստատությունների գրադարանները համալրվում են հայերեն գրքերով: Օրինակ, Լոս Անջելեսի համալսարանի գրադարանում կա մոտ 18 հազար միավոր հայերեն գրականություն, որի ֆոնդերը ստեղծվել են Կարո Մինասյանի (Նոր Ջուզա, Իրան) և Խանդամուրի անձնական գրադարանների հիմքի վրա: Հետագայում այս հավաքածուի համալրմանը աջակցել են հայ գրքի նվիրյալներ Ավետիս Սանջյանը, Ռիչարդ Հովհաննիսյանը և Ծիածան Այվազյանը: Ներկայացնելով տարբեր համալսարանների հայկական հավաքածուները հեղինակը գրում է նաև այդ ֆոնդերի զարգացման դժվարությունների մասին: Այն որ շատ համալսարաններում համապատասխան մասնագետների բացակայության պատճառով հայերեն հրատարակությունները գրադարանային մշակման չեն ենթարկվում, որ դժվարացել է հայ գրքի ձեռք բերումը և այլն:

Գործնական գրադարանավարության տեսակետից շատ արժեքավոր է գրքի երկրորդ բաժինը, որտեղ ներկայացված են ամերիկյան տեղեկատու հրատարակությունները: Ընթերցողների մատենագիտական հարցումները բավարարելու կոչված գրադարանային աշխատողի համար գրքի այս բաժինը անփոխարինելի ուղեցույց է: Այստեղից կարելի է իմանալ, թե ո՞ր հրատարակության միջոցով կարող ենք տեղեկություններ քաղել Միացյալ Նահանգներում վաճառքում եղած գրքերի մասին, ինչ կարևոր աղբյուրներ կան կրթական և մշակութային գործիչների մասին, պարզել անցյալ դարերում լույս տեսած գրքերի շուկայական գինը: Մի առանձին հետաքրքրություն է ներկայացնում բարեգործական կազմակերպությունների և դրամաշնորհների վերաբերյալ տեղեկատուների հատվածը:

Գիրքը հարուստ է օգտակար տեղեկություններով, գիտական մեկնաբանություններով և պարզաբանումներով: Հաճելի է նշել, որ գիրքը գրված է մտերմիկ ոճով, համեմված ամերիկյան կյանքի հետաքրքիր պատմություններով և մանրամասներով:

8. Գասպարյան Էմմա: Մշակութային արժեքների հարուստ հավաքածու: //Ազգ.- 2001.- 3 մարտ.
Երևանի Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի «Սփյուռք» գիտամշակութային կենտրոնի գրադարանի մասին:
9. Դանիելյան Մավր: Հառնում է ազատագրական պայքարի ևս մեկ էջ //Երկիր. – 2001. – 13 մարտի:
Հայաստանի Ազգային գրադարանում տեղի ունեցավ Երվանդ Սիմոնյանի «Ախալցխան կրակե օղակում» գրքի շնորհանդեսը:
10. Հայտնություն Բրիտանական թանգարանում //Ազգ.- 2001.- 14 մարտ. Բրիտանական գրադարանում բացվեց «Հայկական քրիստոնեական արվեստի 1700 տարիները» խորագիրը կրող ցուցահանդեսը:
11. Մուրադյան Արփինե: Ուշադիր են գրադարանի նկատմամբ: [Բուհական գրադարան. հոգսեր] //Առավոտ.- 2001.- 3 մարտ.
12. Սարգսյան Դավիթ: Գրադարանները մեզանում համեստ տեղ են զբաղեցնում /Հարցազրույց Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Դ. Սարգսյանի հետ /Նյութը՝ Նարինե Սերոբյանի/ //Երկիր.- 2001.- 29 մարտ.
13. Սիմոնյան Երվանդ: Ախալցխան կրակե օղակում:
Գրախոս՝ Դանիելյան Մավր Հառնում է ազատագրական պայքարի ևս մեկ էջ: //Երկիր.- 2001.- 13 մարտ.- էջ 4:
Գրքի շնորհանդեսը տեղի է ունեցել Ազգային գրադարանում:
14. Էձճաձյի ԹաՕձձ. Օձձաի րիՕձ ի ձաի աի ձձ ը. (Մ ի Օի ձձաի ձձ ձձձձձի Օձձ Թաիի ձձձձձձ
Աձի աի ձյ) //Աձձձձի Օձձի ձձձաի ձձ.- 2001.- 1 ի . 3.- ձ. 92-93.

ԱՊՐԻԼ

15. Արտասովոր գրադարան [Դրեզդենում գործող «Հնչող գիրք» խորագրով գրադարանի մասին] //Հայ գործարար.- 2001.- 7-9 ապրիլ.
16. Բալոյան Հրաչյա «Սփյուռքի» գրադարանի համալրումը //Հայաստանի Հանրապետություն.- 2001.- 18 ապրիլ.
«Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի գրադարանի մասին:
17. Գալստյան Շուշանիկ: «Մանվել Բաբոյան» ֆոնդի շնորհանդեսը //Ազգ.- 2001.- 24 ապրիլ
ՀՄՀ-ի «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի գրադարանում:
18. Դեմիրճյան Արմենուհի: Ջիվանու հանգով //Հայաստանի Հանրապետություն. –2001. – 28 ապր.
Ազգային գրադարանում Ջիվանու 155-ամյակի առթիվ բացված ցուցահանդեսի մասին:
19. Թորոսյան Արտավազդ: Երևանում փակվել է 40 գրադարան /Զրույցը Երևանի մշակույթի և սպորտի վարչության պետի հետ, վարեց՝ Անահիտ Եսայանը //Հայոց աշխարհ.- 2001.- 28 ապրիլ.- էջ 13:
20. Խաչատրյան Սաթենիկ: Ովքե՞ր են մամուլի գրադարանային սրահների հաճախորդները //Ազգ.- 2001.- 26 ապրիլ.
21. ՀՀ 2000թ. պետական բյուջեի ծախսերի վերլուծությունը: Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն: [Նաև գրադարանների մասին] //Հայացք տնտեսությանը.- 2001.- թ. 4.- էջ 18-20:
22. Հարությունյան Կարինե: Պահանջները նոր են, հնարավորությունները՝ հնացած [Հայաստանի Ազգային գրադարանի մասին] //Հայաստանի Հանրապետություն. –2001. – 11 ապրիլի:
23. Դազարյան Աիդա: Ավետումը գրադարանում [Արմավիրի մարզային հանրապետական գրադարանի կազմակերպած միջոցառման մասին]. –Հայրենական, Արմավիր. –2001. – 7-14 ապրիլի. –թիվ 2:

ՄԱՅԻՍ

24. Ամիրխանյան Գոհար: Սկյուտարի սոխակը //Հայաստանի Հանրապետություն.- 2001.- 18 մայիս.
Ազգային գրադարանում տեղի ունեցավ ցերեկույթ նվիրված Պետրոս Դուրյանի 150 ամյակին:
25. Այդինյան Վալտեր: Հետհամագումարյան //Ավանգարդ.- 2001.- 25-29 մայիս.
Ավ. Իսահակյանի անվ. գրադարանում տեղի ունեցավ «Հայ դպրություն ընկերության» 4-րդ համագումարը:
26. Բաղայան Մ. «Հայ դպրություն ընկերության» հասարակական կազմակերպության 4-րդ համագումարը: [Ավ. Իսահակյանի անվ. գրադարանում] //Ազգ.- 2001.- 8 մայիս.

- Հայաստանի Ազգային գրադարանի կազմակերպությամբ հոկտեմբերի 13-15-ը Երևանում տեղի ունեցած Եվրասիայի գրադարանային վեհաժողովի (ԵԳՎ) 9-րդ նստաշրջանի մասին: Ստորագր.՝ Ն.Պ.
61. ԵՆ ԽՎ մշակույթի, գիտության և կրթության հանձնաժողովի նիստ Ազգային ժողովում: [Ելույթ ունեցողների շարքում ՀԳՄ նախագահ՝ Ներսես Հայրապետյան] //Հայաստանի հանրապետություն.- 2001.- 23 հոկտ.- էջ 3:
Ստորագր.՝ Աժ հասարակության հետ կապերի վարչություն:
62. Թրվանց Անուշ: Այնուամենայնիվ՝ հարատև... Նոր ժամանակների գիրքը առանց տպաքանակի և առանց թղթի: Առաջին պետական մրցանակը: 500 հատոր գրպանում: Վայրկյաններ տարիների փոխարեն: [Թվային գրադարանների ներմուծումը Հայաստան] //Հայաստանի Հանրապետություն.- 2001.- 23 հոկտ.
63. Ծառուկյան Մելանյա: Որպես ասուլի լուսաժիր: //Ավանգարդ.- 2001.- 17-23 հոկտ.
 Ազգային գրադարանում տեղի ունեցավ Ռազմիկ Մուրադյանի «Մեր երթի խաչակիրը» գրքի շնորհանդեսը, այն նվիրված արցախյան ազատամարտի նվիրյալ, Մալաթիա-Մեբաստիա համայնքի թաղապետ Վահան Զատիկյանի հիշատակին:
64. Հայրապետյան Ներսես: Մեծարժեք նվիրատվություն: //Ազգ.- 2001.- 2 հոկտ.
 Հայաստանի Ազգային գրադարանը Կահիրեի Հայկական բարեգործական ընդհանուր միության ատենապետ Պերճ Թերզյանի կողմից նվեր ստացավ, եգիպտահայ մամուլի՝ «Արև», «Յուսաբեր» և «Ջահակիր» պարբերականների մանրաժապավենային գրադարանը:
65. Հեքիաթի օր: Մանկական տոնախմբություն: //Կանչ.- 2001.- 17 հոկտ.
 Խնկո-Ապոր անվան մանկական գրադարանում տեղի ունեցած միջոցառման մասին:
66. Ղազարյան Լուսինե: Բարսեղյան Մարի: Նշվեց Ավետիք Իսահակյանի ծննդյան օրը: [Մեծ բանաստեղծի անունը կրող գրադարանում] //Հայաստանի Հանրապետություն.- 2001.- 31 հոկտ.
67. Մելիքսեթ Գագիկ: Նախևառաջ՝ ուսուցիչ: //Հայաստանի Հանրապետություն.- 2001.- 6 հոկտ.
 Նաև՝ Ազգային գրադարանում նշանավոր մատենագետ, պատմաբան Լևոն Մինասյանին նվիրված միջոցառման շուրջ:
68. Մեծարվեց Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը: //Երկիր.- 2001.- 24 հոկտ.
 Հայաստանի ազգային գրադարանում կայացավ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի հեղինակած, ինչպես նաև նրա մեկենասությամբ հրատարակված գրքերի շնորհանդեսը:
69. Միջխորհրդարանական հանձնաժողովի նիստ: Խարհրդակցում են գրադարանների աշխատակիցները: //Հայաստանի Հանրապետություն.- 2001.- 16 հոկտ.
 Աժ-ում տեղի ունեցած ԱՊՀ անդամ երկրների ազգային գրադարանների տնօրենների և Եվրասիայի գրադարանային ասամբլեայի ղեկավարների խորհրդակցությունը:
70. Մուրադյան Ռազմիկ: Գրադարանային համաժողով: Մշակութային համագործակցություն: //Հայաստանի Հանրապետություն.- 2001.- 17 հոկտ.
 Երևանում տեղի ունեցավ Եվրասիայի գրադարանային վեհաժողովի միջազգային կազմակերպության խորհրդի 9-րդ նստաշրջանը:
71. Յազըճյան Գևորգ: Նրան շատ բան է հաջողվում: //Ազգ.- 2001.- 21 հոկտ.- էջ 6:
 Ազգային գրադարանում ցերեկույթ-ցուցահանդես, »2001թ. գրական հրատարակչական հունձքի շնորհանդեսը« խորագրով, որի պատվավոր հյուրն էր Մեսրոպ արք. Աշճյանը:
72. Նրա գրքերը խոսում են մեր սրտերից: Շնորհանդես: //Հայաստան.- 2001.- 19 հոկտ.- էջ 4:
 Ավ. Իսահակյանի անվ. գրադարանում տեղի ունեցավ ճանաչված մանկագիր Լիպարիտ Սարգսյանի «Սիրտս ձեզ են բացում» և «**Խաչված ճակատագրեր**» գրքերի շնորհանդեսը:
73. Ռաֆայելյան Նինա: Տարեցների օրը գրադարանում [Արմավիրի մարզային հանրապետական գրադարանում Տարեցների միջազգային օրվան նվիրված ցերեկույթի մասին]։-Հայրենական, Արմավիր.-2001.-8-18 հոկտ.
74. Սահակյան Ա., Մարզային գրադարանում [Արմավիրի մարզային հանրապետական գրադարանում Թարգմանչաց տոնին նվիրված միջոցառման մասին]։-Հայրենական, Արմավիր.-2001.-19-30 հոկտ.
75. Սահակյան Մեսրոպ: Եզակի գրքեր ու մանրանկարներ: //Ժամանակ.- 2001.- 23 հոկտ.- էջ 6: ԵՊՀ-ի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի ճեմասրահում տեղի ունեցավ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700 ամյակին նվիրված գրքերի և վերարտադրված նկարների ցուցահանդես:

76. Սահակյան Մեսրոպ: Ներկայացվեցին եզակի գրքեր ու մանրանկարներ: //Ազգ.- 2001.- 30 հոկտ.- էջ 6:

ԵՊՀ-ի Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գիտական գրադարանի ճեմասրահում, կազմակերպվել էր գրքերի և վերարտադրված նկարների և լուսանկարների ցուցահանդես:

77. Քարաուղլանյան Խոնարի: ... Եվ երկարեց աջն օգնության: //Ժամանակ.- 2001.- 24 հոկտ.- էջ 6:

Ազգային գրադարանում կազմակերպվեց 2001թ. գրական հրատարակչական հունձքի շնորհանդես, որի պատվո հուրն էր Մեսրոպ արք. Աշխյանը:

78. Օհանյան Լուսինե: Աստված ուղարկեց Հայաստան: //Առավոտ.- 2001.- 24 հոկտ.- էջ 6:

Ազգային գրադարանում տեղի ունեցավ միջոցառում «2001թ. գրական հրատարակչական հունձքի շնորհանդեսը» վերնագրով, որի պատվավոր հյուրն էր Մեսրոպ արք. Աշխյանը: Նաև հատված գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանի խոսքից:

ՆՈՅՆՄԵՐ

79. Ավետիսյան Նարինե: «Շատ բան կախված է տղամարդկանցից»: Մի եղբք ինքնասպան //Հայաստանի Հանրապետություն.- 2001.- 27 նոյ.- էջ 3:

ՄԱԿ-ի ավանդապահ գրադարանում տեղի ունեցավ ՁԻԱՀ-ին և ՄԻԱՎ-ին նվիրված միջոցառումների շարքի բացումը:

80. Արշակունի Սյուզան: Հավատի յոթ կաթիլ //Ավանգարդ.- 2001.- 14-20 նոյ.

Ավ. Իսահակյանի անվ. գրադարանում տեղի ունեցավ Սուրեն Վարդևանյանի «Հավատի յոթ կաթիլ» գրքի շնորհանդեսը:

81. Բարեղամյան Մարինե; Ղազարյան Լուսինե: Հուշեր հուշագրի մասին... //Հայաստանի Հանրապետություն.- 2001.- 20 նոյ.- էջ 7:

Ավ. Իսահակյանի անվ. գրադարանում կայացավ հուշ-երեկո՝ նվիրված կոմպոզիտոր Ծովակ Համբարձումյանին:

82. «Էկոլոգիան» մարդու գործած մեղքերի արդյունքն է //Կրթություն.- 2001. -1 նոյ.-31 դեկտ.

Խնկո Ապր անվ. հանրապետական մանկական գրադարանում տեղի ունեցավ «Էկոլոգիա և էկոլոգիական դաստիարակության հիմնախնդիրները նախադպրոցական հաստատություններում» թեմայով գիտագործնական համաժողով, որը կազմակերպել էր ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական բարեփոխումների կենտրոնը:

83. Թրվանց Նարինե: Հանդիպում բանաստեղծուհու հետ: Ազգային գրադարանում //Հայաստանի Հանրապետություն.- 2001.- 23 նոյ.- էջ 5:

Բանաստեղծուհի Ռուզան Ասատրյանի «Հրաշքի պատուհանները» գրքի շնորհանդեսը:

84. Թոքմաջյան Ս. Տերմինաբանական նոր բառարան: //Ժամանակ.- 2001.- 23 նոյ.- էջ 4:

Բժշկագիտական գրադարանում ընթացքի մեջ է հայերեն բժշկական-տերմինաբանական բառարանը:

85. Մակարյան Մարիետա: Այցելություն Երևանի Վ. Թեքեյանի անվան վարժարան //Ազգ.- 2001.- 30 նոյ.- էջ 6:

ՌԱԿ 80 և ՀՌԱԿ 10 ամյակների տոնակատարությունների շրջանակում ռամկավարների այցը վարժարան: 94 ամյա Սուրեն Աբրահամյանը վարժարանի գրադարանին նվիրեց իր նոր՝ «Վանից Դետրոյթ. Հայոց ցեղասպանությունից մազապուրծ» գիրքը:

86. Մնեյան Քրիստինե: Գիրք գրքոց: Գրապահոց: [Հայաստանի ազգային գրադարանի մասին] //Երկրապահ.- 2001.- 20 նոյ.- էջ 12:

87. Ներսիսյան Արամ: ...Նաև հոգսերին մերձ //Հայ զինվոր.- 2001.- 24 նոյ.- էջ 4:

Գնդապետ Վահան Արսենյանի հրամանատարությամբ գործող զորամասի, նաև գրադարանի մասին:

88. Ածաճյի Էձձեի Զ: Անոճի ւն րի ըծի ԶԵՆԱ Ժձձաի րի ըծ (Ի Զ ԶԵԶԵԻ ԾԱՎԻԷ Ի ԾձԵԾԱ: Ի Ի ԾՅ ԷԻ ԷԶԶԱ. Աժի Զի Էյ) //ԱԶԵԶԻ ԾձԵՅ. -2001. -#11. -ճ. 92-93.

Հայաստանի Ազգային գրադարանում կազմակերպված «Աստվածաշունչը և հայ տպագրությունը» և «Հայ տպագրությունը Եվրոպայում 16-18-րդ դարերում» ցուցահանդեսների մասին:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

89. Ազգի մեջքը ամրացնող գոտին (Մշակույթ) //Չայաստանի Հանրապետություն.- 2001.- 7 դեկտ.- էջ 4:
Գյուրու մշակութային օջախների հոգսերը: Նաև՝ գրադարանների մասին:
90. Ասլանյան Լիլիթ: Համագործակցություն (Ազգային գրադարանում) [Հայկական գրադարանային միության և Վրաստանի Տեղեկատվական մասնագետների միության համագործակցության շուրջ] //Չայաստանի Հանրապետություն.- 2001.- 19 դեկտ.- էջ 5:
91. Ավալյան Իրինա: Մենք շատ-շատ սիրում ենք նրան: //Ավանգարդ.- 2001.- 28 դեկտ.- էջ 5:
Ավ. Իսահակյանի անվ. գրադարանում տեղի ունեցավ միջոցառում նվիրված կոմպոզիտոր Ծովակ Համբարձումյանին:
92. Բարեղամյան Մարի: Տարիները հավատարիմ են... պապիկներին: Երբ գարուն է գալիս... //Չայաստանի Հանրապետություն.- 2001.- 4 դեկտ.- էջ 7:
Նորքի ծերանոցի և տուն-ինտերնետի մասին, նաև հիշատակում տեղի գրադարանի մասին:
93. Դանիելյան Մավր: Թումանյանի ընտանիքը: //Երկիր.- 2001.- 20 դեկտ.- էջ 4:
Մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի Աշխեն դուստրը աշխատել է Հանրային (այժմ Ազգային) գրադարանում:
94. Դասազրբերը պատի՞ժ: //Առավոտ.- 2001.- 6 դեկտ.- էջ 5:
Դպրոցական գրադարաններում աշխատում են գրադարանային գործից անտեղյակ մարդիկ:
95. Լուսաբեր Գ. Հայ հնատիպ գիրքը Ինտերնետում: Մշակութային լրատու: //Չայաստանի Հանրապետություն.- 2001.- 21 դեկտ.- էջ 3:
Ազգային գրադարանում տեղի ունեցավ «Հակոբ Մեղապարտ» էջի շնորհանդեսը:
96. Հայրապետյան Ներսես: Էլեկտրոնային հեռանկար (Ազգային գրադարանում) //Չայաստանի Հանրապետություն.- 2001.- 4 դեկտ.
97. Հայրապետյան Ներսես: Հայաստանի պատմական ատլասը: Լույս է տեսել ԱՄՆ-ում: //Չայաստանի Հանրապետություն.- 2001.- 11 դեկտ.- էջ 5:
Ազգային գրադարանի ֆոնդը համալրվեց Ռոբերտ Հյուսենի «Հայաստան-պատմական ատլաս» արժեքավոր գրքով:
98. Պողոսյան Ռուզան: Հայաստանի գրադարանները կիսանե՞ն զարգացման միջազգային չափանիշներին: //Ազգ.- 2001.- 4 դեկտ.- էջ 6:
Անդրադարձ գրադարանների ավտոմատացման խնդիրներին:
99. Տերտերյան Անդրանիկ: Գրադարանի հիմնադրման 80-ամյակը “Հայաստանի Հանրապետություն. – 2001. – 14 դեկտ.
Էջմիածնի Հովհաննես Հովհաննիսյանի անվ. գրադարանի մասին:
100. Ի՛ օի՛ օյի՛ Աեթա: Նձի՛ օի՛ ձծն՛ օեյ՛ օեթեթի՛ Ծձօ՛ւ օծ՛ օի՛ Ծձո՞ոթի՛ օի՛ օեի՛ օ (Ձ՛ օեթեթի՛ Ծձօ՛ւ օծ՛ օո՞ոթի՛ օեթեթի՛) //Աձո՞ւ օե՛ ԱԱԱ. – 2001. – Ի՛ 4. – ձ. 62-63.
Հայաստանի Ազգային գրադարանի գլխավոր գրադարանավարի հոդվածը այլապես գրադարանային միության կողմից կազմակերպված սեմինարների մասին:
101. A Regional Library Center to be Founded Also in Yerevan (Interview with Nerses Hayrapetyan) //Yerevan Press Club Electronic Bulletin. – 2001. – December 21. #10-11.
Երևանի Մամուլի ակումբի էլեկտրոնային թերթի անդրադարձը «Եվրասիա» հիմնադրամի օժանդակությամբ իրականացվող հարավ-կովկասյան գրադարանավարների վերապատրաստման «Կովկաս» կենտրոնի ծրագրերին:

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

2002
Հունվար

	1512 թ. Վենետիկում լույս տեսավ հայ առաջին տպագիր գիրքը «Ուրբաթագիրք» -		Լույս ընծայման- 490-ամյակ 270-ամյակ
6. 01. 1832	Պիեռ Բոմարշե, ֆրանսիացի դրամատուրգ, «Սևիլյան սափրիչ» և «Ֆիգարոյի ամուսնությունը» կատազերգությունների հեղինակը	(1732-1799)	
26.01.1922	Գ.Սունդուկյանի անվան պետ. ակադեմիական դրամատիկական թատրոնի բացումը		80-տարի առաջ
7.01. 14.01.1827	Ծնվ. Արմենակ Խամփերյանց (Ա.Ա.Խուդյակով) մարշալ Պ.Պ.Սեմյոնով-Տյան-Շանակի ռուս զիտնական, աշխարհագրագետ և ճանապարհորդ	(1902-1950) (1827-1914)	100-ամյակ 175-ամյակ

15.01.1732	Ժան Բատիստ Մոլիեր, ֆրանսիացի դրամատուրգ, «Տարտյուֆ»-ի և «Միզանթրոպ»-ի հեղինակը	(1622-1673)	380-ամյակ
23. 01.1832	Խորեն Երիցյան գիտնական-գյուղատնտես	(1882-1956)	120-ամյակ
23. 01.1832	Էդուարդ Մանե, ֆրանսիացի գեղանկարիչ, իմպրեսիոնիստ, «Նախաճաշ բնության գրկում», «Օլիմպիա» նկարների հեղինակը	(1832-1883)	170-ամյակ
25. 01.1832	Իվան Շիշկին, ռուս ռեալիստական բնանկարի վարպետ	(1832-1898)	170-ամյակ

Փետրվար

5.02. 1877.	Ալեքսանդր Մելիքյան, գիտնական-մաթեմատիկոս	(1877-1969)	125-ամյակ
7. 02. 1812.	Չարլզ Դիքենս, անգլիացի գրող, «Օլիվեր Թվիստի արկածները» և «Դավիթ Կոպերֆիլդ» վեպերի հեղինակը	(1812-1870)	190-ամյակ
15. 02. 1902	Հմայակ Սիրաս, հայ գրող, «Արարատ» վեպի հեղինակը	(1902-1983)	100-ամյակ
18. 02. 1877.	Դերենիկ Դեմիրճյան	(1877-1956)	125-ամյակ
25. 02. 1912.	Զարգանդ Դարյան գրող	(1912-1984)	90-ամյակ
26. 02. 1877.	Միքայել Մանվելյան դերասան, գրող	(1877-1944)	125-ամյակ
26. 02. 1802.	Վիկտոր Զյուգո, ֆրանսիացի գրող	(1802-1885)	200-ամյակ
29. 02. 1792.	Ջոակինո Ռոսսինի, իտալացի երգահան, «Սկիլյան սափրիչ», «Ստաբատ մատեր» գործերի հեղինակը	(1792-1868)	210-ամյակ

Մարտ

7. 03. 1902.	Բենիամին Գալստյան, գեներալ-մայոր	(1902-1942)	100-ամյակ
10. 03. 1932.	Հարություն Տերտերյան, թարգմանիչ, խմբագիր	(1832-1868)	170-ամյակ
13. 03. 1897.	Եղիշե Չարենց բանաստեղծ	(1897-1937)	105-ամյակ
21. 03. 1902.	Միքայել Չայլախյան գիտնական-գյուղատնտես, ակադեմիկոս	(1902-)	100-ամյակ
30. 03. 1892.	Մկրտիչ Ջանան հայ դերասան, ռեժիսոր, թատերական գործիչ, դրամատուրգ	(1892-1938)	110-ամյակ
31. 03. 1732.	Յոզեֆ Զայդն, ավստրիացի կոմպոզիտոր, «Հրաժեշտի սիմֆոնիայի» հեղինակը	(1732-1809)	270-ամյակ

Ապրիլ

7. 04. 1902.	Արա Սարգսյան քանդակագործ, նկարիչ	(1902-1969)	100-ամյակ
12. 04. 1902.	Սերգեյ Գալաշև (Գալաշյան) գեներալ-լեյտենանտ	(1902-1954)	100-ամյակ
15. 04. 1452.	Լեոնարդո դա Վինչի, իտալացի նկարիչ, «Ջոկոնդայի» հեղինակը	(1452-1519)	550-ամյակ

17. 04. 1932.	Կարեն Դեմիրճյան, ՋՋ պետական, քաղաքական գործիչ	(1932-1999)	70-ամյակ
19. 04. 1902.	Վենիամին Կավերին, ռուս գրող, «Երկու կապիտան» վեպի հեղինակը	(1902-)	100-ամյակ

Մայիս

3.05.1877	Գ.Յու.Սեդով, ռուս բևեռային հետազոտող	(1877-1914)	125-ամյակ
10.05.1927	Ալեքսեյ Յեքիմյան, կոմպոզիտոր	(1927-1984)	75-ամյակ
14.05.1727	Թովմաս Յեյնսբորոն անգլիացի նկարիչ	(1727-1788)	275-ամյակ
27.05.1882	Կանոն (Սիմոն Տեր-Պետրոսյան) պրոֆեսիոնալ հեղափոխական, բոլշևիկյան կուսակցության լեգենդար գործիչ	(1882-1922)	120-ամյակ

Հունիս

8.06.1902	Արամ Մերանգուլյան կոմպոզիտոր	(1902-1967)	100-ամյակ
14.06.1877	125 տարի առաջ (1877) հիմնադրվեց Երևանի գինու կոմբինատը		
15.06.1837	Պերճ Պռոշյան, հայ գրող, «Հացի խնդիրը», «Սոս և Վարդիթեր» վեպերի հեղինակ	(1837-1907)	165-ամյակ
17.06.1902	Իսահակ Գասպարյան գվարդիայի գեներալ-մայոր	(1902-1962)	100-ամյակ
17.06.1882	Իգոր Ստրավինսկի կոմպոզիտոր, դիրիժոր	(1882-1971)	120-ամյակ
18.06.1812	Իվան Գոնչարով ռուս գրող, «Օբլոմով», «Ջառիթափ» վեպերի հեղինակը	(1812-1891)	190-ամյակ
27.06.1712	Ժան Ժակ Ռուսո, ֆրանսիացի փիլիսոփա-լուսավորիչ և գրող	(1712-1778)	290-ամյակ

Հուլիս

1.07.1862	140 տարի առաջ (1862) հիմնադրվեց Ռուսաստանի թանգարան-գրադարանը, ներկայումս՝ Ռուսաստանի պետական գրադարան:		
7.07	Լևոն Օրբելի, գիտնական ֆիզիոլոգ	(1882-1958)	120-ամյակ
9.07.1902	Արտեմի Այվազյան կոմպոզիտոր, էստրադային նվագախմբի հիմնադիր	(1902-1975)	100-ամյակ
13.07.1862	Նիկոլայ Ռուբակին, գրքագետ, մատենագիր, գրող	(1862-1946)	140-ամյակ
27.07.1902	Յարոսլավ Գալան ուկրաինացի գրող, հրապարակախոս	(1902-1949)	100-ամյակ
29.07.1817	Հովհաննես Այվազովսկի, հայ մեծ ծովանկարիչ	(1817-1900)	185-ամյակ

Օգոստոս

1. 08. 1802.	Նիլս Յենրիկ Աբել նորվեգացի գիտնական-մաթեմատիկոս	(1802-1829)	200-ամյակ
15.08.1922.	Վահագն Դավթյան բանաստեղծ	(1922-)	80-ամյակ
14. 08. 1862.	140 տարի առաջ (1862) սկսվեց Ջեյթունի հերոսական ապստամբությունը թուրքական բռնակալության դեմ	(1862)	
20. 08. 1827.	Շառլ դը Կոստեր բելգիացի գրող	(1827-1879)	175-ամյակ
22. 08. 1862.	Կլոդ Դեբյուսի Ֆրանսիացի կոմպոզիտոր	(1862-1918)	140-ամյակ
22. 08. 1902.	Պ.Ն.Կռիլով նկարիչ	(1902-)	100-ամյակ
25. 08. 1802.	Ֆրիդրիխ Ռեյնխոլդ Կրեյցվալդ էստոնացի գրող, լուսավորիչ բանահավաք	(1802-1882)	200-ամյակ
27. 08.	Մուշեղ Մինասյան, գեներալ-մայոր	(1902-)	100-ամյակ
29. 08.	Արտո-Ալեքսանյան, բժիշկ, ակադեմիկոս	(1892-1923)	110-ամյակ

Սեպտեմբեր

1. 09.1922.	Հակոբ Սալախյան գրականագետ	(1922-1969)	80-ամյակ
8. 09. 1877.	Առանձար (Միսաք Գույունճյան) երկիծաբան	(1877-1913)	125-ամյակ
8. 09. 1877.	Սայաթ-Նովա բանաստեղծ, երգիչ	(1712-1795)	290-ամյակ
18. 09. 1912.	Նոր-Այր գրող	(1912-1981)	90-ամյակ
18. 09. 1882.	Մ.Ի.Ավիլով գեղանկարիչ	(1882-1954)	120-ամյակ
27. 09. 1892.	110 տարի առաջ (1892) բացվեց Մոսկվայի պետական Տրետյակովյան պատկերասրահը		

Հոկտեմբեր

14.10.1902	Համազասպ Հարությունյան տնտեսագետ, դիվանագետ, ակադեմիկոս	(1902-1971)	100-ամյակ
18.10.1837	Ռաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան) վիպասան	(1837-1888)	165-ամյակ
24.10.1872	Գարեգին Լևոնյան, արվեստաբան	(1872-1947)	130-ամյակ
30.10.1902	Ա.Ա.Զույկով գեղանկարիչ	(1902-1980)	100-ամյակ

Նոյեմբեր

1.11.1902	Նուրդալ Գրիգ, նորվեգացի գրող, գրականագետ	(1902-1943)	100-ամյակ
-----------	--	-------------	-----------

6.11.1922	80 տարի առաջ (1922) բացվեց Երևանի Պետ. մանկավարժական ինստիտուտը		
6.11.1852	Դ.Ն.Մամին-Սիբիրյակ, ռուս գրող, «Վայրի երջանկություն» և «Հաց» գործերի հողինակը	(1852-1912)	150-ամյակ
8.11.1877	125 տարի առաջ (1877) Թիֆլիսում բացվեց Հովնանյան օրիորդաց դպրոցը		
12.11.1882	Արսեն Տերտերյան, ակադեմիկոս, գրականագետ	(1882-1958)	120-ամյակ
24.11.1632	Բենեդիկտ Սպինոզա, հոլանդացի մատերիալիստ-փիլիսոփա, աթեիստ	(1632-1677)	370-ամյակ
25.11.1562	Լոպե դե Վեգա իսպանացի դրամատուրգ, «Պարտիզայանի շունը»	(1562-1635)	440-ամյակ
Դեկտեմբեր			
2.12.1897	Հովհաննես Քրիստափորի Բաղրամյան, ԽՍՀՄ մարշալ	(1897-1982)	105-ամյակ
4.12.1722	Գ.Ա. Սկովորդա, ուկրաինացի լուսավորիչ, հումանիստ, փիլիսոփա և բանաստեղծ	(1722-1794)	280-ամյակ
8.12.1802	Ա.Ի. Օդոևսկի ռուս բանաստեղծ-դեկաբրիստ	(1802-1839)	200-ամյակ
9.12.1892	Գրիգոր Շիրմազանյան, ինժեներ-ջրաշինարար	(1892-1964)	110-ամյակ
25.12.1902	Գեղամ Սարյան, բանաստեղծ	(1902-1976)	100-ամյակ
29.12.1912	90 տարի առաջ (1912) Հովհ. Թումանյանի նախաձեռնությամբ Թիֆլիսում կազմակերպվեց հայ գրողների Կովկասյան ասոցիացիան		

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Միությունը 2002 թվականին, Ներսես Յայրապետյան

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՇԱՐՔԸ

Ազգային գրադարանային շաբաթը Միացյալ Նահանգներում, Սաթենիկ Ավագյան

Ազգային գրադարանային շաբաթվա արդյունքների ամփոփման նպատակը և կարգը

ՄԵՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Գրադարանային հիմնախնդիրներ, Ֆաթմա խաչատրյան
Համալրումը գրադարանի պահպանման երաշխիք, Ռաֆիկ Ղազարյան
Գրադարանի դրական կերպարի ձևավորումը և կապերը
հասարակայնության հետ, Կարինե Արաբյան

ՄԱՐՁԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱՌՕՐՅԱՅԻՑ

Երևանի Ավ. Իսահակյանի անվան քաղաքային կենտրոնական գրադարանը, Հասմիկ Կարապետյան

Արագածոտնի մարզի հանրապետական գրադարանը, Տ. Բեգլարյան
Արմավիրի մարզի հանրապետական գրադարանը, Աիդա Ղազարյան
Գեղարքունիքի մարզի հանրապետական գրադարանը, Մարիետա Ամիրխանյան

Լոռու մարզի հանրապետական գրադարանը, Ֆրոսյա Ջանջուղազյան
Կոտայքի մարզի հանրապետական գրադարանը, Ժաննա Գևորգյան
Շիրակի մարզի հանրապետական գրադարանը, Արմինե Հակոբյան
Սյունիքի մարզի հանրապետական գրադարանը, Սուսաննա Մինասյան
Վայոց ձորի մարզի հանրապետական գրադարանը, Ռոզա Լևոնյան
Տավուշի մարզի հանրապետական գրադարանը, Սաշա Հովսեփյան

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐ

Գրադարանավարի մասնագիտությունը (քննարկման կարգով)

Հայ գրադարանավարի մասնագիտական վարվեցողության վարքականոն, Ներսես Յայրապետյան

Սլովենյայի գրադարանների բարոյական վարքականոնը, անգլ. թարգմ. Մարո Պողոտյան

Ուկրաինայի գրադարանավարի վարքականոնը, անգլ. թարգմ. Արփինե Ավետիսյան

Ռուս գրադարանավարի վարքականոնը, ռուս. թարգմ. Ն. Սարգսյան

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

Չեխիայի օրենքը գրադարանների, հանրային գրադարանների գործունեության կարգի և տեղեկատվական ծառայությունների մասին, անգլ. թարգմ.՝ Հասմիկ Կարապետյան

Տեղեկանք ԱՊՀ մասնակից երկրների տիպային գրադարանային կողքքսի ներդրման և գրադարանային գործում օրենսդրական իրավիճակի մասին, Իգունովա Նատալյա, ռուս. թարգմ.՝ Անահիտ Ավագյան

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Թբիլիսյան սեմինարի խորհուրդը, Ռաֆիկ Ղազարյան

Միջազգային գրադարանային գիտաժողով Ղրիմում, Ներսես Չայրապետյան
Գրադարանային օր գիտատեխնիկական գրադարանում, Սուսաննա
Գրիգորյան
Գրադարանային վեհաժողով Երևանում
Չայ-վրացական սեմինար

ՄԵՐ ՀՅՈՒՐԱՍՐԱՀՐ

Նինել Ոսկանյանի հետ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

Գուրգեն Աղախանյան 80, Ռաֆիկ Ղազարյան
Բալարեկ Մելյան 75

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ

Գրադարանային-մատենագիտական տերմինների բառարան
Հովհաննես Թումանյան. մատենագիտություն, Բախտիար Հովակիմյան
Գիրք Ինտերնետի վերաբերյալ, Անահիտ Ավագյան
Գրադարանային Ամերիկյան, Նինել Ոսկանյան

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻՆ

Չայ պարբերական մամուլը գրադարանային գործի մասին
(մատենագիտական ցանկ-2001), Արմինե Հակոբյան
Հիշարժան տարեթվեր -2002, կազմ. Գայանե Կարապետյան, Նաիրա
Մելքոնյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՏԱՐԵԳԻՐՔ

ARMENIAN LIBRARY ASSOCIATION
ARMENIAN LIBRARY
ANNUAL

Compiled by:
Nerses Hayrapetyan
Rafik Ghazaryan
Editor:
Davit Sargsyan

Խմբագիր՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Կազմնանը մասնակցել են՝
ՖԱԹՄԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՆԱՅԻՏ ԱՎԱԳՅԱՆ
ՆԱԻՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Համակարգչային շարվածքը՝
ՆԱԻՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ
ՓԵՓՐՈՆԵ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Հայկական գրադարան» տարեգրքում ընդունվում են հոդվածներ և հաղորդումներ (5 մեքենագիր էջից ոչ ավելի): Նյութերը ընդունվում են միայն մեքենագիր կամ համակարգչային շարվածքով: Ներկայացված նյութերը չեն գրախոսվում և ետ չեն վերադարձվում:

Նյութերն ուղարկել Երևան 9, Տերյան 72 հասցեով կամ էլեկտրոնային փոստով՝ gradaran@hotmail.com

Խմբագրություն